



ევროკავშირი
საქართველოსთვის



ĠENN

**შარტი ირაქონესების კრა
ხმსკად მუბოტი სირაზმამ
სამგხს-ჯაქასხეზილმ
ა ღქმნი ღარზლილმ
აზქა სოგხალასან
ზაზაქოქოქონსნერი
ხამასთექსატი ქერლოზოქონს**

07/2022



Հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող
«Քաղաքացիական հասարակության հզորացում հանուն ներառական և կանաչ
հետկովիդային վերականգնման» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է CENN
կազմակերպությունը, և կարող է չհամընկնել Եվրոպական միության տեսակետների հետ:

Հետազոտության հեղինակ՝ Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտ
(ISSA)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Մեթոդաբանություն	4
Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում (HRBA)	4
Որակական հետազոտություն	5
Գլուխ 1. Միջազգային, ազգային և տեղական օրենսդրության և գործող պրակտիկայի վրա հիմնված սոցիալական ծառայությունների նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վերլուծություն	7
1.1 Սոցիալական ծառայությունների կարիք ունեցող, իրավունքներ կրող և պատասխանություն կրող խմբերի բացահայտում	7
1.2. Վրաստանի պարտավորությունները իրավունքներ կրող խմբերի նկատմամբ՝ միջազգային համատեքստում	25
1.3. Վրաստանի ազգային օրենսդրական շրջանակ իրավունքներ կրող խմբերի նկատմամբ	27
1.4. Վրաստանում կենտրոնական և տեղական մակարդակում գործող սոցիալական ծառայություններ՝ իրավունքներ կրող խմբերի համար	29
1.5. Գործող օրենսդրության և գործող պրակտիկայի վերլուծություն՝ հաշվի առնելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման հինգ հիմնական աշխատանքային սկզբունքները	53
Գլուխ 2. Թիրախային մունիցիպալիտետներում առկա կոմունալ ենթակառուցվածքների գնահատում	68
Գլուխ 3. Կլիմայի փոփոխություն և դրանից բխող առողջական խնդիրներ	69
Գլուխ 4. Հիմնական բացահայտումներ և ռեկոմենդացիաներ	72
Հավելված #1 Ֆոկուս խմբերի մասնակից կազմակերպությունների ցանկ	76
Հավելված #2 Որակական հետազոտության շրջանակներում կիրառված գործիքներ	77

Ներածություն

Համատեքստի վերլուծության փաստաթուղթը՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ, գնահատել է Սամցխե-Ջավախեթիում (Ախալցխիսի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներ) և Զվեմո Քարթլիում (Բուխսի, Գարդաբանի, Դմանիսի, Թեթրիծղարոյի, Մառնեուլի և Ծալկայի մունիցիպալիտետներ) սոցիալական ծառայությունների պլանավորման, իրականացման և հաշվետվության իրավական և գոյություն ունեցող պրակտիկան:

Վերլուծության փաստաթղթի հիմքում ընկած է մարդու իրավունքների իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, որը կիսում է Վրաստանի կառավարությունը՝ որպես միջազգային պարտավորությունների մաս, և որի իրականացման համար պատասխանատու են ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական իշխանությունները: Փաստաթուղթը վերլուծում է տեղական մուլիցիպալիտետներում սոցիալական ծառայությունների ոլորտում կենտրոնական կառավարության պատվիրակված ծրագրերը (տեղական և կենտրոնական իշխանությունները ներկայացված են որպես պատասխանատվություն կրող խումբ՝ ըստ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման) և այդ ծրագրերի առնչությամբ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, **հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի**, Վրաստանի հանրային պաշտպանի վերաբերմունքը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայացված են որպես իրավունքներ կրող խումբ: Համատեքստի վերլուծությունը նաև արտացոլում է ֆոկլուս խմբի և երեք խորացված հարցազրույցների արդյունքները իրավունքներ կրող և հաշվետվողական խմբերի հետ: Բացի այդ, փաստաթուղթն արտացոլում է թիրախային համայնքների բնակչության հետ իրականացված քանակական հետազոտության արդյունքները:

Համատեքստի վերլուծությունը հիմնական բացահայտումների տեսքով ամփոփում է տեղական մակարդակում իրավունքներ կրող խմբերի՝ իրենց իրավունքների իրացման հետ կապված խնդիրները և համապատասխան առաջարկություններ է կազմում պատասխանատու խմբերին՝ բարելավելու այդ իրավունքների իրականացման մեխանիզմները:

Մեթոդաբանություն

Համատեքստի վերլուծության նպատակն էր վերլուծել երկրի ազգային և տեղական մակարդակներում (Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում) սոցիալական ծառայությունների մատուցման իրավական և գոյություն ունեցող պրակտիկան՝ ըստ Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման (Human Rights Based Approach – HRBA) 5 հիմնական սկզբունքների: Համատեքստի վերլուծության շրջանակներում վերանայվել են մարդու իրավունքների վրա հիմնված հիմնական սկզբունքներին առնչվող միջազգային, ազգային և տեղական իրավական փաստաթղթերը: Նաև առկա պրակտիկային ավելի լավ ծանոթանալու նպատակով թիրախային մոնիթինգալիտետներում անցկացվել է ֆոկլոր խումբ, որի արդյունքում պատրաստվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում (HRBA)

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը (այսուհետ՝ HRBA) մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիման վրա մշակված հայեցակարգային շրջանակ է, որն օգտագործվում է ինչպես փաստաբանության, այնպես էլ դատավարությունների և նպատակային ծրագրերի մշակման ժամանակ¹: HRBA մոտեցմամբ հնարավոր է բացահայտել պարտավորություններ, անհավասարություն, խոցելիություն, խտրական մոտեցումներ ինչպես իրավական դաշտում, այնպես էլ առկա պրակտիկայում: HRBA-ի հիմնական աշխատանքային սկզբունքները հիմնված են մարդու իրավունքների այնպիսի չափանիշների և սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը² (1948 թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան³ (1950 թ.) և Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիան⁴ (2000 թ.):

HRBA-ն քաղաքականություն ձևակերպելիս սահմանում է երկու կողմերի համապատասխանությունը.

- **Իրավունքներ կրող** (rights holders) - Մարդկանց խմբերը (հատկապես խոցելի անձինք) և իրենց շահերը պաշտպանող քաղաքացիական կազմակերպությունները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների մասին, ունենան այդ իրավունքները իրացնելու համապատասխան հնարավորություններ և, հաշվի առնելով մարդու համընդհանուր ճանաչված իրավունքները, պաշտպանված լինեն բռնության և խտրականության բոլոր ձևերից:
- **Պատասխանատվություն կրող** (duty bearers) - Պետական (կենտրոնական և տեղական) հաստատություններ, որոնք պարտավոր են հարգել, պաշտպանել և ապահովել մարդու համընդհանուր ճանաչված իրավունքները:

¹ European Commission, Applying the Human Rights Based Approach to international partnerships, Brussels, 30.6.2021 – https://international-partnerships.ec.europa.eu/system/files/2021-07/swd-2021-human-right-based-approach_en.pdf

² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1948 - <https://www.supremecourt.ge/files/upload-file/pdf/aqtebi3.pdf>

³ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա, Եվրոպայի խորհուրդ, 1950 - <https://matsne.gov.ge/ka/document/view/1208370?publication=0>

⁴ Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա, Եվրոպայի խորհուրդ, 2000 - https://www.echr.coe.int/documents/handbook_non_discr_iaw_kat.pdf

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը հիմնված է հինգ հիմնական աշխատանքային սկզբունքների վրա, որոնք հայտնի են PANEL անունով (Participation, Accountability, Non-discrimination and Equality, Empowerment, Legality):

- **Մասնակցություն (Participation)** - Մարդիկ իրավունք ունեն ներգրավվելու որոշումներում, որոնք ուղղակիորեն ազդում են իրենց իրավունքների և բարեկեցության վրա և (կամ) իրավունք ունեն ներգրավվելու այլ մարդկանց՝ օգնելու նրանց որոշումներ կայացնել: Մասնակցությունը պետք է լինի ակտիվ, անկախ, տեղեկացված և հասանելի, ներառյալ տեղեկության հասանելիությունը թիրախային խմբերին հասկանալի ձևով և լեզվով:
- **Հաշվետվողականություն (Accountability)** - Այն ենթադրում է մարդու իրավունքների չափանիշների արդյունավետ մոնիթորինգ, ինչպես նաև մարդու իրավունքների խախտումների փաստերը կանխելու արդյունավետ մեխանիզմներ:
- **Խտրականության արգելում և հավասարություն (Non-discrimination and Equality)** - Տարիքի, սեռային ինքնության, սեռական կողմնորոշման, ազգային պատկանելության, առողջական վիճակի, տնտեսական վիճակի կամ այլ հիմքերի վրա հիմնված խտրականության բոլոր ձևերի արգելում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի անձանց բացահայտմանը, որոնք բախվում են լրացուցիչ խոչընդոտների իրենց իրավունքների իրականացման համար:
- **Հզորացում (Empowerment)** - Մարդիկ և նրանց իրավունքները պաշտպանող խմբերը պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների մասին և աջակցություն ստանան այն քաղաքականությունների և պրակտիկայի ձևավորման գործում, որոնք ուղղակիորեն ազդում են իրենց իրավունքների իրականացման վրա:
- **Օրենքի հետ համապատասխանություն (Legality)** - Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքները պետք է ներդաշնակորեն համակցվեն մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային օրենքների հետ:

Որակական հետազոտություն

Ֆոկուս խմբեր

Որպես համատեքստի վերլուծության մաս, անցկացվել է մեկ ֆոկուս խումբ իրավապաշտպան խմբերի ներկայացուցիչների հետ, որոնք միավորված են տեղական հասարակական կազմակերպություններում:

Ֆոկուս խումբն անցկացվել է առցանց հարթակի (Zoom) միջոցով, որին մասնակցել են հինգ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ձայնագրվել են քննարկման աուդիո/վիդեո նյութեր: Մինչ հանդիպման մեկնարկը մասնակիցներին ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները:

Խորացված հարցազրույցներ

Համատեքստի վերլուծության շրջանակներում իրականացվել է 2 խորացված հարցազրույց պատասխանատվություն կրող կողմերի հետ և 1 խորացված հարցազրույց իրավունքներ կրող խմբի շահերը ներկայացնող քաղաքացիական կազմակերպության հետ:

Խորացված հարցազրույցները ձայնագրվել են աուդիո/վիդեո ձևաչափով: Մինչ հանդիպման սկիզբը հարցվողները տեղեկացվել են հետազոտության նպատակի և խնդիրների մասին:

Որակական հետազոտության մեջ օգտագործված գործիքները և մասնակից կազմակերպությունների ցանկը ներկայացված են հավելվածում:

Գլուխ 1. Միջազգային, ազգային և տեղական օրենսդրության և գործող արակտիկայի վրա հիմնված սոցիալական ծառայությունների նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վերլուծություն

1.1. Սոցիալական ծառայությունների կարիք ունեցող, իրավունքներ կրող և պատասխանություն կրող խմբերի բացահայտում

Ներածություն

Սոցիալական աջակցությունը տարբեր հեղինակների կողմից սահմանվում է տարբեր ձևերով, սակայն նրանց բոլորի ելակետը հետևյալ հարցի պատասխանն է. ո՞րն է հասարակության կամ կառավարության դերը անհատի սոցիալ-տնտեսական կարգավիճակի, առողջության պաշտպանման և պահպանման գործում:

Սոցիալական աջակցությունը այլ մարդկանց, ինչպես նաև հաստատությունների կողմից սթրեսը հաղթահարելու համար մարդուն տրամադրվող աջակցության տարբեր տեսակներն է՝ լինի դա նյութական, սոցիալ-հուզական կամ տեղեկատվական:

Սոցիալական աջակցությունն այն օգնությունն է, որն ուղղված է սթրեսային վիճակում գտնվող մարդուն և հայտնում է նրան, որ նա մենակ չէ, որ իր մասին մտածում են, սիրում են, խնամում են, և որ մեկուսանալու և փակվելու փոխարեն, ներգրավված է իր շրջապատի հետ հարաբերությունների և փոխադարձ պարտավորությունների ցանցում:⁵

Սոցիալական աջակցության աղբյուր կարող է լինել ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Ինչպես նաև մարդիկ, ում հետ մենք կապ ունենք՝ ընտանիքի անդամներ, ընկերներ, գործընկերներ և այլն:

Սոցիալական աջակցությունը ծառայություն է, որն ուղղված է խոցելի անձի և (կամ) մարդկանց խմբի սոցիալական գործունեության բարձրացմանը: Մասնավորապես՝ նրանց ներուժի իրացման և սոցիալական ինտեգրման համար բարենպաստ պայմանների ստեղծում: Սոցիալական ծառայությունները կենտրոնացած են իրավունքների և ներուժի իրացման համար անհրաժեշտ անհատական և սոցիալական հնարավորությունների ստեղծման վրա: Հաշմանդամությունը, ծերությունը, միայնակ ծնող լինելը, առողջության վատթարացումը, գործազրկությունը, տեղահանված լինելը և այլն՝ այն գործոններն են, որոնք մեծացնում են խոցելիության վտանգը:

Սոցիալական ծառայությունն ունի երկու հիմնական ուղղություն՝

- Հիմնական կարիքների բավարարում,
- Ներուժի իրացման և զարգացման աջակցություն:

Հիմնական կարիքների բավարարմանը միտված ծառայություններն են՝ խնամք, սննդի սուբսիդավորում, սոցիալական աջակցության միանվագ ծառայություններ, հիգիենայի և սանիտարական պայմանների ապահովում և այլն:

⁵ Գեիրիգ, 2009 թ. Զոգեբանություն և կյանք: ԹՊՀ, Թբիլիսի

Հնարավորությունների զարգացմանն ու ներուժի իրացմանն ուղղված ծառայություններն են՝ զբաղվածության խթանումը, կրթությունը և մասնագիտական վերապատրաստումը, սոցիալական բնակարանների ապահովումը, աշխատաշուկայում ինտեգրումը և այլն:

Վերոհիշյալ հիմնական կարիքների և կարողությունների զարգացման անհրաժեշտության մասին են վկայում հիմնարար հետազոտության արդյունքները, որոնք ընդգծում են հարցվողների սոցիալ-տնտեսական մարտահրավերները: Թիրախային մոնիցինգայլիտետների բնակիչների հետ անցկացված ֆոկլուս խմբերում հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրներն են՝ գործազրկությունը, աղքատությունը, առաջնային սպառման ապրանքների (սննդամթերք, դեղեր) և կոմունալ ծառայությունների գների բարձրացումը: Հետազոտությունը պարզել է, որ բնակչության հիմնական խնդիրներից մեկը գործազրկությունն է, որը հատկապես սուր ձևով է դրսևորվում երիտասարդների շրջանում: Բացի այդ, էթնիկ փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչների գնահատմամբ, վրացիների համեմատ, նրանք աշխատանքի տեղավորման ավելի քիչ հնարավորություններ ունեն՝ սոցիալական ինտեգրման ցածր մակարդակի պատճառով: Հաշվի առնելով ներկա իրողությունը՝ կարևոր է, որ մոնիցինգայլիտետների կողմից զբաղվածության խթանման ծրագրերի մշակումը: Հարցվածների կարծիքով՝ պետք է կապ հաստատել պոտենցիալ գործատուների հետ, կազմակերպել զբաղվածության ֆորումներ, որոնք ուղղված կլինեն իրական արդյունքների հասնելուն և չեն ունենա միայն ֆորմալ բնույթ:

Ֆոկլուս խմբերի շրջանակներում առանձնացվել են եկամտի հետևյալ հիմնական աղբյուրները՝ պետական և մասնավոր հատվածում աշխատանքից ստացված վարձատրություն և սոցիալական օգություն: Քննարկումներին մասնակցող սոցիալապես անապահով մարդիկ նշեցին, որ, հաշվի առնելով առկա տնտեսական իրավիճակը, ոչ ֆորմալ կերպով կատարում են մեկանգամյա աշխատանքներ: Նման որոշումը պայմանավորված է այն ռիսկերով, որ պաշտոնական աշխատանքի անցնելու դեպքում նրանք կարող են կորցնել սոցիալապես անապահովի կարգավիճակը և մնալ առանց փոքր, բայց կայուն եկամուտի:

Քանակական հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ թիրախային տարածաշրջանների բնակչությունը **տնտեսապես խոցելի է** թե՛ սուբյեկտիվ ընկալման, թե՛ օբյեկտիվ ցուցանիշների (ընտանեկան եկամուտներ) համաձայն: Մասնավորապես, Սամցխե-Ջավախեթիում հարցվածների մեծամասնությունը (մինչև 70%), իսկ Քվեմո Քարթլիում յուրաքանչյուր երկրորդ հարցված, նշում են, որ իրենց ընտանիքի եկամուտներն օգտագործվում են միայն սնունդ և հագուստ գնելու համար (տե՛ս աղյուսակ #1):

Աղյուսակ #1

Հիմա ձեզ կներկայացնեմ որոշ դրույթներ: Խնդրում եմ ասել, ո՞ր արտահայտությունն է լավագույնս բնութագրում ձեր ընտանիքին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Փողը բավական է ուտելիքի համար:	37.7%	19.5%
Մենք բավական գումար ունենք սննդի համար, բայց պետք է գումար խնայենք կամ պարտքով վերցնենք հագուստ և կոշիկ գնելու համար:	31.2%	28.4%
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց լավ հագուստ, բջջային հեռախոս, փոշեկուլ և այլ կենցաղային տեխնիկա գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:	19.3%	34.9%
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց մեքենա կամ	10.2%	12.3%

Հիմա ձեզ կներկայացնեմ որոշ դրույթներ: Խնդրում եմ ասել, ո՞ր արտահայտությունն է լավագույնս բնութագրում ձեր ընտանիքին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Բնակարան գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:		
Մենք ցանկացած պահի կարող ենք գնել այն, ինչ ցանկանում ենք:	0.8%	1.4%
Հրաժարվում եմ պատասխանել / Դժվարանում եմ պատասխանել	0.8%	3.5%

Ինչ վերաբերում է կոնկրետ եկամուտներին, ապա հաշվի առնելով, որ (ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների) Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի տարածաշրջաններում ընտանիքների անդամների միջին թիվը կազմում է մոտ 4 մարդ, իսկ այդպիսի ընտանիքների կենսապահովման նվազագույնը կազմում է ամսական մոտ 340 լարի ամսական, ելնելով ընտանիքի միջին եկամուտներից (MEAN Սամցխե-Ջավախեթիում կազմում է 1070 լարի, իսկ Քվեմո Քարթլիում՝ 893 լարի), կարելի է եզրակացնել, որ թիրախային տարածաշրջանների բնակչության մեծամասնության եկամուտները գերազանցում են կենսապահովման նվազագույնը, թեև դրանք չեն հասնում տնտեսական իրավիճակի միջին մակարդակին:

Քանակական հետազոտությունը ցույց է տվել նաև, որ Սամցխե-Ջավախեթի բնակչության զբաղվածների տեսակարար կշիռը (45%) զգալիորեն գերազանցում է Քվեմո Քարթլի տարածաշրջանի զբաղվածների (35%) (ներառյալ ինքնազբաղվածների) տեսակարար կշիռն: Հետևաբար, **գործազուրկների տեսակարար կշիռն** ավելի բարձր է Քվեմո Քարթլիում (21%), քան Սամցխե-Ջավախեթիում (16%) (տես աղյուսակ #2): Նշենք, որ գործազրկության այս թվերը մոտ են Ազգային վիճակագրական ծառայության 2021 թվականի տվյալներին (Քվեմո Քարթլի՝ 25%, Սամցխե-Ջավախեթի՝ 15%):

Աղյուսակ #2

Հարցվողի աշխատանքային կարգավիճակը (հիմնական գործունեությունը) (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Վարձու աշխատող պետական հատվածում	18.5%	15.1%
Վարձու աշխատող մասնավոր հատվածում	12.7%	5.4%
Ինքնազբաղված (աշխատանք տրամադրող)	3.4%	1.9%
Ինքնազբաղված (ձեռնարկատեր, ֆերմեր, մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձ)	10.8%	12.2%
Թոշակառու	18.4%	17.5%
Դեկրետային արձակուրդում գտնվող	0.1%	-
Տնային տնտեսուհի	14.6%	22.7%
Ուսանող	3.9%	1.6%
Գործազուրկ	15.6%	18.8%
Երբեք չի աշխատել	0.6%	1.9%
Այլ	1.4%	-
Հրաժարվում է պատասխանել	-	3%

Վրաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Վրաստանը սոցիալական պետություն է, որը հոգ է տանում հասարակության մեջ սոցիալական արդարության, հավասարության և համերաշխության սկզբունքների խթանման մասին:⁶

HRBA-ն, մի կողմից, ճանաչում է մարդու համընդհանուր իրավունքները, իսկ մյուս կողմից՝ դրանք կապում երկրի կայուն զարգացման տեսլականների և առաջնահերթությունների հետ: Ըստ HRBA-ի՝ սոցիալական ծառայությունների համատեքստում իրավունքներ կրող և պատասխանատվություններ ունեցող խմբերի բացահայտման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն համապատասխան խմբերը սահմանող գործող օրենսդրությանը, այլև գործի վարման առկա պրակտիկային:

Իրավունքներ կրողներ (right holders)

Հաշվի առնելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքները և Վրաստանի օրենսդրական դաշտը՝ բացահայտվել են սոցիալական օգնություն ստանալու և խոցելիության հետ կապված **իրավունքներ կրող խմբերը** և այդ խմբերի շահերին աջակցող **քաղաքացիական կազմակերպությունները**:

Իրավունքներ կրող խմբեր. (Ընդհանուր առմամբ այս խմբում ընդգրկված են մարդիկ, քաղաքացիական սեկտորը, սակայն, ելնելով հետազոտության հետաքրքրություններից, շեշտը դրվում է խոցելի վիճակում գտնվող մարդկանց վրա):

Վրաստանի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետությունից սոցիալական օգնություն ստացողներ են համարվում օրինական հիմունքներով Վրաստանում մշտապես բնակվող՝ **հատուկ խնամքի կարիք ունեցող անձինք, աղքատ ընտանիքները և անօթևան անձինք**:

1. Օրենքը սահմանում է հետևյալ խոցելի խմբերը որպես հատուկ խնամքի կարիք ունեցող անձինք.

1.1. Ծնողազուրկ և ծնողական խնամքից զրկված երեխաներ.

1.2. Հաշմանդամություն ունեցող անձ - անձ, ով ստացել է այդ կարգավիճակը Վրաստանի «Բժշկասոցիալական փորձաքննության մասին» օրենքի համաձայն,

1.3. Սահմանափակ կարողություններով չափահաս, զրկված ընտանեկան խնամքից,

1.4. Խնամակալ կորցրած երեխա - մինչև 18 տարեկան երեխա, որի մեկ կամ երկու ծնողը մահացած են,

1.5. Անօթևան երեխաներ - Փողոցում ապրող և (կամ) փողոցում աշխատող անչափահաս, ով որպես այդպիսին ճանաչվել է համապատասխան լիազորություններ ունեցող սոցիալական աշխատողի կողմից՝ համաձայն երեխաների պաշտպանության ուղղորդման ընթացակարգերի:

2. Աղքատ ընտանիք (սոցիալապես անապահով ընտանիք) - Առանձին բնակելի տարածքում մշտապես բնակվող անձ կամ անձանց խումբ, որը զբաղվում է համատեղ

⁶ Վրաստանի սահմանադրություն, 5-րդ հոդված <https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36>

կենցաղային գործունեությամբ և որի սոցիալ-տնտեսական կարգավիճակի ցուցանիշը ցածր է Վրաստանի կառավարության սահմանած մակարդակից:

3. Անօթևան անձ - Մշտական, հաստատուն բնակության վայր չունեցող անձ, որը մոնիցինգայլիտետում հաշվառված է որպես անօթևան:

Նաև Վրաստանի Սահմանադրության 11-րդ հոդվածի և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին օրենքի համաձայն՝ բացահայտված խոցելի խմբերը նույնպես պատկանում են իրավունքներ կրող խմբերին:

4. Երեխաներ - Մինչև 18 տարեկան անչափահասները, որոնք համարվում են հատկապես խոցելի խումբ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում. այս խումբը պետության հատուկ հոգածության օբյեկտ է: Երեխայի բարեկեցության մասին հոգալը կարգավորվում է Վրաստանի Սահմանադրությամբ, Երեխաների իրավունքների կոնվենցիայով և պետության կողմից ճանաչված միջազգային իրավական ակտերով:

5. Կանայք - Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կանայք նույնպես ներկայացնում են խոցելի խումբ, որի նկատմամբ խտրականությունն ու բռնությունը պարբերական բնույթ են կրում:

6. Ազգային փոքրամասնություններ - Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հատուկ ուշադրություն է դարձնում ազգային փոքրամասնություններին: 2006 թվականից ուժի մեջ է մտել «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան», որը Վրաստանի կողմից ստանձնած միջազգային համաձայնագիր է: Վրաստանում ազգային փոքրամասնությունները ներկայացված են կրոնական և էթնիկ փոքրամասնություններով:

6.1. Կրոնական փոքրամասնություններ - Վրաստանի բնակչության այն հատվածը, որը չի նույնանում վրաց ուղղափառ եկեղեցու հետ, օրինակ՝ իսլամի (10,7%) և Հայ առաքելական եկեղեցու (2,9%) ներկայացուցիչներ⁷:

6.2. Էթնիկ փոքրամասնություններ - Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների ամենամեծ համայնքներն են ադրբեջանցիները (6,3%) և հայերը (4,5%): Նրանք հիմնականում բնակվում են Զվեմո Զարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում, որտեղ ներկայացնում են բնակչության մեծամասնությունը: Օրինակ, հայկական համայնքը կազմում է Սամցխե-Ջավախեթի բնակչության 50,5%-ը, իսկ Մառնեուլիի մոնիցինգայլիտետի (Զվեմո Զարթլի) բնակչության 83,7%-ը ադրբեջանական համայնքն է: Ընդհանուր առմամբ, ադրբեջանցիների բնակչությունը կազմում է Զվեմո Զարթլիի շրջանի 41,7%-ը⁸:

Ինչպես նաև, հիմնվելով Սամցխե-Ջավախեթի և Զվեմո Զարթլիի սոցիալական ծառայությունների հետազոտության խորացված հարցազրույցներին, տեղական ինքնակառավարման մարմինները և քաղաքացիական հատվածը, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները և առկա պրակտիկան, լրացուցիչ բացահայտել են իրավունքներ կրող հետևյալ խմբերը.

⁷ Վրաստանի ազգային վիճակագրության ծառայություն, «Վրաստանում բնակչության ընդհանուր մարդահամար 2014 թ.»

⁸ Վրաստանի ազգային վիճակագրության ծառայություն, «Վրաստանում բնակչության ընդհանուր մարդահամար 2014 թ.»

7. Էկոմիգրանտներ - Տարերային աղետներից տուժած անձինք, ովքեր ստիպված են եղել լքել իրենց մշտական բնակության վայրը⁹:

8. Տարեցներ - Թոշակառուներ, ովքեր 65 տարեկան են (տղամարդկանց դեպքում) կամ 60 տարեկան (կանանց դեպքում) - Վրաստանի օրենք «Պետական կենսաթոշակի մասին», 2005 թ.¹⁰:

9. Տեղահանվածներ – Հարկադիր տեղահանված հատուկ կարիքներ ունեցող անձ¹¹:

10. Բազմազավակ ընտանիքներ - Անձ, որն ունի մինչև 18 տարեկան չորս և ավելի երեխա և/կամ որդեգրված երեխա և ստացել է բազմազավակ ծնողի կարգավիճակ¹²:

11. Միայնակ ծնողներ - Միայնակ մոր կամ միայնակ հոր կարգավիճակ ունեցող անձ¹³, որն ունի արտաամուսնական 18 տարին չլրացած երեխա, եթե երեխայի ծննդյան վկայականում տեղեկություններ չկան երեխայի հոր կամ մոր մասին: Նաև այն անձը, ով որդեգրել է մինչև 18 տարեկան երեխա և որդեգրման պահին գրանցված ամուսնության մեջ չի եղել¹⁴:

12. Վետերաններ - Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններ և նրանց հավասար անձինք, այլ պետության տարածքում մարտական գործողությունների վետերաններ և նրանց հավասար անձինք, Վրաստանի տարածքային ամբողջականության, ազատության և անկախության համար մարտական գործողությունների վետերաններ և նրանց հավասար անձինք, պաշտպանության ուժերի վետերաններ¹⁵:

13. Առողջապահական ծառայության կարիք ունեցող անձ - Խրոնիկ և բնածին հիվանդություններ, ուռուցքաբանական խնդիրներ, հաշմոնություն ունեցող անձինք, տարեցներ և այլն:

14. Ընտանեկան բռնության զոհի կարգավիճակ ունեցող անձ - Անձ, ում իրավունքները և ազատությունները սահմանափակվել են ընտանիքի մեկ այլ անդամի կողմից՝ անտեսման և/կամ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական բռնության կամ հարկադրանքի միջոցով¹⁶:

⁹ Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների, վերաբնակեցման և փախստականների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 13-ի N779 հրաման - «Բնական իրադարձություններից տուժած ընտանիքների (Էկոմիգրանտների) վերաբնակեցման կարգի մասին, որոնք ենթակա են տեղահանման, վերաբնակեցման չափանիշների, միասնական էլեկտրոնային տվյալների բազայի պատրաստման և տարաբնակեցման հարցերը կարգավորող հանձնաժողովի կանոնները»

¹⁰ «Պետական կենսաթոշակի մասին» Վրաստանի օրենք», 2005

¹¹ «Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանվածների մասին» օրենք, 2014

¹² Վրաստանի կառավարության N517 որոշում«Բազմազավակ ծնողների սոցիալական ապահովության կանոններն ու պայմանները սահմանելու մասին», 2018

¹³ Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1191-րդ հոդված, 1997

¹⁴ Վրաստանի նախարարի 2015 թվականի հունիսի 16-ի N 79/N01-18/6 հրաման՝ «Միայնակ ծնողի կարգավիճակը որոշելու և համապատասխան անձանց վերաբերյալ տվյալների պատրաստման կարգը հաստատելու մասին»

¹⁵ «Պատերազմի և պաշտպանության վետերանների մասին» Վրաստանի օրենք, 1995 թ.

¹⁶ Կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության կանխարգելման, բռնության զոհերի պաշտպանության և աջակցության մասին Վրաստանի օրենք, 2017 թ.

15. Ուսանող - Անձ, ով ընդունվում և սովորում է բարձրագույն ուսումնական հաստատությունում բակալավրի, մագիստրատուրայի կամ դիպլոմավորված մասնագետի, ինչպես նաև դոկտորանտուրայի մակարդակում¹⁷:

Ի լրումն իրավունքներ կրող խմբերի, բացահայտվեցին, թիրախային տարածաշրջաններում աշխատող, այդ խմբերի շահերը պաշտպանող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և մասնակցեցին ֆոկլուս խմբին և/կամ խորը հարցազրույցի գործընթացին:

Ըստ www.csogeorgia.org պորտալի՝ Քվեմո Զարթիում պաշտոնապես գրանցված են տարբեր ուղղություններով գործող քաղաքացիական հասարակության 85 կազմակերպություններ, Սամցխե-Ջավախեթիում՝ 84: Պորտալի տվյալներով՝ բացահայտվել են այն տարածքները, որոնք ուղղված են խոցելի վիճակում գտնվող մարդկանց աջակցելուն: Ստորև տրված է աղյուսակ, որը նկարագրում է կազմակերպությունների անվանումը, դրանց թիվը, գործունեության ոլորտը, գործունեության տարածքը (մունիցիպալիտետ): Պորտալի տվյալներով՝ մեկ կազմակերպությունը կարող է գործել մեկից ավելի ուղղություններով: Աղյուսակում նշված աշխատող կազմակերպությունների թիվը՝ ըստ գործունեության ոլորտների, եզակի կազմակերպությունների թիվը չէ, դրանցից մի քանիսը կարող են կրկնվել մեկ այլ սյունակում (տես աղյուսակ #3):

Գործող կազմակերպությունները ոչ մի մունիցիպալիտետում ներկայացված չեն: Սամցխե-Ջավախեթիի 2 թիրախային մունիցիպալիտետների դեպքում Ախալցխեում շատ ավելի շատ կազմակերպություններ են գործում (33)՝ համեմատած Նինոծմինդայի (4): Յետաքրքիր է նաև, որ Նինոծմինդայում չկան կազմակերպություններ, որոնք աշխատում են փախստականների և հարկադիր վերաբնակների, ինքնակառավարման և համայնքների զարգացման, սոցիալական և առողջապահական խնդիրների վրա (տե՛ս աղյուսակ #3):

Ըստ աղյուսակի՝ Քվեմո Զարթիի բոլոր վեց թիրախային մունիցիպալիտետներում կան կազմակերպություններ, որոնք աշխատում են երիտասարդության և երեխաների խնդիրների, ինչպես նաև ինքնակառավարման և համայնքների զարգացման ուղղությամբ: Ըստ պորտալի՝ 3 թիրախային մունիցիպալիտետում (Ճալկա, Գարդաբանի և Բոլնիս) սոցիալական խնդիրների գծով բացահայտվել է ընդամենը 4 կազմակերպություն, մինչդեռ առողջապահության ոլորտում աշխատող կազմակերպությունները ներկայացված չեն որևէ մունիցիպալիտետում: Սամցխե-Ջավախեթիի 2 թիրախային մունիցիպալիտետների դեպքում Ախալցխեում ավելի շատ կազմակերպություններ են գործում (33), քան Նինոծմինդայում (4): Յետաքրքիր է նաև, որ Նինոծմինդայում չկան կազմակերպություններ, որոնք աշխատում են փախստականների և հարկադիր վերաբնակների, ինքնակառավարման և համայնքների զարգացման, սոցիալական և առողջապահական խնդիրների վրա (տե՛ս աղյուսակ #3):

Աղյուսակ #3

Տարածաշրջան	Մունիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
Քվեմո Զարթի	Գարդաբանի	Մարդու իրավունքներ	2	1. Վրաստանի երիտասարդ ադրբեջանցիների միություն 2. Կասումլոյի երիտասարդական կենտրոն
	Մառնեուլի			

¹⁷ Բարձրագույն կրթության մասին Վրաստանի օրենք, 2004 թ.

Տարածաշրջան	Մուկիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
Քվեմո Բարթի	Թեթրիծղարո	Երիտասարդների և երեխաների ուղղությամբ	36	1. Թեթրիծղարոյի երիտասարդական կենտրոն 2. Վրաստանի քաղաքացիական հասարակության ասոցիացիա
	Ծալկա			1. Իրավական հասարակությունը հանուն հանդուրժողական նպատակների 2. «Գումբաթի» ուսումնական կենտրոն
	Գարդաբանի			1. Նոր Նախաձեռնություն Քվեմո Բարթիում 2. Վախթանգիսի համերաշխության կենտրոն 3. «Վեկտոր» կազմակերպություն 4. Նազարյոյի համայնքային կենտրոն 5. Վրաստանի Կարմիր խաչի հասարակություն
	Դմանիսի			1. «Լոռե» ասոցիացիա 2. «Փրկենք մշակույթը» - երիտասարդական ակումբ 3. «Դմանիսելի» կազմակերպություն 4. «Առաջին եվրոպացի» կազմակերպություն 5. «Յաջողակ կին - ուժեղ հասարակություն» կազմակերպություն
	Մառնեուլի			1. Ալգեթիի համայնքային կենտրոն 2. Երիտասարդության զարգացման կենտրոն 3. Կրթության և զարգացման կենտրոն 4. «Մտրեդի» դեմոկրատական ընտրություն 5. Ժողովրդավարական ներգրավվածության կենտրոնների ցանց 6. Մառնեուլիի երիտասարդական կենտրոն 7. Մուլաօղլիի համայնքային կենտրոն 8. Վրաստանի ադրբեջանցի կանանց միություն 9. Վրաստանի երիտասարդ ադրբեջանցիների միություն 10. «Տուլերանտի» կազմակերպություն 11. Խուլդարայի համայնքային կենտրոն

Տարածաշրջան	Մուկնիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
	Բոլնիսի			1. Երիտասարդական տեսլական «Կովկաս» 2. Բոլնիսիի լեզվի տուն 3. Բոլնիսիի մեծահասակների կրթության կենտրոն 4. «Մայրեր» կազմակերպություն 5. Վրաստանի Կարմիր խաչի հասարակություն 6. Քվեմո Զարթլիի հանրային տեղեկատվական կենտրոն 7. Քվեմո Զարթլիի կանանց կազմակերպություն «Էրթոբա» 8. Քվեմո Զարթլիի կանանց ասոցիացիա «Կանանց աշխարհ» 9. «Հնարավորություններ առանց սահմանների» կազմակերպություն
Քվեմո Զարթլի	Թերթիժարո	Գեղեր	18	1. Թերթիժարոյի երիտասարդական կենտրոն
	Դմանիսի			1. «Փրկենք մշակույթը» - երիտասարդական ակումբ 2. «Հաջողակ կին - ուժեղ հասարակություն» կազմակերպություն
	Ծալկա			1. Ծալկայի «կանանց սենյակ»
	Մառնեուլի			1. Երիտասարդության զարգացման կենտրոն 2. Կրթության և զարգացման կենտրոն 3. «Մտրեդի» դեմոկրատական ընտրություն 4. Մառնեուլիի երիտասարդական կենտրոն 5. «Մառնեուլի» - դեմոկրատ կանանց ասոցիացիա 6. Վրաստանի ադրբեջանական կանանց միություն 7. Վրաստանի երիտասարդ ադրբեջանցիների միություն 8. Բռնությունից պաշտպանության ազգային ցանց 9. Խուլդարայի համայնքային կենտրոն
	Բոլնիսի			1. Ասոցիացիա «Դիսվելիի կանանց խորհուրդ» 2. Բոլնիսիի լեզվի տուն 3. Շտադստերկելի անվան Վրաստանի կանանց միություն 4. Քվեմո Զարթլիի կանանց ասոցիացիա «Կանանց աշխարհ» 5. Քվեմո Զարթլիի կանանց ասոցիացիա «Էրթոբա»

Տարածաշրջան	Մուկնիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
Քվեմո Բարթլի	Թեթրիծղարո	Փախստականներ և տեղահանվածներ	3	1. Կողայի համայնքային կրթական կենտրոն
	Գարդաբանի			1. «Լելաշխայի շինարարություն» կազմակերպություն
	Մառնեուլի			1. Շաուլյանի համայնքային կրթական կենտրոն
Քվեմո Բարթլի	Թեթրիծղարո	Էկոլոգիա	12	1. Թեթրիծղարոյի երիտասարդական կենտրոն 2. Համայնքային հիմնադրամ «Կողորի 2013» 3. Վրաստանի քաղաքացիական հասարակության ասոցիացիա
	Դմանիսի			1. «Լոռե» ասոցիացիա 2. «Դմանիսելեբի» կազմակերպություն
	Ծալկա			1. Ծալկայի տեղական զարգացման խումբ
	Մառնեուլի			1. «Մտրեդի» դեմոկրատական ընտրություն 2. Մառնեուլիի երիտասարդական կենտրոն
	Բոլնիսի			1. Ասոցիացիա «Դիսվելի», Կանանց խորհուրդ 2. «Քարիմերա» համայնքային կազմակերպություն. 3. Քվեմո Բարթլիի հանրային տեղեկատվական կենտրոն 4. Քվեմո Բարթլիի կանանց կազմակերպություն «Էրթոբա»
Քվեմո Բարթլի	Ծալկա	Ինքնակառավարում և համայնքի զարգացում	33	1. «Նոր Գումբաթի» կազմակերպություն 2. «Բերթա 2013» կազմակերպություն 3. «Գումբաթի» ուսումնական կենտրոն 4. «Սակդրինի» կազմակերպություն 5. Ծալկայի «Կանանց սենյակ»
	Գարդաբանի			1. «Նոր Նախաձեռնություններ Քվեմո Բարթլիում» կազմակերպություն 2. «Հաղթանակ» կազմակերպություն 3. «Գարեջելի» կազմակերպություն 4. «Վեկտոր» կազմակերպություն 5. «Իմեդի Կոնսիսի» կազմակերպություն 6. «Մեգոբրոբա» կազմակերպություն 7. Վրաստանի Կարմիր խաչի հասարակություն

Տարածաշրջան	Մուկնիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
	Դմանիսի			1. «Փրկենք մշակույթը» - երիտասարդական ակումբ 2. «Դմանիսելեբի» կազմակերպություն 3. «Առաջին Եվրոպացի» կազմակերպություն
	Թեթրիծղարո			1. Թեթրիծղարոյի տեղական զարգացման խումբ 2. «Իրագա 2013» կազմակերպություն 3. Վրաստանի քաղաքացիական հասարակության ասոցիացիա
	Մառնեուլի			1. Աղմամաղլոյի համայնքային կենտրոն 2. Կրթության և զարգացման կենտրոն 3. «Մտրեդի» դեմոկրատական միություն 4. Ժողովրդավարական ներգրավվածության կենտրոնների ցանց 5. «Մառնեուլի» - Դեմոկրատ կանանց ընկերություն 6. Մոլաոլի համայնքային կենտրոն 7. Վրաստանի ադրբեջանցի կանանց միություն 8. Քվեմո Զարթլիի զարգացման ինստիտուտ 9. Խուլդարայի համայնքային կենտրոն
	Բոլնիսի			1. Երիտասարդական տեսլական «Կովկաս» 2. Բոլնիսիի լեզվի տուն 3. Վրաստանի Կարմիր խաչի ասոցիացիա 4. Ստադ Ստերկելի անվան Վրաստանի կանանց միություն 5. Քվեմո Զարթլիի կանանց ասոցիացիա «Կանանց աշխարհ» 6. Քվեմո Զարթլիի կանանց կազմակերպություն «Էրթոբա»
Քվեմո Զարթլի	Ծալկա	Սոցիալական հարցեր	4	1. Ծալկայի տեղական զարգացման խումբ
	Գարդաբանի			1. Վրաստանի կարմիր խաչի հասարակություն
	Բոլնիսի			1. Վրաստանի կարմիր խաչի հասարակություն 2. «Հնարավորություններ առանց սահմանների» կազմակերպություն
Քվեմո Զարթլի		Առողջապահություն	0	

Տարածաշրջան	Մուկիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխիսե	Մարդու իրավունքներ	12	1. «Երիտասարդությունը հանուն Ջավախեթիի զարգացման». 2. Ախալցխիսեի երիտասարդական կենտրոն 3. Դեմոկրատ Մեսխերի միություն 4. «Կանաչ Խաչ» միություն 5. Միջազգային թափանցիկություն «Վրաստան» 6. Քաղաքացիական նախաձեռնությունների ասոցիացիա 7. Քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստող կենտրոն 8. Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային ասոցիացիա «Տոլերանտի» 9. «Կանանց հույս» կազմակերպություն 10. Բնությունից պաշտպանության ազգային կենտրոն
	Նինոծմինդա			1. «Խաղաղության խարտիա» կազմակերպություն 2. Սամցխե-Ջավախեթիի սպառողների միություն
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխիսե	Երիտասարդների և երեխաների ուղղությամբ	12	1. «Երիտասարդությունը հանուն Ջավախեթիի զարգացման». 2. Ախալցխիսեի երիտասարդական կենտրոն 3. Ախալցխիսեի մեծահասակների կրթության կենտրոն 4. Դեմոկրատ Մեսխերի միություն 5. Ժողովրդավարական ներգրավման կենտրոնների ցանց 6. «Ապագա» միություն 7. «Կանաչ Տուն» ասոցիացիա 8. Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային ասոցիացիա «Տոլերանտի» 9. Վրաստանի բիզնեսի զարգացման կենտրոն 10. «Առաջընթաց» կազմակերպություն
	Նինոծմինդա			1. Նինոծմինդայի երիտասարդական կենտրոն 2. Կանանց կազմակերպություն՝ «Փարոս» միություն
Սամցխե -	Ախալցխիսե	Գեոդեր	6	1. Քաղաքացիական նախաձեռնությունների ասոցիացիա

Տարածաշրջան	Մուկնիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
Ջավախեթի				2. Սամցխե-Ջավախեթիի կանանց դեմոկրատական հասարակություն 3. Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային բնապահպանական միավորում «Էկոդախա» 4. Բռնությունից պաշտպանության ազգային ցանց 5. «Առաջընթաց» կազմակերպություն
	Նինոծմինդա			1. Կանանց կազմակերպություն՝ «Փարոս» միություն
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխիս	Փախստականներ և տեղահանվածներ	2	1. Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային ասոցիացիա «Տոլերանտի» 2. Միջազգային մարդասիրական միության «Կատարսիս» ասոցիացիա
	Նինոծմինդա			
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխիս	Էկոլոգիա	7	1. «Էլկանա» կենսաբանական տնտեսությունների ասոցիացիա 2. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը խթանող միություն 3. «Աշխարհ» միություն 4. Ախալցխիսի հանրային զարգացման կենտրոն 5. Քաղաքացիական նախաձեռնությունների ասոցիացիա 6. Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային բնապահպանական միություն «Էկոդախա»
	Նինոծմինդա			1. Կանանց կազմակերպություն՝ «Փարոս» միություն
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխիս	Ինքնակառավարում և համայնքի զարգացում	15	1. Ախալցխիսի մեծահասակների կրթության կենտրոն 2. «Բեքգրաունդ» կազմակերպություն 3. Դեմոկրատ Մեսխերի միություն 4. Ժողովրդավարական ներգրավման կենտրոնների ցանց 5. «Իվլիտա 21» կազմակերպություն 6. «Տղեմալանա» միություն 7. «Աշխարհ» միություն 8. Տարածաշրջանային զարգացման ասոցիացիա

Տարածաշրջան	Մուկնիցիպալիտետ	Ոլորտ	Կազմակերպությունների քանակը	Կազմակերպության անվանում
				9. Ախալցխի հանրային զարգացման կենտրոն 10. «Աբաթխնի» համայնքային միություն 11. «Հուլյա 2009» համայնքային միություն 12. «Ծղրութի հուլյա» համայնքային միություն 13. «Արգո» համայնքային կազմակերպություն 14. «Արևի սիրտը» համայնքային կազմակերպություն 15. Քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստող կենտրոն
	Նինոծմինդա			
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխե	Սոցիալական հարցեր	5	1. «Կանաչ Տուն» ասոցիացիա 2. Միջազգային մարդասիրական միության «Կատարսիս» ասոցիացիա 3. «Ծղրութի հուլյա» համայնքային միություն 4. «Միասին՝ մենք կարող ենք» բարեգործական հիմնադրամ 5. «Տալիտա Կումի» կազմակերպություն
	Նինոծմինդա			
Սամցխե - Ջավախեթի	Ախալցխե	Առողջապահություն	5	1. «Կանաչ Տուն» ասոցիացիա 2. Միջազգային մարդասիրական միության «Կատարսիս» ասոցիացիա 3. Սամցխե-Ջավախեթիի Դեմոկրատական Կանանց Միություն 4. «Տալիտա Կումի» կազմակերպություն 5. «Առաջընթաց» կազմակերպություն
	Նինոծմինդա			

Ծրագրի շրջանակներում իրականացված հիմնական հետազոտության քանակական բաղադրիչում հարցվածների մեծամասնությունը (94%) տեղեկություն չունի մուկնիցիպալիտետի քաղաքացիական կազմակերպությունների մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 91%, Քվեմո Բարթի՝ 96%): Նույնը հաստատում են ֆոկլու խմբերի արդյունքները: Քվեմո Բարթիի բնակիչները լսել են կանանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների մասին, քանի որ կանանց վաղ ամուսնությունը նշված տարածաշրջանում առաջատար

խնդիրներից է: Հարցվողները հիմնականում տեղեկություններ ունեն այնպիսի կազմակերպությունների մասին, որոնք նյութապես օգնում են կարիքավոր ընտանիքներին, ազգային փոքրամասնություններին առաջարկում են վրացերենի դասընթացներ, իրավաբանական ծառայություններ և այլն:

Հարցման շրջանակներում պարզվել է, որ տեղեկացված հարցվողները վերջին 1 տարում չեն օգտվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայություններից: Հիմնական պատճառը նման ծառայություններից օգտվելու անհրաժեշտության բացակայությունն էր: Մյուս կողմից, պարզվել է, որ տեղեկացված հարցվողները մեծ մասամբ օգտվում են սոցիալական ծառայություններից, թեև հատկանշական է, որ Քվեմո Քարթլիում հարցված անձինք չունեն նման փորձ (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ #4

Վերջին 1 տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող ո՞ր ծառայություններից եք օգտվել: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Սոցիալական ծառայություններ	25.5%	-
Առողջապահական ծառայություններ	1.7%	-
Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանն ուղղված նախագծեր	3.1%	-
Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանն ուղղված նախագծեր	1.7%	5.4%
Նախագծեր, որոնք ուղղված են տարեցների ներգրավմանը սոցիալ-մշակութային գործունեությանը	-	5.4%
Կանանց հզորացմանն ուղղված նախագծեր	-	10.9%
Չեմ օգտվել ոչ մի ծառայությունից	57.7%	74.4%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	10.3%	3.8%

Հաշվի առնելով, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին տեղեկացված անձինք ընկալում են ՔՀԿ-ների գործունեության և քաղաքացիների պահանջների/կարիքների համապատասխանությունը, նրանք հիմնականում գոհ են նշված կազմակերպությունների աշխատանքից (73%) (Սամցխե-Ջավախեթի՝ 89%, Քվեմո Քարթլի՝ 58%) (տե՛ս աղյուսակ #5):

Աղյուսակ #5

Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք գոհ ձեր մոնիցինգայլիտետի հասարակական կազմակերպությունների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Ծատ դժգոհ	1.4%	6%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	-	6.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	8.8%	57.9%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	51.4%	18.7%
Ծատ գոհ	36.8%	10.7%

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ ձեր մոնիցինգային տեսության հասարակական կազմակերպությունների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Բարթի (N=18)
Հրաժարվում է պատասխանել	1.7%	

Թիրախային մոնիցինգային տեսությունների բնակչության հետ անցկացված ֆոկլոր խմբերի մասնակիցները ընդհանուր առմամբ դրական են գնահատում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը, սակայն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ուշադրություն են հրավիրել նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության բացասական կողմի վրա և նշել, որ որոշ կազմակերպությունների նկատմամբ վստահությունը ցածր է, քանի որ նրանք ադրբեջանական համայնքը, ելնելով իր կրոնական ինքնությունից, ընկալում են որպես «հետամնաց»: Հարցվածներից ոմանք նաև նշել են, որ բնակչության որոշակի հատվածում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները համարվում են իշխանությանը ընդդիմադիր, և այդ պատճառով խուսափում են նրանց հետ համագործակցությունից: Ֆոկլոր խմբերի մասնակիցների կարծիքով՝ հասարակական կազմակերպությունների գործունեությունը պետք է ուղղված լինի առաջին հերթին տեղի բնակչության խնդիրների լուծմանը: Կարևոր է, որ հասարակական կազմակերպությունները ուժեղացնեն իրենց աշխատանքը քաղաքապետարանների և սակրեբուլոնների հետ և նրանց առաջարկեն նոր գաղափարներ և լուծումներ առկա խնդիրները հաղթահարելու համար:

Որպես համատեքստի վերլուծության մաս՝ ֆոկլոր խումբ է անցկացվել ստորև թվարկված կազմակերպությունների հետ:

«Հանդուրժողականության և բազմազանության ինստիտուտ» - աշխատում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների, ինչպես նաև միգրանտների հետ: Կազմակերպությունը զբաղվում է կրթական գործունեությամբ, ուսումնասիրում և վերլուծում է պետական քաղաքականությունը փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ:

«Ժողովրդավարական հետազոտությունների ինստիտուտ» - աշխատում է մարդու իրավունքների պաշտպանության հարցերի ուղղությամբ և զբաղվում է կրթական գործունեությամբ, պատրաստում է քաղաքականության փաստաթղթեր և իրականացնում է մարդու իրավունքների պաշտպանությանը ուղղված փաստաբանություններ, վերահսկում է բոլոր տեսակի ընտրությունները:

«Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» - աշխատում է մարդու իրավունքների պաշտպանության բոլոր հարցերով: Կազմակերպությունը զբաղվում է կրթական գործունեությամբ, ունի Վրաստանում և արտերկրում դատական գործընթացներ վարելու պրակտիկա, վերահսկում է բոլոր տեսակի ընտրությունները, պատրաստում քաղաքականության փաստաթղթեր և այլընտրանքային հաշվետվություններ:

«Սափարի» - աշխատում է մարդու իրավունքների, բռնության և խտրականության հարցերով, թիրախային տարածաշրջաններում էթնիկ փոքրամասնությունների հետ, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին: Կազմակերպությունն աշխատում է կրթական և փաստաբանական, այդ թվում՝ դատական գործընթացների պրակտիկայի առումով:

«Սոցիալական արդարության կենտրոն» - մարդու իրավունքների և սոցիալական արդարության վրա աշխատող ձախակողմյան կազմակերպություն է: Նա աշխատում է սոցիալական քաղաքականության, իրավահավասարության, արդարության և ժողովրդավարության հարցերով:

«Մատչելի միջավայր բոլորի համար» - աշխատում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով: Կազմակերպությունը զբաղվում է կրթական և քարոզչական գործունեությամբ:

Պատասխանատվություն կրողներ (duty bearers)

Տվյալ համատեքստի վերլուծության ընթացքում բացահայտվել են հետևյալ պատասխանատվություն կրող կողմերը/հաստատությունները.

Կենտրոնական մակարդակի կառույցներ

Վրաստանի կառավարություն - գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է, որն իրականացնում է երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: Կառավարությունը հաշվետու է Վրաստանի խորհրդարանին:¹⁸

Մարդու իրավունքների միջգերատեսչական խորհուրդ - Վրաստանի կառավարության կողմից ստեղծված հաստատություն, որը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կիրականացնի և կմշակի միասնական պետական քաղաքականություն, գործողությունների ծրագիր և կվերահսկի դրա իրականացման համակարգումը:¹⁹

Վրաստանի խորհրդարան - բարձրագույն ներկայացուցչական մարմին, որը օրենսդիր իշխանությունն է, որոշում է երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Վերահսկում է կառավարության գործունեությունը սահմանադրության սահմաններում:

Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողով - իր իրավասությունների շրջանակներում նախապատրաստում է օրենսդրական նախագծեր, նպաստում է Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված որոշումների իրականացմանը, վերահսկում է Վրաստանի կառավարությանը և խորհրդարանին հաշվետու այլ մարմիններին: Կոմիտեն իր իրավասության շրջանակներում մասնակցում է առողջապահության, սոցիալական պաշտպանության, աշխատանքի և զբաղվածության քաղաքականության հիմնական ուղղությունների որոշմանը: Կոմիտեի նպատակն է նաև նպաստել բնակչության առողջության, սոցիալական պաշտպանության, աշխատանքային զբաղվածության, մայրերի և երեխաների պաշտպանության, ընտանիքի զարգացման, տարեցների, տեղահանվածների, վետերանների և հաշմանդամների խնդիրների լուծմանը:

¹⁸ Վրաստանի կառավարության կառուցվածքի, լիազորությունների և գործունեության կարգի մասին Վրաստանի օրենք 2004

¹⁹ Վրաստանի կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N551 որոշումը՝ Մարդու իրավունքների միջգերատեսչական խորհրդի ստեղծման և դրա կանոնակարգը հաստատելու մասին:

Վրաստանի խորհրդարանի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողով - իր իրավասությունների շրջանակում նախապատրաստում է օրենսդրական նախագծեր, նպաստում է Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված որոշումների իրականացմանը, վերահսկում է Վրաստանի կառավարությանը և խորհրդարանին հաշվետու այլ մարմիններին:

Վրաստանի խորհրդարանի շրջակա միջավայրի պաշտպանության և բնական պաշարների հանձնաժողով - իր լիազորությունների շրջանակներում ապահովում է օրենսդրական հարցերի նախնական նախապատրաստում, նպաստում է խորհրդարանի որոշումների կատարմանը, վերահսկում է Վրաստանի կառավարությանը և խորհրդարանին հաշվետու այլ մարմիններին, աշխատում բնապահպանական և բնական ռեսուրսների ուղղությամբ:

Գեոդեռային իրավահավասարության մշտական խորհրդարանական խորհուրդ - նպաստում է գեոդեռային ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների որոշմանը, օրենսդրական բազայի ստեղծմանը և զարգացմանը, համապատասխան ռազմավարության քննարկմանը և հաստատմանը, գեոդեռային հավասարության ուղղությամբ վրաստանի խորհրդարանին հաշվետու կառույցների վերահսկմանը, գեոդեռային իրավահավասարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և կանանց հզորացմանն աջակցող միջոցառումների իրականացմանը:

Վրաստանի խորհրդարանի տարածաշրջանային քաղաքականության և ինքնակառավարման հանձնաժողով - իր իրավասության շրջանակներում հանձնաժողովն ուսումնասիրում է մունիցիպալիտետների կարիքները, պատրաստում համապատասխան օրինագծեր, եզրակացություններ և դրանք ներկայացնում խորհրդարանի քննարկմանը: Վերահսկում է խորհրդարանի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը: Վերլուծում է դատական պրակտիկան և ապահովում համապատասխան օրենսդրական բացերի վերացումը: Կոմիտեն իրավասու է նշանակել թեմատիկ ուսումնասիրության խումբ՝ որոշակի հարց ուսումնասիրելու համար:

Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանվածների աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարություն - գործադիր իշխանության հաստատություն է, որն ապահովում է պետական կառավարում և պետական քաղաքականություն օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության ոլորտում:²⁰

Թրաֆիքինգի գոհերի խնամքի և աջակցության պետական գործակալություն - հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գտնվում է Վրաստանի օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության պետական վերահսկողության ներքո: Գործակալության նպատակն է նպաստել թրաֆիքինգի, կանանց նկատմամբ բռնության, տուժածների պաշտպանության և օգնության պետական քաղաքականության իրականացմանը, կենտրոնական և տեղական խնամակալության և խնամքի մարմնի գործառույթների ապահովումը, խնամակալության, խնամքի, որդեգրման պետական քաղաքականության

²⁰ Վրաստանի կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N473 որոշումը «Վրաստանի օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության կանոնակարգը հաստատելու մասին»:

վարումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և խնամքից զրկված երեխաների համար արժանապատիվ կենսապայմանների ստեղծումը:²¹

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակ - գրասենյակի գործունեության շրջանակը ներառում է Վրաստանի տարածքում հակամարտող շրջանների վերաինտեգրման հետ կապված հարցերի լուծումը: Նաև այս տարածաշրջաններում կրոնական, էթնիկ, քաղաքական կամ այլ հիմքերով ծագող խնդիրների լուծում, կանխարգելում և հակամարտությունների լուծման նպաստում:²²

Վրաստանի հանրային պաշտպանի գրասենյակ - Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պետական երաշխիքներ ապահովելու նպատակով գրասենյակը վերահսկում է պետական կառավարության և մոնիցինգայլ մարմինների, հանրային կառույցների և պաշտոնյաների կողմից Վրաստանի տարածքում և իր իրավասության սահմաններում գտնվող բոլոր անձանց՝ պետության կողմից ճանաչված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու հարգանքը՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ տեսակետներից, ազգային, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, ծագումից, ունեցվածքից և կոչումից, բնակության վայրից կամ այլ հանգամանքներից:²³

Տեղական մակարդակի կառույցներ

Վրաստանի տեղական ինքնակառավարում - Վրաստանի քաղաքացիների իրավունքն ու հնարավորությունը տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով Վրաստանի օրենսդրության շրջանակներում որոշելու տեղական նշանակության հարցեր՝ բնակչության շահերին համապատասխան: Համատեքստի վերլուծության շրջանակներում քննարկվում են Ախալցխիսեի, Նինոծմինդայի, Բուխիսի, Գարդաբանի, Դմանիսի, Թերթիծղարոյի, Մառնեուլիի և Շալկայի մոնիցինգայլիստները:

1.2. Վրաստանի պարտավորությունները իրավունքներ կրող խմբերի նկատմամբ՝ միջազգային համատեքստում

Մարդու իրավունքների հետ կապված Վրաստանի պարտավորությունները նախնառաջ սահմանվում են Վրաստանի Սահմանադրությամբ: Վրաստանի Սահմանադրությունից հետո միջազգային պայմանագրերն ավելի բարձր նորմատիվ արժեք ունեն, քան ցանկացած այլ իրավական ակտ:²⁴ Ըստ այդմ, Վրաստանում վավերացված մարդու իրավունքների միջազգային պայմանագրերն ունեն անմիջական կիրառություն:

²¹ Վրաստանի կառավարության 2020 թվականի հունվարի 29-ի N58 որոշումը «Հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ թրաֆիքինգի գոհերի պետական խնամքի և աջակցության գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին»:

²² Վրաստանի կառավարության 2008 թվականի փետրվարի 8-ի N23 որոշումը վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարարի գրասենյակ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին:

²³ Վրաստանի հանրային պաշտպանի մասին Վրաստանի օրգանական օրենք, հոդված 3, 1996 թ

²⁴ Վրաստանի Սահմանադրության 4-րդ հոդվածի 5-րդ կետ. Նորմատիվ ակտերի մասին Վրաստանի օրգանական օրենք

- [2011 թվականի մայիսի 11-ի Կանանց նկատմամբ բռնության և քնտանեկան բռնության կանխարգելման և վերացման մասին կոնվենցիա](#) (Վրաստանի առնչությամբ, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 1-ից):

Վերոհիշյալ միջազգային պարտավորությունների կատարման պատասխանատվությունը հիմնականում դրված է կենտրոնական իշխանության վրա, որն արտահայտվում է համապատասխան քաղաքականության և իրավական դաշտի կատարելագործմամբ: Տեղական ինքնակառավարման պատասխանատվության ոլորտում կան մի քանի ուղղություններ, որոնք ավելի մանրամասն նկարագրված են հաջորդ գլխում:

1.3.Վրաստանի ազգային օրենսդրական շրջանակ իրավունքներ կրող խմբերի նկատմամբ

Վրաստանի Սահմանադրության II գլուխը նվիրված է մարդու հիմնարար իրավունքներին և պետական մարմինների (ներառյալ տեղական իշխանությունների) պարտավորություններին այդ իրավունքների իրականացման գործընթացում:

Չնայած այն հանգամանքին, որ միջազգային պայմանագրերի ստորագրման արդյունքում ստանձնած պարտավորությունների կատարումը հիմնականում կենտրոնական իշխանության պարտականությունն է, տեղական իշխանությունը նույնպես կիսում է մարդու համընդհանուր ճանաչված իրավունքները հարգելը, խթանելը և իրականացնելը, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինները պետական գործառույթներ իրականացնող պաշտոնական պետական մարմիններ են:

2014 թվականին Վրաստանի խորհրդարանը հաստատել է Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության 2014-2020 թվականների ազգային ռազմավարությունը (այսուհետ՝ Մարդու իրավունքների ազգային ռազմավարություն): Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը համալրվում է գործողությունների ծրագրով: Հետազոտության շրջանակներում օգտագործվում են մարդու իրավունքների 2018-2020 թվականների գործողությունների ծրագիրը և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սույն ծրագրով նախատեսված առաջնահերթ ուղղությունները: Նշենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 5-ին Վրաստանի խորհրդարանը հաստատել է «Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության 2022-23 թվականների ազգային ռազմավարությունը»՝ նոր առաջնահերթություններով և ուղղություններով:

Ստորև թվարկված են միայն այն ուղղությունները, որոնք հատվում են տեղական իշխանությունների լիազորությունների հետ:²⁵

- Գենդերային հավասարություն և կանանց հզորացում,
- Երեխայի իրավունքներ,
- Ազգային/էթնիկ փոքրամասնությունների իրավունքներ և նրանց ինտեգրման խթանում,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ,
- Տեղահանված անձանց իրավունքներ:

²⁵ Վրաստանի Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հասանելի են Մարդու իրավունքների քարտուղարության կայքում. <http://myrights.gov.ge/en/Policy%20Documents/>

ինչպես նաև, տեղական ինքնակառավարման օրենսգրքից դուրս, տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն որոշակի պարտավորություններ, որոնց պատասխանատվությունը կատարվում է Վրաստանի տարբեր օրենքների համաձայն: Օրինակ՝ Վրաստանի 2014 թվականի «խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» օրենքը տարածվում է Վրաստանի բոլոր պետական կառույցների վրա:

Կանայք

2010 թվականին Վրաստանն ընդունել է «Գենդերային հավասարության մասին» հատուկ օրենք: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ մոնիցինգային տեսակետները պարտավոր են՝

- Ստեղծել գենդերային խորհուրդներ տեղական մակարդակում,
- Նշանակել հասարակական անձի, որը պատասխանատու կլինի գենդերային քաղաքականության համակարգման համար,
- Իրականացնել խտրականության բացահայտման և վերացմանն ուղղված միջոցառումներ,
- Վերացնել գենդերային խտրականությունը բյուջեներում:

Երեխաներ

2019 թվականին ընդունվեց Երեխաների իրավունքների օրենսգիրքը, որն ընդգրկում է երեխաների բարեկեցության և զարգացման հետ կապված բազմաթիվ ասպեկտներ: Օրենսգիրքը նախատեսում է տեղական իշխանությունների պարտավորությունների լայն շրջանակ, որոնց թվում առանձնահատուկ նշանակություն ունեն՝

- Երեխաների պաշտպանության և աջակցության մոնիցինգային ծառայությունների ստեղծման պարտավորությունը,
- Սեփական և պատվիրակված լիազորությունների շրջանակներում սոցիալական, առողջապահական, կրթական, ներառական և այլ ուղղություններով ծրագրերի մշակումը և իրականացումը:

Հաշմանդամություն ունեցող անձինք

2020 թվականին Վրաստանն ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» օրենքը, իսկ 2021 թվականին Վրաստանի խորհրդարանը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Նույն թվականին Վրաստանի կառավարությունը ստեղծեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների միջգերատեսչական համակարգող կոմիտե:

Հաշմանդամություն ունեցող անձանց մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և օրենքով սահմանված պարտավորությունների շրջանակներում ուրվագծվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալ պարտավորությունները՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝

- Անձնական օգնականի ծառայությունների մշակում և մատուցում մինչև 2025 թվականը,
- Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի խթանում, որոշումների կայացման գործընթացում նրանց մասնակցության խթանում և սոցիալական ծառայությունների զարգացում,
- Սոցիալական ծառայությունների օգտագործումը պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

Ի լրումն վերոհիշյալ պարտավորությունների, հաստատված պրակտիկա է մոնիցինգայլիտետներում հաշմանդամություն ունեցող անձանց խորհուրդներ ունենալը, որոնց նպատակն է բացահայտել համայնքի կարիքները տեղական մակարդակում և նպաստել այդ կարիքների համապատասխան նպատակային ծրագրերի մշակմանը:

Ազգային փոքրամասնություններ

Վրաստանի կառավարությունը, Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակի ղեկավարությամբ և համակարգմամբ, մշակել է «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը»: Ռազմավարությամբ սահմանված առաջնահերթ ուղղություններն են.

- Պետական լեզվի և ինտեգրման աջակցություն,
- Որակյալ կրթության հասանելիություն,
- Հավասարություն, քաղաքացիական և քաղաքական մասնակցություն,
- Սոցիալական և տնտեսական ինտեգրում,
- Միջմշակութային երկխոսություն:

Ռազմավարության շրջանակը ներառում է համատեքստի վերլուծության մեջ դիտարկված թիրախային մոնիցինգայլիտետները, քանի որ այստեղ հատկապես կոմպակտ բնակվում են ազգային փոքրամասնությունները:

Տեղահանվածներ

Վրաստանի 2014 թվականի «Վրաստանի օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների մասին» օրենքը սահմանում է այս կարգավիճակ ունեցող անձանց և նրանց նկատմամբ տեղական մոնիցինգայլիտետների պարտավորությունները: Մոնիցինգայլիտետների պարտավորությունների թվում են՝

- Երկարաժամկետ բնակարանների տրամադրում,
- Տեղահանվածների իրավունքների պաշտպանության երաշխիքների ստեղծում:

1.4. Վրաստանում կենտրոնական և տեղական մակարդակում գործող սոցիալական ծառայություններ՝ իրավունքներ կրող խմբերի համար

Վրաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և ազգային իրավական դաշտի շրջանակներում Վրաստանի կառավարությունն աշխատում է կենտրոնական և տեղական մակարդակի ծրագրերի վրա, որոնք ուղղված են խոցելի խմբերի իրավունքների իրականացմանը նպաստելուն:

Կենտրոնական սոցիալական ծառայություններ

Վրաստանի «Սոցիալական աջակցության մասին» օրենքը սահմանում է «սոցիալական օգնությունը» որպես ցանկացած նպաստ՝ դրամական կամ ոչ դրամական, որը նախատեսված է հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց, աղքատ ընտանիքների կամ անօթևան անձանց համար. Իսկ «սոցիալական ծառայությունը» սահմանվում է որպես գործունեություն, որի նպատակն է բավարարել հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց, աղքատ ընտանիքների կամ անօթևանների հատուկ կարիքները, ոչ դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես՝ սոցիալական ծառայությունների տրամադրման միջոցով:

Վրաստանի կառավարությունն ունի դրամական սոցիալական աջակցության 3 կատեգորիա.

Ծերության կենսաթոշակ, որի թիրախային խմբերը մեծահասակներն են,

Սոցիալական փաթեթ, որի թիրախային խմբերն են որբերը, հաշմանդամություն ունեցող անձինք, քաղաքական բռնաճնշումների զոհերը և զինված հակամարտությունների ժամանակ ընտանիքի անդամներից մեկին կորցրած անձինք,

Նպատակային սոցիալական օգնություն, որի թիրախային տնային տնտեսությունները գնահատվում են սոցիալ-տնտեսական տեսանկյունից: Ի տարբերություն ծերության կենսաթոշակի և սոցիալական փաթեթի, որոնք ունեն ունիվերսալ բնույթ, նպատակային սոցիալական օգնությունը կախված է տնային տնտեսությունների բնակության վայրից, եկամուտների մակարդակից, նյութական միջոցներից, տնային տնտեսություններում խոցելի խմբերի ներկայացուցիչների թվից և այլն:

Նաև Վրաստանի կառավարությունը սոցիալական ծառայություններ է իրականացնում «Սոցիալական վերականգնման և երեխաների խնամքի 2022 թվականի պետական ծրագրի» շրջանակներում: Ծրագիրը բաղկացած է սոցիալական վերականգնման ու երեխայի խնամքին ուղղված բաղադրիչներից:

«Սոցիալական վերականգնման 2022 թվականի պետական ծրագրի» իրավունքներ կրողների թիրախային խմբերն են հաշմանդամություն ունեցող անձինք (այդ թվում՝ վետերաններ և երեխաներ) և տարեցիները: Ծրագրի նպատակն է բարելավել թիրախային խմբերի ֆիզիկական և սոցիալական պայմանները և նպաստել հասարակությունում նրանց ինտեգրմանը: Ծրագիրը բաղկացած է ենթածրագրերից, որոնք իրենց բովանդակությամբ հանդիսանում են մեկանգամյա ծառայություններ և/կամ ապրանքներ կամ համակարգային ծառայություններ:

Միանվագ մատուցվող ծառայություն/ապրանք - նշված նպատակով ստեղծված ենթածրագրերի շրջանակներում դիտարկվում է ապրանքի միանվագ նպատակային առաքում կամ սպասարկում: Մասնավորապես, այդ ենթածրագրերն են.

1. Օժանդակությունների տրամադրման ենթածրագիր - այս ենթածրագրի շրջանակներում տրամադրվում է տարբեր տեսակի աջակցություն՝ վաուչերի տեսքով, որոնց կրկնակի ստացման իրավունքն ու անհրաժեշտությունը կարգավորվում է համապատասխան կարգով, և հաճախ այն տրվում է մի քանի տարին մեկ անգամ: Ինչպես նաև, նշված ենթածրագրի ծառայություններ մատուցողները հիմնականում հավաքված են մայրաքաղաքում, ինչի պատճառով ծրագիր փնտրողը ստիպված է շրջանից Թբիլիսի հասնել: Ենթածրագիրն իր հերթին բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.
 - 1.1. Սայլակների տրամադրման և հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում,
 - 1.2. Պրոթեզատրոպեդիկ միջոցների տրամադրում,
 - 1.3. Լսողության սարքավորման ապահովում,
 - 1.4. Լսողության խանգարումներ ունեցող անձանց տեսակոնֆերանսի գործառնության տեխնիկական միջոցներով (սմարթֆոն) ապահովում,
 - 1.5. Հենակների, ձեռնափայտերի, կույրերի ձեռնափայտերի և տեղաշարժվելու շրջանակների տրամադրում,
 - 1.6. Կույրերի ձեռնափայտով ապահովում,
 - 1.7. Ակնոցով ապահովում:

2. Պատերազմի մասնակիցների վերականգնմանը նպաստելու ենթածրագիր - նշված ենթածրագրի շրջանակներում համապատասխան ծառայությունները ստանում են մեկ անգամ՝ 300 լարիից ոչ ավելի, անհատական բուժման պրոֆիլակտիկ և վերականգնողական կուրսի ֆինանսավորում:

Համակարգային բնույթի ծառայություններ - այս նպատակով ստեղծված ենթածրագրերի շրջանակներում դիտարկվում է կարիքների հիման վրա երկարաժամկետ ծառայությունների մատուցում: Ենթածրագրերի իրականացման համար անհրաժեշտ է թիրախային համայնքներում գրանցված ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որոնք ծառայություններ են մատուցում կանխորոշված քվոտայի (քանակի) թիրախային խմբերին: Մասնավորապես, այդ ենթածրագրերն են.

1. 18 տարեկանից բարձր անձանց ցերեկային խնամքի կենտրոնների տրամադրման ենթածրագիր - տրամադրում է ամենօրյա (բացառությամբ ոչ աշխատանքային օրերի) ծառայություն՝ ուղղված համապատասխան ունակությունների զարգացմանը և ինտեգրման խթանմանը: Հետազոտության թիրախային մոնիցինգալիտետներից միայն Մառնեուլիի մոնիցինգալիտետում կա ծառայություններ մատուցող կազմակերպություն, որը ծառայություններ է մատուցում 8 շահառուների, նշված ծառայություն մատուցողն է «Երեխա, ընտանիք, հասարակություն» ՀԿ-ն, որը գրանցված է Թբիլիսիում և ունի ներկայացուցչություն տարածաշրջանում,
2. Խուլերի հաղորդակցության խթանման ենթածրագիր - Ծրագրի շրջանակներում ժեստերի լեզվի 10 թարգմանիչ պետք է սպասարկի 8 տարածաշրջանի: Քվեմո Զարթլիի տարածաշրջանն ունի իր սեփականը, մինչդեռ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանը նման ծառայություն չունի՝ այն սպասարկվում է Ծիդա Զարթլի ժեստերի լեզվի թարգմանչի կողմից,
3. Համայնքային կազմակերպություններում ծառայությունների մատուցման ենթածրագիր - հետազոտության թիրախային տարածաշրջաններում չկա նշված ենթածրագրի համապատասխան գրանցված ծառայություններ մատուցող կազմակերպություն: Ենթածրագրի բաղադրիչներն են.
 - 3.1. Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքային ծառայությունների մատուցման բաղադրիչ,
 - 3.2. Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանեկան տիպի անկախ կյանքին աջակցող ծառայությունների մատուցման բաղադրիչ:

Մյուս կողմից, «Երեխաների խնամքի և երիտասարդության աջակցության 2022 թվականի պետական ծրագրի» իրավունքներ կրող թիրախային խմբերն են՝ *հաշմանդամություն ունեցող երեխաներ, ընտանեկան խնամքից զրկված, սոցիալապես անապահով, անօթևան և լքվելու վտանգի տակ գտնվող երեխաներ, ճգնաժամի մեջ գտնվող երեխաներ ունեցող ընտանիքներ և 18-21 տարեկան պետության խնամքի տակ ապրող կամ խնամքից հեռացած երիտասարդներ*: Նշված ծրագրի նպատակն է բարելավել երեխաների ֆիզիկական և սոցիալական վիճակը, նպաստել նրանց ինտեգրմանը հասարակությանը և անկախ կյանքին: Ծրագրի բովանդակությունը բաղկացած է երկարաժամկետ վերականգնողական ծառայություններից՝ համակարգային ոչ համայնքային ուղղվածությամբ և համակարգային մոնիցինգալ կենտրոնացվածությամբ:

Համակարգային ոչ մոնիցինգալ ծառայություններ (ծառայություն մատուցողը ծառայության արդյունավետության համար կարիք չունի գրանցված լինել մոնիցինգալ կամ

տարածաշրջանային մակարդակում) - նշված նպատակով ստեղծված ենթածրագրերի շրջանակներում նախատեսվում է կարիքների հիման վրա ծառայությունների երկարաժամկետ մատուցում: Պարտադիր չէ, որ ենթածրագրի իրականացնողը գրանցված լինի թիրախային մոնիցինգայալիտետներում կամ տարածաշրջաններում: Մասնավորապես, այդ ենթածրագրերն են.

1. Մոր և մանկան կացարանների ենթածրագիր - մայրերի և երեխաների համար ծրագրային չափանիշներով նախատեսված կացարանի տրամադրում: Ծառայություններ մատուցող կազմակերպությունները գրանցված են Վրաստանի միայն 3 մոնիցինգայալիտետներում: Թիրախային մոնիցինգայալիտետները այս ցանկում չեն:
2. Խնամակալության ենթածրագիր - խնամակալ ընտանիքների ծրագիր է այն երեխաների համար, ովքեր համապատասխանում են ծրագրի չափանիշներին: Ծրագրում ներգրավված են ընտանիքներ Վրաստանի բոլոր մոնիցինգայալիտետներից, ներառյալ թիրախային մոնիցինգայալիտետները:
3. Ծանր և խորը հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխաների համար մասնագիտացված ընտանեկան տիպի ծառայությունների ենթածրագիրը - ծրագրի չափանիշներով սահմանված երեխաների համար համապատասխան 24-ժամյա ընտանեկան ծառայությունների առաջարկ է: Նշված ծառայություն մատուցողը գրանցված է Վրաստանի 2 մոնիցինգայալիտետներում:
4. Խնամքից զրկված երեխաների վերաինտեգրման ենթածրագիր - ուղղված է մինչև 18 տարեկան երեխայի կենսաբանական ընտանիք վերադառնալուն, վերաինտեգրմանը, ով ներկայումս գտնվում է պետական խնամքի հաստատություններում կամ խնամակալության մեջ: Ծրագիրն իրականացվում է Վրաստանի բոլոր մոնիցինգայալիտետներում:
5. Երկարատև մանկական խնամքի բժշկական-սոցիալական կենտրոնի սպասարկման ենթածրագիր - ուղղված է Թբիլիսիի մանկատան ծանր և խորը հաշմանդամություն ունեցող և առողջական խնդիրներ ունեցող երեխաներին: Ծրագրի առանձնահատկություններից ելնելով, դրա ծառայություններ մատուցողը գրանցված է միայն Թբիլիսիում:

Համակարգային մոնիցինգայալ ծառայություն (ծառայության արդյունավետության համար ծառայություն մատուցողը պետք է գրանցված լինի մոնիցինգայալ կամ տարածաշրջանային մակարդակում) - նշված նպատակով ստեղծված ենթածրագրերի շրջանակներում նախատեսված է կարիքների հիման վրա երկարաժամկետ ծառայությունների մատուցում: Հիմնականում ենթածրագրերի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ թիրախային մոնիցինգայալիտետներում գրանցված ծառայություններ մատուցող կազմակերպություն, որը սպասարկում է թիրախային խմբերի կանխորոշված քվոտա (քանակ): Բացառություն է կազմում միայն ճգնաժամային վիճակում գտնվող երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ենթածրագիրը, որի շրջանակներում տրվում են սննդի կտրոններ: Նշենք, որ թիրախային մոնիցինգայալիտետներում ներկայացված կազմակերպությունները Թբիլիսիում գրանցված մեծ փորձ ունեցող կազմակերպություններն են, որոնք տարիներ անց մասնաճյուղեր են բացել նշված մոնիցինգայալիտետներում: Նման դեպքում գրանցումը որպես ծառայություններ մատուցող դառնում է ավելի հեշտ, քանի որ, ստանդարտի համաձայն, փորձառու կազմակերպություններն արդեն ունեն մի շարք չափանիշներ, որոնց պետք է

համապատասխանի կազմակերպությունը, ինչը նվազեցնում է գործառնական ծախսերը: Նշված պրակտիկայի բացասական կողմն այն է, որ զարգանում են միայն այն սոցիալական ծառայությունները, որոնց կառավարման փորձ ունեն թրիվսիում գրանցված ծառայություններ մատուցողները, և սոցիալական ծառայությունների մատակարարման շղթա չի ստեղծվում: Մատակարարման ամբողջական շղթայի գործարկումը հիմնականում տեղական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ուշադրության կենտրոնում է, քանի որ ծառայություններ մատուցողները հաճախ իրենք համայնքի անդամներ են: Տեղական ծառայություններ մատուցողները ծառայության գործարկման համար ավելի շատ ֆինանսական և ռեսուրսային աջակցության կարիք ունեն, որը, ցավոք, չի ֆինանսավորվում ոչ կենտրոնական, ոչ էլ տեղական կառավարության կողմից: Համակարգային մոնիցինգայլ ծառայության ենթածրագրերն են.

1. ճգնաժամային իրավիճակում գտնվող երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ենթածրագիր - մեկ ընտանիքի համար տարեկան 600 լարի սննդի վաուչերի տրամադրում:
2. Երեխաների վաղ զարգացման խթանման ենթածրագիր - ուղղված է 0-7 տարեկան երեխաներին, ովքեր ամեն ամիս ստանում են 8 անհատական այցելություն: Հետազոտության թիրախային մոնիցինգալիտետներից ներգրավված է ընդամենը 2 մոնիցինգալիտետ:
3. Գրանցված ծառայություններ մատուցող ենթածրագիր - Մառնեուլիում այցելությունների թիվը սահմանված է 336 այցելությամբ (մոտ 42 թիրախ երեխա, ծրագրի մատուցողն է «Երեխա, ընտանիք, հասարակություն» ՀԿ-ն և «Մառնեուլիի մոնիցինգալիտետի մանկապարտեզների միությունը»), իսկ Ախալցխի մոնիցինգալիտետում՝ 160 այցելությամբ (մոտ 20 թիրախ երեխա՝ ծրագրի մատուցողը «Վրաստանի Պորտաժ ասոցիացիա» միությունն է):
4. Երեխաների վերականգնողական/աբիլիտացիոն ենթածրագիր - անհատական վերականգնմանն ուղղված ենթածրագիր է, որը բաղկացած է տարեկան 8 դասընթացից: Իր հերթին դասընթացը բաղկացած է 10-օրյա վերականգնողական սեանսից: Նշված ենթածրագրի գրանցված մատուցող կա միայն Մառնեուլիի մոնիցինգալիտետում:
5. Ցերեկային կենտրոնների ծառայությունների մատուցման ենթածրագիր - ամենօրյա (բացառությամբ ոչ աշխատանքային օրերի) ծառայություն է՝ ուղղված համապատասխան ունակությունների զարգացմանն ու ինտեգրման խթանմանը: Հետազոտության թիրախային մոնիցինգալիտետներից միայն Մառնեուլիի և Բոլնիսի մոնիցինգալիտետներն ունեն ծառայություններ մատուցող կազմակերպություն: Մառնեուլիի մոնիցինգալիտետը սպասարկում է 6-18 տարեկան հաշմանդամություն ունեցող 19 երեխայի (ծառայություն մատուցող՝ «Երեխա, ընտանիք, հասարակություն» ՀԿ), իսկ Բոլնիսի մոնիցինգալիտետը՝ 6-18 տարեկան հաշմանդամություն ունեցող 39 երեխայի (ծառայություն մատուցող՝ «Անիկա» ասոցիացիա):
6. Տներում փոքր ընտանեկան տիպի ծառայությունների մատուցման ենթածրագիր - ուղղված է 6-18 տարեկան երեխաներին, ովքեր չեն կարողացել որդեգրվել, խնամակալության տակ տեղափոխվել կամ ինտեգրվել կենսաբանական ընտանիքին: Թիրախայի մոնիցինգալիտետներում չկան նշված ծառայությունը մատուցող կազմակերպություններ:

7. Անօթևան երեխաներին կացարան տրամադրելու ենթածրագիր - մինչև 18 տարեկան անօթևան երեխաների համար ապահովում է շարժական խմբի ծառայություն: Նշված ծրագրի շրջանակներում ծառայություններ մատուցող կազմակերպությունները գրանցված են Վրաստանի միայն 4 մոնիցիդակալիտետներում: Հետազոտության թիրախային մոնիցիդակալիտետները չունեն ծառայություններ մատուցող կազմակերպություն:
8. Չարգացման խիստ և խորը ուշացումներով երեխաների բնակարաններում խնամքի ենթածրագիր - նշված ծառայությունը մատուցող գրանցված կազմակերպությունը գործում է Վրաստանի միայն 5 մոնիցիդակալիտետներում: Թիրախային մոնիցիդակալիտետներում այս պրոֆիլի կազմակերպություն չկա:
9. Պետական խնամքից հեռացած 18-21 տարեկան երիտասարդների աջակցության ենթածրագիր - ապահովում է աջակցություն կոնկրետ չափանիշների հիման վրա որոշված երիտասարդների անկախ կյանքին: Նշված ծառայություններ մատուցողները գրանցված են միայն Թբիլիսիում:

Բացի այդ, պետությունն իրականացնում է առողջության պահպանման պետական ծրագիր, որի շրջանակներում գործում են 2 ենթածրագիր, որոնք, ելնելով իրենց կանխարգելիչ բովանդակությունից և շեշտադրումներից, առնչվում են տեղական մոնիցիդակալիտետների կողմից սոցիալական աջակցության շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերին:²⁶

1. Մոր և մանկան առողջության ենթածրագիր - տրամադրում է հղիների գենետիկ պաթոլոգիաների, հեպատիտ B և C, ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի և սիֆիլիսի մոնիտորինգ և դրանց հայտնաբերման դեպքում համապատասխան բժշկական ծառայություններ: Ինչպես նաև, մորից երեխային հեպատիտ B-ի փոխանցման կանխարգելում, հղի կանանց դեղորայքի տրամադրում, նորածինների լսողության ախտորոշում և երեխաների հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի, հիպերֆենիլալանինեմիայի և կիստիկական ֆիբրոզի սկրինինգ:
Նշված ենթածրագրի իրականացնողներն են պետական համապատասխան լիցենզիա ունեցող բուժհաստատությունները: Նրանք ամբողջությամբ ներկայացված են թիրախային մոնիցիդակալիտետներում՝ Ախալցխեում, Նինոծմիսդայում, Բուլխիսում, Գարդաբանիում, Դմանիսում, Թերթիժդարոյում, Մամնեուլիում և Ծալկայում:
2. Հիվանդությունների վաղ հայտնաբերման և սկրինինգի ենթածրագիր - նախատեսում է քաղցկեղի և վաղաժամկետ ծնված երեխաների ռետինոպաթիայի սկրինինգ, 1-6 տարեկան երեխաների մոտ մեղմ և չափավոր մտավոր հետամնացության կանխարգելում (վաղ ախտորոշման միջոցով), Էպիլեպսիայի ախտորոշում և հսկողություն, երեխաների արյան մեջ կապարի պարունակության բիոմոնիտորինգ: Նշված ենթածրագրի ծառայություններ մատուցողները ներկայացված են միայն կենտրոնական մակարդակով՝ Թբիլիսիում (Քուբայիսիում հասանելի են միայն Էպիլեպսիայի ախտորոշումը և վերահսկողությունը):

Նշված ենթածրագրերն իրենց բովանդակությամբ կանխարգելիչ տիպի են և հիմնականում ուղղված են մայրերի և երեխաների վաղ սկրինինգին, ինչը նվազեցնում է ռիսկի գործոնները, որոնցով շատ դեպքերում պայմանավորված է հաշմանդամություն ունեցող անձի

²⁶ Վրաստանի կառավարության 2022 թվականի հունվարի 12-ի N4 որոշում՝ 2022 թվականի առողջապահական պետական ծրագրերը հաստատելու մասին

կարգավիճակը, ընդհանուր առմամբ վատթարացնում են մարդու առողջական վիճակը, և նա դառնում է տարբեր սոցիալական օգնություն հայցող անձ:

Կենտրոնական կառավարության վերը նկարագրված սոցիալական և առողջապահական ծրագրերը հաճախ չունեն գրանցված ծառայություններ մատուցող տեղական մակարդակում: Թեև պատճառների ցանկը կարող է փոքր-ինչ տարբերվել՝ կախված կոնկրետ թիրախային մոնիցիգիալիտետի առանձնահատկություններից, կան մի քանի ընդհանուր խոչընդոտներ, մասնավորապես.

Տեղական շահագրգիռ կողմերը հաճախ չեն բավարարում որպես ընթացիկ սոցիալական և առողջապահական ծառայություններ մատուցող գրանցման համար պահանջվող չափանիշները (ծառայությունների մատուցման ստանդարտ): Ծառայությունների մատուցման ստանդարտը հաճախ պահանջում է ենթակառուցվածքի (հարմարեցված միջավայր) և համապատասխան որակավորված մասնագետների (օրինակ՝ օկուպացիոն թերապևտ, լոգոպեդ, ռեաբիլիտոլոգ, վարքագծային թերապևտ, հոգեբույժ և այլն) առկայությունը, որոնք կազմակերպության համար դժվար է գտնել տարածաշրջանում: Նշված չափանիշներին համապատասխանելու համար անհրաժեշտ է ունենալ ֆինանսական ռեսուրսներ՝ միջավայրին համապատասխան մասնագետներ պատրաստելու և աշխատանքի ընդունելու համար: Ցավոք, պետական ծրագրերը ծածկում են ծառայության համար անհրաժեշտ ընթացիկ ծախսերը (հաճախ ծրագրի համար նախատեսված միջոցները ծածկում են փաստացի ծախսերի միայն 60%-ը, օրինակ՝ ցերեկային խնամքի կենտրոնի ծրագիրը), և կազմակերպությունները պետք է համաֆինանսավորում գտնեն տեղական հանրային և մասնավոր կառույցներից, իսկ ծառայությունը սկսելու համար անհրաժեշտ կապիտալը պետք է գտնենք իրենք՝ շահագրգիռ կողմերը, ինչը առանձին ունակություններ է պահանջում: Նաև տեղական և միջազգային դոնորները, որոնք հիմնականում առաջնահերթություն են տալիս արդեն իսկ փորձառու կազմակերպություններին, հաճախ չեն աշխատում ծառայության մեկնարկի համար անհրաժեշտ նպատակային դրամաշնորհներ տրամադրելու համար: Այս ամենը խոչընդոտում է տեղական կազմակերպությունների գրանցմանը որպես այդ ծառայությունների մատուցող: Արդյունքում, տարածաշրջաններում գործում են թբիլիսիում գրանցված փորձառու կազմակերպությունների մասնաճյուղերը, որոնք ունեն ավելի շատ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ կամ նմանատիպ ռեսուրսների հասանելիություն՝ համեմատած տեղական կազմակերպությունների հետ:

Մոնիցիգիալիտետներում սոցիալական օգնության կարգավորում և օգնության տեսակներ

Հետազոտության թիրախային մոնիցիգիալիտետներում (ընդհանուր առմամբ դա հաստատված պրակտիկա է) սոցիալական աջակցության տեսակներն ու չափը սահմանում է սակրեբուլոն՝ բյուջեի հաստատման մասին իր որոշմամբ: Սոցիալական աջակցության տրամադրման կարգը նույնպես կարգավորվում է սակրեբուլոյի որոշմամբ (սա բյուջեից սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին որոշումն է): Երկու փաստաթղթերն էլ հաստատվում են տարեկան և գրեթե միաժամանակ:

Ծրագրային ֆինանսավորումը սպառելու և (կամ) այլ հատուկ դեպքերում սոցիալական աջակցության զգալի մասը տրամադրվում է մոնիցիգիալիտետի բյուջեի պահուստային ֆոնդից, որը ստեղծվում է մոնիցիգիալիտետի բյուջեում չնախատեսված ծախսերը ֆինանսավորելու համար: Պահուստային ֆոնդի ծավալը չի գերազանցում տարեկան բյուջեով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի 2%-ը: Նշված ֆոնդից ֆինանսավորվում են հետևյալ միջոցները.

- Բնական աղետների հետևանքով առաջացած իրավիճակի վերացման աշխատանքներ, նաև մարդու առողջությանն ու կյանքին սպառնացող վտանգների լուծարման աշխատանքներ:
- Հրատապ վիրահատական, դեղորայքային կամ բժշկական հետազոտություններ, որոնք բյուջեով չեն ֆինանսավորվում կամ բյուջեում համապատասխան ծրագրի ֆինանսավորումը սպառվել է:
- Տարբեր ինժեներական ենթակառուցվածքների վերականգնման ծախսեր:
- Սպորտային, մշակութային և կրթական միջոցառումների անցկացում:
- Տեղական բյուջեով չնախատեսված և օրենքով չարգելված այլ ծախսերի ֆինանսավորում:

Մունիցիպալիտետներում սոցիալական օգնության տրամադրման կարգ

Տարբեր մունիցիպալիտետներում հանդիպում ենք սոցիալական օգնության տրամադրման տարբեր պրակտիկայի:

Կարգ 1. Հանձնաժողովի կամ խորհրդի հանձնարարական - որոշում կայացնող՝ քաղաքապետ (Ճակա, Մառնեուլի, Գարդաբանի, Բուխիսի, Թեթրիծղարո)

Քաղաքապետարանում ստացված սոցիալական աջակցության բոլոր դիմումները կից փաստաթղթերով ուղարկվում են քաղաքապետարանի սոցիալական հարցերի քննարկման հանձնաժողով՝ սոցիալական աջակցության հարցի վերաբերյալ ուսումնասիրության և եզրակացություն կազմելու համար: Հանձնաժողովը հիմնականում համալրված է քաղաքապետարանի պետական ծառայողներով, սակայն հասարակական սկզբունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով շահագրգիռ ՉԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են մասնակցել հանձնաժողովի կողմից սոցիալական աջակցության հարցերի քննարկմանը: Նախատեսվում է նաև սակրեբոլոյի անդամների և սոցիալական ծառայությունների գործակալության ներկայացուցիչների մասնակցությունը:

Սոցիալական օգնությունը տրամադրվում է հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ համաձայն մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից տրված անհատական իրավական ակտի:

Դրամական օգնությունը փոխանցվելու է դիմողի կողմից ներկայացված անձնական բանկային հաշվին, իսկ ոչ դրամական սոցիալական աջակցության դեպքում այն կվճարվի ոչ կանխիկ վճարման տեսքով՝ համապատասխան բուժհաստատության բանկային հաշվին:

Կարգ 2. Որոշումներ կայացնող աշխատանքային խումբ (Ախալցխե)

Քաղաքացիներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին որոշումը կայացնում է մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից՝ սոցիալական աջակցության տրամադրման նպատակով, ստեղծված աշխատանքային խումբը: Աշխատանքային խումբը բաղկացած է քաղաքապետարանի հանրային ծառայողներից:

Կարգ 3. Քաղաքապետարանի համապատասխան ծառայության հանձնարարական - որոշում կայացնող՝ քաղաքապետ (Նինոծմինդա, Դմանիսի)

Քաղաքապետարանի վարչական ծառայության, առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը քննարկում է սոցիալական աջակցության տրամադրման

նպատակով քաղաքապետարանում ստացված դիմումները: Սոցիալական աջակցության տրամադրման հարցը որոշվում է անհատական հիմունքներով՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համապարփակ ուսումնասիրության հիման վրա: Ամբողջական փաստաթղթավորման դեպքում որոշումը կայացվում է քաղաքապետի անհատական վարչական-իրավական ակտի հիման վրա:

Մոլնիցիպալիտետներում սոցիալական օգնության ծրագրերի արդյունքների գնահատման չափորոշիչներ

Բյուջետային ծրագրերի արդյունքները գնահատելու համար քաղաքապետարանի 2022 թվականի ծրագրային բյուջեն ներառում է համապատասխան նպատակներ և արդյունքներ, թեև տվյալ չափորոշիչը բավականին ընդհանուր է և չի ներառում կոնկրետ ցուցանիշներ:

Օրինակ՝ Ախալցխեի մոլնիցիպալիտետի ենթածրագրերից մեկի նկարագրության մեջ նպատակ է սահմանվել՝ տարեցների ֆինանսական աջակցությունը, որը երեխաներին ամենամյա դրամական օգնություն ցուցաբերելը:

Ինչ վերաբերում է ակնկալվող արդյունքներին, ապա դրանք բնութագրվում են հետևյալ կերպ. ընտանիքներին աջակցություն և ֆինանսական աջակցություն, ծրագրի թիրախային խմբերի և նրանց ընտանիքների սոցիալական վիճակի մեղմում, շահառուների ծախսերի կրճատում, հասարակության մեջ ավելի ինտեգրված ընտանիքներ, արժանապատիվ ծերության ապահովում մեծահասակների համար, որը երեխաների խնամակալություն և խնամք:

Նինոծմիսդայի մոլնիցիպալիտետի ծրագրերից մեկի՝ անապահով ընտանիքներին միանվագ դրամական օգնություն, արդյունքը բնութագրվում է հետևյալ կերպ. հնարավորության շրջանակներում կարիքավոր բնակչության համար ստեղծված արտոնյալ միջավայր, մասնակից շահառուների քանակ, բավարարված բնակչություն:

Գարդաբանի մոլնիցիպալիտետի սոցիալական և առողջապահական ծրագրերի գնահատման հիմնական ցուցիչներից է ծրագրում ընդգրկված քաղաքացիների թիվը, իսկ արդյունքը՝ կոնկրետ ծրագրի շահառուների օգնությունը:

Վերոնշյալ օրինակները բերված են ցույց տալու համար, որ փատացի անհնար է գնահատել ծրագրի/ենթածրագրի արդյունքները: Հետազոտության ընթացքում բոլոր թիրախային մոլնիցիպալիտետներում ստուգվել է բնակչության սոցիալական աջակցության ծրագրերի արդյունքների գնահատման հաշվետվությունների առկայությունը՝ պահանջելով հանրային տեղեկատվություն: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, մոլնիցիպալիտետները գրանցում են միայն քանակական տվյալներ, օրինակ՝ քանի շահառու է ստացել աջակցություն, բյուջեից ինչ միջոցներ են ծախսվել տարբեր ծրագրերի իրականացման համար, սակայն սոցիալական ծրագրերի միջանկյալ և վերջնական գնահատման հաշվետվություններ չկան, ինչպես նաև, այս հաշվետվությունների հիման վրա չեն պատրաստվում ծրագրերի բարելավման վերաբերյալ առաջարկություններ: Նման զեկույցներն ու առաջարկությունները ոչ գործնականում, ոչ էլ հանրային տեղեկատվության տեսքով հասանելի չեն, ինչը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ նման փաստաթղթեր իրականում գոյություն չունեն:

Մունիցիպալիտետում սոցիալական օգնության ծրագրերի բյուջետային ֆինանսավորումը²⁷

1. Ախալցխեի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 25 996 100 լարի, որից 1 342 300 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 5,16%-ը:
 2. Նինոծմինդայի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 11 512 900 լարի, որից 555 000 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրի իրականացմանը, որը կազմում է բյուջեի 4,82%-ը:
 3. Բուխիսի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 34 404 800 լարի, որից 1,892,000 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 5,5%-ը:
 4. Գարդաբանի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 39 239 500 լարի, որից 3 292 900 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 8,4%-ը:
 5. Դմանիսի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 18 565 800 լարի, որից 575 000 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 3%-ը:
 6. Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 18 705 000 լարի, որից 485 500 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 2.6%-ը:
 7. Մառնեուլի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 46 330 700 լարի, որից 2 246 600 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 4,8%-ը:
 8. Ծալկայի մունիցիպալիտետի բյուջեի եկամուտները կազմում են 11 469 100 լարի, որից 500 000 լարին ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրին, որը կազմում է բյուջեի 4,35%-ը:
- Ընդհանուր առմամբ, թիրախային 8 մունիցիպալիտետների եկամուտները կազմում են 206 223 900 լարի, որից 10 889 300 լարին ծախսվում է սոցիալական աջակցության ծրագրերի վրա, ինչը միջինում բյուջեի 5,28%-ն է: Թբիլիսիի մունիցիպալիտետի բյուջեի համանման ցուցանիշը 2 անգամ գերազանցում է նշված ցուցանիշը՝ 1 379 987 100 լարի եկամտի պայմաններում սոցիալական ուղղությամբ ծախսում է 145 776 100 լարի, որը հավասար է եկամտի 10,56%-ին:

Անհնար է որոշել, թե մունիցիպալիտետի սոցիալական ծրագրերի ինչպիսի պահանջարկ կա, քանի որ մունիցիպալիտետները նման վիճակագրություն չունեն: Հետևաբար, սոցիալական աջակցության պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը հնարավոր չէ որոշել: Այս տվյալներին մոտ տվյալները կարելի է որոշել մեկ շնչին ընկնող սոցիալական ծրագրերին հատկացվող միջոցների վերահաշվարկով: Ըստ նշված տվյալների՝ մունիցիպալիտետների առումով մեծ տարբերություն կա, օրինակ՝ Մառնեուլիի մունիցիպալիտետում մեկ բնակչի համար նախատեսված է 20,9 լարի, մինչդեռ Գարդաբանիում այս ցուցանիշը 2 անգամ ավելի է՝ 41,5 լարի: Իսկ Թբիլիսիում այս ցուցանիշը կազմում է 121,4 լարի (145 776 100 լարի 1 200 000 բնակչի համար):

²⁷ Տվյալները հաշվարկված են 2022 թվականի մայիսի 29-ի դրությամբ:

Սոցիալական ուղղությամբ ցանկացած էական անհավասարություն հակասում է սոցիալական պետության սկզբունքին: Վրաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «պետությունը հոգ է տանում երկրի ողջ տարածքում հավասար սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման համար»: Համաձայն տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի 9-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «Ֆինանսապես թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական հավասարեցման ընթացակարգերի կամ այլ համապատասխան միջոցների իրականացում, որոնք ուղղված են ֆինանսավորման հնարավոր աղբյուրների և ֆինանսական պարտավորությունների ոչ համարժեք բաշխման հետևանքները շտկելուն»: Նշված գրառումներն առաջացնում են պետության պարտավորությունը՝ ստեղծելու սոցիալական ապահովության այնպիսի նվազագույն չափորոշիչ, որը հավասարապես հասանելի կլինի ցանկացած մոնիցինգայալիտետի բնակիչների համար (տե՛ս աղյուսակ թիվ 6):

Աղյուսակ #6

Մոնիցինգայալիտետ	Սոցիալական ծրագրերին հատկացված գումարը (Լարի)	Բնակչության բնակը (2022)	Գումարը մեկ շնչի հաշվով (Լարի)
1. Ախալցխես	1 342 300	39 100	34.3
2. Նինոծմինդա	555 000	17 900	31
3. Բոլնիսի	1 892 000	55 900	33.8
4. Գարդաբանի	3 292 900	79 300	41.5
5. Դմանիսի	575 000	20 900	27.5
6. Թեթրիծղարո	485 500	22 500	21.5
7. Մառնեուլի	2 246 600	107 500	20.9
8. Ծալկա	500 000	19 600	25.5

2. Թիրախային մոնիցինգայալիտետների բյուջեներում սոցիալական աջակցության կատեգորիաների առաջնահերթությունը ըստ խնդիրների

Ծալկայի մոնիցինգայալիտետն ունի միայն մեկ ծրագիր՝ «Հիվանդների սոցիալական պաշտպանության ծրագիր», որը բաժանված է երկու մասի՝ դրամական և ոչ դրամական:

Աջակցության կատեգորիաներ: Ծրագիրը ֆինանսավորվում է 653 000 լարիով և հիմնականում ներառում է հետևյալ կատեգորիաները.

- Միանվագ դրամական օգնություն տարբեր խոցելի խմբերին (սոցիալապես անապահով, ծնողագուրկ, կարիքավոր ընտանիքներ, պատերազմի վետերանների ընտանիքներ և այլն),
- Ծիսական ծառայությունների ֆինանսավորում,
- Դրամական աջակցություն մանկատներին և ապաստարաններին,
- Տոնական օրերին դրամական նվերների և միանվագ դրամական օգնության տրամադրում,
- Անհետաձգելի բժշկական ծառայությունների և դեղերի ծախսերի փոխհատուցում:

Ծրագրի ֆինանսավորման ավելի քան 80%-ը տրամադրվում է տարբեր խոցելի խմբերին տրամադրվող միանվագ դրամական օգնությունից և շտապ բժշկական ծառայությունների և դեղերի ծախսերի փոխհատուցումից:

Ախալցխեի մունիցիպալիտետի սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագիրը ֆինանսավորվում է 1 552 300 լարիով, որից առաջնահերթ խնդիրները բաշխված են հետևյալ կերպ.

- Բնակչության բժշկական ծառայությունների ֆինանսավորում՝ 732 900 լարի (47.2%),
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական աջակցություն՝ 211 000 լարի (13.5%),
- Ախալցխեի մունիցիպալիտետի առաքիությունների տուն ՀԿ՝ 193 000 լարի (12.4%),
- Սոցիալական օգնություն ներքին տեղահանվածների, տեղահանվածների և ծայրահեղ կարիքավորների համար՝ 155 300 լարի (10%):

Նինոծմինդայի մունիցիպալիտետի սոցիալական ապահովության ծրագիրը ֆինանսավորվում է 575000 լարիով, որից առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

- Սոցիալապես անապահով բնակչության բուժման ծախսեր՝ 210 000 լարի (36.5%),
- Ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանություն՝ 100 000 լարի (17.4%),
- Միանվագ դրամական օգնություն անապահով ընտանիքներին՝ 100 000 լարի (17.4%):

Մառնեուլիի մունիցիպալիտետի սոցիալական ապահովության ծրագիրը ֆինանսավորվում է 2 210 000 լարիով, որից առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

- Հիվանդների սոցիալական պաշտպանություն՝ 1 600 000 լարի (72.3%),
- Ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանություն՝ 605 000 (27.3%):

Գարդաբանիի մունիցիպալիտետի սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագիրը ֆինանսավորվում է 3 577 000 լարիով, որից առաջնահերթ խնդիրները բաշխված են հետևյալ կերպ.

- Առողջության պաշտպանության ծրագիր՝ 875 000 լարի (24.5%),
- Սոցիալապես անապահով ընտանիքների աջակցության ծրագիր՝ 718 000 լարի (20%),
- Նյութական օգնության միանվագ ծրագիր՝ 521 000 լարի (14.5%),
- Թերապևտիկ կենտրոնի խթանում՝ 300 000 լարի (8.3%),
- Սոցիալապես անապահովների բժշկական սպասարկման ծրագիր՝ 290 000 լարի (8%):

Դմանիսի մունիցիպալիտետի սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագիրը ֆինանսավորվում է 725 000 լարիով, որից առաջնահերթ խնդիրները բաշխված են հետևյալ կերպ.

- Սոցիալապես անապահով բնակչության բժշկական ստացիոնար և ամբուլատոր աջակցության մունիցիպալ ծրագիր, վիրահատությունների ծախսեր՝ 300 000 լարի (41.3%),
- Ծանր ախտորոշումներով և սոցիալական տարբեր շերտերի բնակչության սոցիալական պաշտպանություն (հիվանդների սոցիալական պաշտպանություն)՝ 200 000 լարի (27.5%),
- Չարորակ ուռուցքներով և հեպատիտ C-ով տառապող մարդկանց ֆինանսական աջակցություն՝ 135 200 լարի (18.6%):

Բոլնիսի մունիցիպալիտետի սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագիրը ֆինանսավորվում է 4 162 370 լարիով, որից առաջնահերթ խնդիրները բաշխված են հետևյալ կերպ.

- Մունիցիպալ տրանսպորտով երթևեկության գեղչ՝ 748 000 լարի (18%),
- Տարերային աղետների պատճառած վնասների փոխհատուցում՝ 728 000 (17.5%),
- Բժշկական ապահովագրության ծրագիր՝ 713 000 լարի (17.1%),
- «Բոլնիսի մունիցիպալիտետի առաքիությունների տուն» ՀԿ՝ 657 200 լարի (15.8%),
- Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն՝ 445 000 լարի (10,7%),
- Միանվագ դրամաշնորհներ՝ 260000 (6.2%),
- Հիվանդների համար դեղերի տրամադրում՝ 200000 լարի (4,8%).

Թերթիծղարոյի մունիցիպալիտետի սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագիրը ֆինանսավորվում է 896 500 լարիով, որից առաջնահերթ խնդիրները բաշխված են հետևյալ կերպ.

- Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն, մունիցիպալիտետի բնակչության բուժապահովման միանվագ օգնություն, ծննդօգնություն՝ 335 000 լարի (37.3%),
- Տարեցների սոցիալական պաշտպանություն, «Թերթիծղարոյի նախադպրոցական կրթության և սոցիալապես անապահով մարդկանց աջակցության կենտրոն»՝ 278,600 լարի (31%),
- «Կարմիր խաչ» - առանց խնամակալ անձանց, ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանություն՝ 150 000 լարի (16.7%):

Բյուջետային ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական աջակցության ծրագրերի վրա կատարված ծախսերը հիմնականում բաշխվում են երկու ուղղությամբ՝ բնակչության բժշկական սպասարկում և միանվագ դրամական/ոչ դրամական օգնություն խոցելի խմբերին, որոնք հիմնականում ներառում են սոցիալապես անապահով կատեգորիան՝ երեխաներ, տարեցներ, կարիքավոր ընտանիքներ:

Մունիցիպալիտետների սոցիալական և առողջապահական ծրագրեր

Թիրախային մունիցիպալիտետների մեծամասնությունում սոցիալական աջակցությունը ներառում է առողջապահական և սոցիալական օգնության նշանակման և մատուցման հետ կապված հարաբերությունները, առողջապահական և սոցիալական աջակցության տեսակները և դրանց նշանակման և մատուցման կառավարման սկզբունքները:

Հետազոտության թիրախային մունիցիպալիտետների սակրեբուլոնների կողմից հաստատված իրավական ակտերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ մունիցիպալիտետներում առկա են սոցիալական աջակցության բավականին բազմազան տեսակներ: Հաշվի առնելով օգնության բովանդակությունը՝ հնարավոր է դրանք պայմանականորեն խմբավորել ըստ հետևյալ բովանդակության.

- I. **Միանվագ դրամական օգնություն** - իրավունքներ կրող խմբերին ուղիղ դրամական փոխանցումներ տարեկան մեկ անգամ կամ միանվագ,
- II. **Ոչ դրամական միանվագ օգնություն** - իրավունքներ կրող խմբերի ստացված միանվագ օգուտ (ծառայությունների կամ ապրանքների տեսքով),

- III. **Դրամական համակարգային (ամենամսյա, եռամսյակային) օգնություն** - իրավունքներ կրող խմբերին ուղիղ դրամական փոխանցումներ, որոնք ունեն համակարգված տեսք,
- IV. **Ոչ դրամական համակարգային օգնություն (ամենամսյա, եռամսյակային, սեզոնային)** - իրավունքներ կրող խմբերի ստացված համակարգված տեսք ունեցող օգուտ (ծառայություն, վառելափայտի կամ կոմունալ ծառայությունների վաուչեր):

Ստորև բերված աղյուսակը (#7) ներկայացնում է 8 թիրախային մոնիցինգայլիտետների սոցիալական և առողջապահական ծառայությունների վերլուծությունը՝ կապված իրավունքներ կրող խմբերի հետ: Աջակցության տարբեր տեսակները կազմում են 106 օգնություն, որոնցում միավորված են 8 մոնիցինգայլիտետներ: Նշված օգնության ավելի քան 64%-ը կենտրոնացած է միանվագ դրամական օգնության վրա (I տիպի օգնություն): Մոնիցինգայլիտետների աջակցության երկրորդ տեսակը ոչ դրամական համակարգային աջակցությունն է (IV տիպի աջակցություն)՝ 22%: Օգնության հաջորդ տեսակը ոչ դրամական միանվագ օգնությունն է (9%), իսկ ամենացածր տոկոսը ներկայացնում է դրամական համակարգային օգնությունը՝ 4%: Նշենք, որ միայն Ծալկայի մոնիցինգայլիտետն ունի միանվագ օգնություններ և ծրագրերից ոչ մեկը համակարգային բնույթ չի կրում: Եթե միավորենք I և II տիպի օգնությունները, որոնք բովանդակությամբ նման են, ապա մոնիցինգայլ օգնության 74%-ը միանվագ օգնություն է, որն ուղղված է միայն խոցելի վիճակում գտնվող մարդկանց հիմնական կարիքների ժամանակավոր բավարարմանը: Մյուս կողմից, համայնքային ռեսուրսների միայն 24%-ն է ուղղվում զարգացմանն ու ներուժի իրացմանը, որն ունի համակարգային բնույթ (տե՛ս աղյուսակ #7):

Դրամական և ոչ դրամական միանվագ աջակցության կառավարումը կապված է մոնիցինգայլիտետի կողմից ավելի քիչ վարչական ռեսուրսների հետ: Այս ծրագրերն ընդգրկում են բնակչության զգալի մասը՝ ի տարբերություն նպատակային և համակարգված ծրագրերի, որոնց դեպքում կանխորոշված է թիրախային շահառուների խումբը և նրանց թիվը: Նաև նպատակային համակարգային տիպի ծրագրերին, մի կողմից, անհրաժեշտ են համապատասխան հմտություններ ունեցող կադրեր, իսկ մյուս կողմից՝ ավելի շատ վարչական ռեսուրսներ ծրագրերի իրականացման և մոնիտորինգի համար:

Աղյուսակ #7

Իրավունքներ կրող խմբեր	Մոնիցինգի պալիտես							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Քարթլի					
	Ախալցխի խե	Նինոծմիլիսդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմախիսի	Թեթրիծղարոն	Մանենուկի	Ծալկա
1. Հատուկ կարիքներ ունեցող անձինք								
1.1. Որբեր և ծնողական խնամքից զրկված երեխաներ	I, IV	I	I	I		III	I, II	I, II
1.2. Հաշմանդամություն ունեցող անձինք	I, IV	I	I, III, IV	I	I, IV	I, II	I, II	I
1.3. Ընտանեկան խնամքից զրկված, ինքնասպասարկման սահմանափակ կարողություններով չափահաս անձինք								
1.4 Խնամակալից զրկված անձինք	I, IV	I	I		II		II	I
1.5.Անօթևան երեխաներ								
2.Աղքատ (սոցիալապես անապահով) ընտանիքներ	I, II	I		I, IV		I, II, IV	I, II	I
3. Անօթևան անձինք	IV	I, IV	IV	IV	I	I		I
4. Երեխաներ	I, IV	I	I	I, IV		I, IV	I	I
5. Կանայք								
6. Ազգային փոքրամասնություններ								
6.1. Կրոնական փոքրամասնություններ								
6.2. Էթնիկ փոքրամասնություններ								
7. Էկոմիգրանտներ								
8. Մեծահասակներ	I		I	I		I	I	I
9. Տեղահանվածներ	IV			I, IV		I	I	
10. Բազմազգակ ընտանիքներ	I	I	I	I, IV		I		I
11.Միայնակ ծնող	IV	I		I	I	I	I	
12. Վետերաններ	I	I	I	I		I, II	I	I
13.Առողջության պահպանության կարիք ունեցող խմբեր	I, IV		I, IV	I, IV	I, IV	I, IV	I, IV	
14. Բռնության զոհի կարգավիճակ ունեցող անձինք		III	I, IV			I		
15. Ուսանողներ		I	III	I			I	

Ելակետային հետազոտության շրջանակներում բացահայտվել են բնակչության կարիքները սոցիալական և առողջապահական ուղղությամբ: Քանակական հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվածների հիմնական մասը (81%) չի օգտվում մոնիցինգի պալ **սոցիալական ծառայություններից** (Սամցխե-Ջավախեթի՝ 88%, Քվեմո Քարթլի՝ 75%): Պետական (կենտրոնական) ծառայություններից չօգտվելու մակարդակը շատ ավելի ցածր է (26%, Սամցխե-Ջավախեթի՝ 24%, Քվեմո Քարթլի՝ 29%): Հետազոտության մասնակիցների կողմից նշված մոնիցինգի պալ սոցիալական ծառայությունների շարքում ընդգծվել են միանվագ (դրամական կամ այլ տեսակի) օգնությունը (6%) և սոցիալապես անապահով երեխաների և

Նորածինների աջակցության ծրագրից օգտվողների խումբը (4%): Իսկ պետական (կենտրոնական) ծառայություններից՝ ծերության կենսաթոշակը (29%), պետական բժշկական ապահովագրությունը (20%), կոմունալ սուբսիդիաները (18%) (տես աղյուսակ #8, #9): Հարցվողները հիմնականում ստանում են ցանկացած տեսակի օգնություն (և՛ մոնիցինգայալ, և՛ կենտրոնական) ժամանակին և, հետևաբար, գոհ են մատուցվող ծառայություններից (մոնիցինգայալ ծառայություններից գոհ է միջինը 63%-ը, իսկ պետական (կենտրոնական) ծառայություններից՝ միջինը 70%-ը):

Աղյուսակ #8

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք հետևյալ մոնիցինգայալ սոցիալական ծառայություններից որևէ մեկից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ոչ, ոչ մեկից	87.8%	74.9%
Միանվագ (կանխիկ կամ այլ տեսքով) սոցիալական օգնություն	3%	9.6%
Անօթևանների համար կացարանի տրամադրում (սոցիալական կացարան)	–	0.1%
Բազմազավակ ընտանիքների/միայնակ ծնողների սոցիալական օգնություն	1.7%	5.4%
Սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագիր	4.8%	3.9%
Հաշմանդամություն ունեցող անձանց օգնություն	2%	1.2%
Անվճար երթևեկություն	–	0.6%
Անվճար ճաշի ծրագիր	0.3%	–
Տնային խնամքի ծրագիր	–	–
Տարբեր տեսակի բնությունների գոհերի օգնություն	–	–
Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների և վերադարձվածների և նրանց ընտանիքների օգնություն	0.3%	1.6%
Աջակցություն բնական աղետներից տուժած և դժվարին կենսապայմաններում գտնվող մարդկանց	–	0.1%
Ծիսական օգնություն	–	0.5%
Նոր ամուսնացած ընտանիքների խրախուսում	–	0.1%
Առցանց ուսուցման ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների կրթության հասանելիություն	–	1.3%
Ուսանողների և մարզիկների օգնություն	–	0.5%
Այլ	0.1%	0.2%

Աղյուսակ #9

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք ստորև թվարկված պետական (կենտրոնական) սոցիալական ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ոչ, ոչ մեկից	23.9%	29.1%
Տարիքային կենսաթոշակ	29.2%	28.8%
Հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ երեխաների) կենսաթոշակ	3.7%	3.6%
Հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոններ	–	0.3%

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք ստորև թվարկված պետական (կենտրոնական) սոցիալական ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթի (N=600)
Խնամակալություն չունեցողի կենսաթոշակ	0.1%	0.4%
Վետերանների Կենսաթոշակ	1.3%	1%
Հարկադիր տեղահանված անձանց օգնություն	0.2%	1.1%
Պետական բժշկական ապահովագրություն	21.1%	18.6%
Սոցիալական աջակցություն միայնակ թոշակառուներին	0.2%	0.4%
Կոմունալ ծառայությունների սուբսիդիաներ	20.1%	15.8%
Սոցիալական ծառայությունների վաուչերներ (օր.՝ առողջապահական կենտրոնի վաուչեր, վաղ միջամտության վաուչեր, սննդի վաուչեր և այլն)	0.1%	0.7%
Երեխաների վաղ զարգացման ծրագիր	–	0.1%
Երեխաների վերականգնողական/վերականգնողական ծրագիր	0.1%	–
Այլ	–	0.1%

Սոցիալական ուղղությամբ ֆոկլուս խմբերի շրջանակներում կարծիք է հնչել, որ կորոնավիրուսով պայմանավորված համաճարակի պայմաններում անհրաժեշտ է մշակել այնպիսի սոցիալական ծրագրեր, որոնք կբարձրացնեն անապահով ընտանիքներում ապրող ուսանողների կրթություն ստանալու մոտիվացիան, որը կարող է արտահայտվել դասագրքերի կամ այլ անհրաժեշտ պարագաների տրամադրմամբ: Ֆոկլուս խմբերում նշվել է, որ մոնիցինգայլիտետների դերը կարևոր է մասնագիտական և բարձրագույն կրթության խթանման առումով: Մասնավորապես, մոնիցինգայլիտետը պետք է աջակցի գերազանց և մոտիվացված երիտասարդներին, ինչը կարող է արտահայտվել, օրինակ՝ կրթության համաֆինանսավորմամբ, բնակարանի ապահովմամբ և այլն:

Քանակական հետազոտության շրջանակում հարցվածների մեծամասնությունը չի օգտվում ոչ մոնիցինգայլ (89%, Սամցխե-Ջավախեթի - 94%, Քվեմո Բարթի - 85%), ոչ էլ պետական (կենտրոնական) (54%, Սամցխե-Ջավախեթի - 61%, Քվեմո Բարթի - 47%) **առողջապահական ծառայություններից**: Հետազոտությանը մասնակցած անձանց կողմից նշված մոնիցինգայլ ծառայություններից առանձնացվել է անվճար դեղորայքի տրամադրումը (7%), իսկ պետական ծառայություններից գյուղի բժիշկը (19%) և շտապ օգնությունը (14%) (տես աղյուսակ #10, #11): Հարցվածները ստանում են առողջապահական ծառայությունները ժամանակին և հիմնականում գոհ են մատուցվող ծառայություններից՝ և՛ մոնիցինգայլ (միջին ցուցանիշը՝ 65%), և՛ պետական (կենտրոնական) մակարդակով (միջին ցուցանիշը՝ 72%): Խնդրահարույց են ճանաչվել առևտրի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական և հոգեկան առողջության ծառայությունները, որոնց գրանցման ընթացակարգերը համեմատաբար բարդ են, իսկ հարցվողների բավարարվածության մակարդակը՝ ցածր:

Աղյուսակ #10

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք ստորև թվարկված մոնիցինգայլ առողջապահական ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթի (N=600)
Ոչ, ոչ մեկից	93.9%	85%
Անվճար դեղերի տրամադրում	3.8%	9.4%

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվո՞ւմ եք ստորև թվարկված մոնիցինգայալ առողջապահական ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթևի (N=600)
Աուտոիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների վերականգնում	0.4%	0.1%
Տարբեր քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց օգնություն (քաղցկեղ, երիկամային անբավարարություն, լեյկոզ և այլն):	–	1.3%
Թանկարժեք հետազոտությունների ֆինանսավորում (համակարգչային տոմոգրաֆիա, Էզոֆագաստրոդուոդենոսկոպիա, կորոնարոգրաֆիա, կրծքագեղձի քաղցկեղի գենետիկ հետազոտություն և այլն)	0.5%	1.7%
Հաշմանդամություն ունեցող անձանց և սոցիալապես անապահովների բժշկական օգնություն	0.9%	0.4%
Այլ	0.5%	2%

Աղյուսակ #11

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվո՞ւմ եք ստորև թվարկված պետական (կենտրոնական) առողջապահական ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթևի (N=600)
Ոչ, ոչ մեկից	60.7%	46.6%
Հիվանդությունների վաղ հայտնաբերում և զննում	0.1%	0.9%
Իմունիզացիա (պլանավորված պատվաստումներ)	7.1%	11.7%
Տուբերկուլյոզի կառավարում	0.1%	–
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կառավարում	–	0.1%
Մոր և երեխայի առողջություն (բարձր ռիսկային հղիների, ծննդաբերողների և կանանց բուժում, գենետիկ պաթոլոգիաների վաղ հայտնաբերում, նորածինների լսողության սկրինինգային հետազոտություն, հղիներին դեղորայքի տրամադրում և այլն)	–	1.2%
Թմրամոլությամբ տառապող հիվանդների բուժում	–	–
Հոգեկան առողջություն	0.7%	0.7%
Դիաբետի կառավարում	0.7%	1.8%
Շտապ օգնություն	11.5%	15.3%
Գյուղի բժիշկ	17.5%	20.4%
Քրոնիկ հիվանդությունների բուժման համար դեղերի տրամադրում	1.4%	1.4
Այլ	0.1%	–

Ելակետային հետազոտության որակական բաղադրիչի շրջանակներում պարզվել է, որ խնդրահարույց է որակյալ բժիշկ մասնագետից խորհրդատվություն ստանալը և դեղերի առկայությունը: Կարևոր է ընդլայնել դեղերի ցանկը և ֆինանսավորել առողջական խնդիրներ ունեցող մարդկանց համար կարևոր նշանակություն ունեցող դեղամիջոցները: Խորացված հարցազրույցների հիման վրա պարզվել է, որ Բուխսիի մոնիցինգալիտետի ընդհանուր բյուջեի ամենամեծ բաժինը ծախսվում է առողջապահական ծառայությունների վրա, սակայն այդ գումարը բավարար չէ բնակչության կարիքները հոգալու համար՝ հնարավոր չէ ամբողջությամբ ֆինանսավորել վիրահատությունները և հետազայում նրանց տրամադրել դեղամիջոցներ: Երկու տարածաշրջանում էլ անցկացված ֆոկուս խմբերում հնչել է հետևյալը՝

մունիցիպալ առողջապահական ծառայություններից դժգոհությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետվիրահատական վերականգնումը չի ֆինանսավորվում, ինչը կապված է զգալի ծախսերի հետ: Ըստ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, բյուջեի ավելացմամբ հնարավոր կլինի բարելավել առկա սոցիալական և առողջապահական ծառայությունները:

Հիմնական հետազոտության շրջանակներում պարզվել է, որ պետական ծառայություններն ավելի հասանելի են էթնիկ վրացիներին, քան էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Հավասար հասանելիության առումով խնդրահարույց է ճանաչվել լեզվական խոչընդոտի պատճառով առաջացած տեղեկության բացակայությունը: Այս պատճենին ավելի հաճախ են բախվում ավագ սերնդի ներկայացուցիչները, քանի որ նրանք չեն տիրապետում կամ վատ են տիրապետում վրացերենին: Այս առումով «1+4 կրթական ծրագիրը» գնահատվում է որպես դրական ծառայություն, որի միջոցով ավելի շատ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդներ են սովորում վրացերեն:

Աղյուսակ #12

Իրավունքներ կրող խմբեր	Մունիցիպալիտետ							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Զարթի					
	Ախալցխե	Նինոծմինդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմանիսի	Թեթրիծղարո	Մառնեուլի	Ծալկա
1. Հատուկ կարիքներ ունեցող անձինք								
1.1. Որբեր և ծնողական խնամքից զրկված երեխաներ	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն և ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն և ոչ դրամական միանվագ օգնություն
1.2. Հաշմանդամություն ունեցող անձինք	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն, դրամական միանվագ օգնություն և դրամական համակարգային օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն և ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն և ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն
1.3. Ընտանեկան խնամքից զրկված, ինքնասպասարկման սահմանափակ								

Իրավունքներ կրող խմբեր	Մունիցիպալիտետ							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Զարթի					
	Ախալցխի	Նինոծմինդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմանիսի	Թեթրիծղարո	Մառնեուլի	Ծալկա
կարողություններով չափահաս անձինք								
1.4 Խնամակալից զրկված անձինք	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Ոչ դրամական միանվագ օգնություն		Ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն
1.5.Անօթևան երեխաներ								
2.Աղքատ ընտանիք	Ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն		միանվագ դրամական օգնություն և միանվագ ոչ դրամական օգնություն	միանվագ դրամական օգնություն և միանվագ ոչ դրամական օգնություն	Դրամական միանվագ օգնություն
3. Անօթևան անձ	Ոչ դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն

Իրավունքներ կրող խմբեր	Մունիցիպալիտետ							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Զարթի					
	Ախալցխե	Նինոծմինդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմանիսի	Թեթրիծղարո	Մառնեուլի	Ծալկա
4. Երեխաներ	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն		Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն
5. Կանայք								
6. Ազգային փոքրամասնություններ								
6.1. Կրոնական փոքրամասնություններ								
6.2. Էթնիկ փոքրամասնություններ								
7. Էկոմիգրանտներ								
8. Մեծահասակներ	Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն
9. Տեղահանվածներ	Ոչ դրամական միանվագ օգնություն			Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	

Իրավունքներ կրող խմբեր	Մունիցիպալիտետ							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Զարթի					
	Ախալցխի	Նինոծմինդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմանիսի	Թեթրիծղարո	Մառնեուլի	Ծալկա
10. Բազմազավակ ընտանիքներ	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն
11. Միայնակ ծնող	Ոչ դրամական համակարգային օգնություն	Դրամական միանվագ օգնություն		Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	
12. Վետերաններ	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն		միանվագ դրամական օգնություն և միանվագ ոչ դրամական օգնություն	Դրամական միանվագ օգնություն	Դրամական միանվագ օգնություն
13. Առողջոպահական ծառայության կարիք ունեցող անձինք	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն		Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	միանվագ դրամական օգնություն և միանվագ ոչ դրամական օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն	
14. Սոցիալապես անապահովության ընդհանուր կատեգորիայի շահառուներ	Դրամական միանվագ օգնություն					Ոչ դրամական միանվագ օգնություն		

Իրավունքներ կրող խմբեր	Մունիցիպալիտետ							
	Սամցխե-Ջավախեթի		Քվեմո Զարթի					
	Ախալցխե	Նինոծմինդա	Բոլնիսի	Գարդաբանի	Դմանիսի	Թեթրիծղարո	Մառնեուլի	Ծալկա
15. Ընտանեկան բռնության զոհի կարգավիճակ ունեցող անձ		Դրամական միանվագ օգնություն	Ոչ դրամական համակարգային օգնություն և դրամական միանվագ օգնություն			Դրամական միանվագ օգնություն		

1.5. Գործող օրենսդրության և գործող պրակտիկայի վերլուծություն՝ հաշվի առնելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման հինգ հիմնական աշխատանքային սկզբունքները

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումն առաջնորդվում է հինգ հիմնական աշխատանքային սկզբունքներով, որոնք հանդիսանում են գործող օրենսդրության գործնականում կիրառման գնահատման գործիք: Գոյություն ունեցող պրակտիկան գնահատելիս, ըստ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման, ելակետը հենց մարդիկ են՝ իրավունք կրող խումբը, որի վրա անմիջականորեն ազդում է օրենքը և դրա կիրառման հետ կապված վարույթը:

• Մասնակցություն

Վրաստանի օրգանական օրենքը՝ տեղական ինքնակառավարման օրենսգիրքը, սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության երաշխիքներն ու ձևերը:

Մունիցիպալ մարմինները և այդ մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը, ստեղծել կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ քաղաքացիների ընդունելության, նրանց հետ հանդիպումների, մունիցիպալ մարմինների գործունեությունը նրանց ներգրավման համար (այդ թվում՝ կոլեգիալ հասարակական հաստատությունների ժողովներում), որպեսզի քաղաքացիները մասնակցեն որոշումների կայացմանը և որոշումների կայացման գործընթացը լինի թափանցիկ:

Մունիցիպալիտետն իրավասու է տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի բյուջեում հաշվի առնել համապատասխան ծրագրեր:

Օրենսդրությունը ճանաչում է տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության 5 ձև.

- ✓ Բնակավայրի ընդհանուր ժողով,
- ✓ Պետիցիա,
- ✓ Քաղաքացիական խորհրդատուների խորհուրդ,
- ✓ Մասնակցություն մունիցիպալիտետի սակրեբուլոյի և սակրեբուլոյի հանձնաժողովի նիստերին,
- ✓ Մունիցիպալիտետի քաղաքապետի և սակրեբուլոյի անդամի կատարած աշխատանքների հաշվետվությունների լսում:²⁸

Բոլոր հինգ ձևերն էլ տեղի են, ինչը թույլ է տալիս և՛ մունիցիպալիտետին, և՛ հատուկ շահագրգիռ խմբերին սոցիալական աջակցության ծրագրերը հարմարեցնել իրենց շահառուներին: Բացի այդ, հնարավոր է օգտագործել մասնակցության լրացուցիչ ձևեր և մասնակցության լավ պրակտիկա, օրինակ՝ սոցիալական հարցերով զբաղվող քաղաքապետի խորհրդատուների խորհրդի ստեղծում, որը հիմնականում բաղկացած է սոցիալական ծրագրերի շահառուների ներկայացուցիչներից և նրանց իրավապաշտպաններից: Նշված

²⁸ Վրաստանի օրգանական օրենքը՝ տեղական ինքնակառավարման օրենսգիրք - հոդված 85

մեխանիզմը հաջողությամբ իրականացվում է տարբեր մոնիցինգայլիտետներում, սակայն հետազոտության թիրախային մոնիցինգայլիտետները դրանց թվում չեն: Քաղաքապետի սոցիալական հարցերի խորհրդում ընդգրկված են բոլոր կատեգորիաների շահառուների ներկայացուցիչներ, ովքեր ստանում և (կամ) կարող են ստանալ սոցիալական աջակցություն մոնիցինգայլ ծրագրերից: Այս մեխանիզմն օգտագործվում է գոյություն ունեցող սոցիալական ծրագրերի վերլուծության և նոր ծրագրեր ստեղծելու համար:

Թիրախային մոնիցինգայլիտետներում սոցիալական ուղղությամբ աշխատում է ատյանի ձևաչափի երկու գործիք՝ քաղաքապետարանի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով աշխատող խորհուրդը» և Գենդերային հավասարության խորհուրդը: Ինչպես նաև, լրացուցիչ ծառայությունների մատուցման վրա կենտրոնացած մեխանիզմ է «Կանանց սենյակը»:

Մոնիցինգայլիտետի գենդերային հավասարության խորհուրդ

Գենդերային հավասարության խորհուրդը ստեղծվել է Վրաստանի «Գենդերային հավասարության մասին» օրենքի հիման վրա, որի նպատակն է ապահովել խտրականության անթույլատրելիությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծել համապատասխան պայմաններ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների, ազատությունների և հնարավորությունների իրացման համար, նպաստել խտրականության կանխարգելմանը և վերացմանը: Նշված օրենքի հիման վրա մոնիցինգայլիտետի համար սահմանվել են հետևյալ լիազորությունները.

- Մոնիցինգայլիտետի սակրեբուլոն ստեղծում է գենդերային հավասարության մոնիցինգայլ խորհուրդ՝ մոնիցինգայլիտետում գենդերային հարցերի շուրջ համակարգված աշխատանք ապահովելու և Վրաստանի խորհրդարանի կողմից ստեղծված գենդերային հավասարության մշտական խորհրդարանական խորհրդի հետ համակարգված աշխատանքն ապահովելու համար,
- Մոնիցինգայլիտետում գենդերային հավասարության խնդիրներն ուսումնասիրելու, իրականացվելիք աշխատանքները պլանավորելու և միջոցառումները համակարգելու նպատակով քաղաքապետը որոշում է համապատասխան քաղաքապետարանում գենդերային հավասարության հարցերով պատասխանատու հանրային ծառայողին,
- Մոնիցինգայլիտետի բյուջեն, սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, մոնիցինգայլ ծրագրերն ու պլանները պետք է մշակվեն այնպես, որ բացառվի խտրականության ցանկացած ձև:²⁹

Մոնիցինգայլիտետների կողմից պրոակտիվ հրապարակված, հայցված հանրային տեղեկատվության, Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից իրականացված հետազոտության և www.lsgindex.org պորտալի վերլուծության հիման վրա պարզվել է, որ.

- Բոլոր թիրախային մոնիցինգայլիտետներում ստեղծվել է գենդերային իրավահավասարության խորհուրդ, որը պարբերաբար հանդիպումներ է անցկացնում, ինչպես նաև հաստատում է համապատասխան ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր,

²⁹ Գենդերային հավասարության մասին Վրաստանի օրենք, հոդված 13

- Մունիցիպալիտետների բյուջեները չեն ներառում ֆինանսական միջոցներ գեներացիային հավասարության գործողությունների ծրագրերի իրականացման համար,
- Չնայած գեներացիային հավասարության խորհրդի աշխատանքին, թիրախային մունիցիպալիտետների բյուջեում գեներացիային հավասարության հարցերով բյուջետային ծրագիր կամ ենթածրագիր չկա,
- Գեներացիային հավասարության խորհուրդները չեն մասնակցում ոչ քաղաքականության պլանավորմանը, ոչ էլ մունիցիպալ ծառայությունների մատուցմանը,
- Չնայած տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությանը, թիրախային մունիցիպալիտետներում 2022 թվականի բյուջեները «գեներացիային զգայուն չեն»:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP), Գերմանիայի միջազգային համագործակցության հասարակությունը (GIZ) և այլ դոնորներ տեղեկատվական-խորհրդատվական և փորձագիտական աջակցություն են տրամադրում թիրախային մունիցիպալիտետների գեներացիային հավասարության խորհուրդներին, սակայն մունիցիպալիտետների ընթացիկ տարվա բյուջետային ծրագրերը չեն ներառել համապատասխան միջոցներ, որոնք կնպաստեն գեներացիային հավասարության նպատակների իրականացմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և ՀՈՒԱ խորհուրդ

2020 թվականին Վրաստանի խորհրդարանն ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքը, որի 35-րդ հոդվածը սահմանում է Վրաստանի մունիցիպալիտետների համար հատուկ պարտավորություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Մասնավորապես, մունիցիպալ մարմինները/հիմնարկները պարտավոր են.

- իրենց իրավասության սահմաններում մշակել և իրականացնել անկախ կենսաապահովման և սոցիալական ներառման ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ, և հաշվի առնելով նրանց անհատական կարիքները,
- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը տեղական մակարդակով հասարակական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և սպորտային կյանքում,
- Օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը համապատասխան միջոցառումների ծրագրերի/նախագծերի մշակման գործընթացին՝ որոշումների կայացման և ընդունման բոլոր փուլերում,
- խթանել հաշմանդամություն ունեցող անձանց տեղական կազմակերպությունների գործունեությունը, որոնցում հաշմանդամություն ունեցող անձինք և/կամ նրանց օրինական ներկայացուցիչները ներկայացնում են ինչպես կազմակերպության անդամների, այնպես էլ ղեկավար/որոշումներ կայացնող մարմինների անդամների մեծամասնությունը, և որոնք աշխատում են հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի որակը բարելավելու ուղղությամբ,
- Համապատասխան մունիցիպալիտետի տարածքում համապատասխան գործառույթներ ունեցող այլ հիմնարկների/կազմակերպությունների հետ համատեղ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի համար

տեղեկատվական-խորհրդատվական և օժանդակ ծառայությունների ներդրմանը և զարգացմանը:

Մունիցիպալիտետի լիազորությունները կարգավորվում են բարձրագույն օրգանական օրենքով՝ «Տեղական ինքնակառավարման օրենսգիրք», որում հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված սահմանվում են միայն միջավայրի հարմարեցման մունիցիպալիտետների պարտավորությունները: Օրենքով սահմանված մնացած պարտավորությունները փաստացի համարվում են պատվիրակված լիազորություններ, թեև դրանք չեն ուղեկցվում կենտրոնական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցներով: Նշված հանգամանքները մունիցիպալիտետին իրավական և ֆինանսական հնարավորություն չեն տալիս կատարելու օրենքի պահանջները:

Թիրախային մունիցիպալիտետներում ստեղծվել են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով համակարգող-խորհրդատվական խորհուրդներ, որոնք հիմնականում համալրված են մունիցիպալիտետի քաղաքապետարանի հանրային ծառայողներով և այն ղեկավարում է փոխքաղաքապետերը: Խորհուրդները պարբերաբար նիստեր են անցկացնում, քննարկում տարբեր նախաձեռնություններ, սակայն անմիջական թիրախային խումբը՝ հաշմանդամություն ունեցող անձինք, ավելի քիչ են ներգրավված մունիցիպալիտետի բյուջետային ծրագրերի և քաղաքականության փաստաթղթերի մշակման գործընթացում:

Ելակետային հետազոտությանը մասնակցած մարդկանց մեծ մասը (39%) դժգոհ է իրենց բնակավայրի պլանավորումից (Զվեմո Զարթի՝ 43%, Սամցխե-Ջավախեթի՝ 35%): Ինչպես պարզվում է, բնակավայրը պլանավորելիս հաշվի չեն առնվել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, քանի որ հարցվածների 56%-ի կարծիքով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայր չկա կամ չգիտեն, թե արդյոք այն կա (Սամցխե-Ջավախեթի - 62%, Զվեմո Զարթի - 50%): Խնդրահարույց են թեքահարթակների, չհարմարեցված շենքերի և սայլակից օգտվողների համար տրանսպորտի բացակայությունը:

Վերոնշյալ տեղեկությունը ֆոկլուս խմբի շրջանակներում հաստատել են բոլոր ութ մունիցիպալիտետների բնակիչները: Նրանց կարծիքով, հասարակական հաստատությունները/տարածքները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հարցվածների մի մասը նշել է, որ վերջերս կառուցված հասարակական հաստատությունները հարմարեցված են սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար, սակայն հարցվողները չգիտեն, թե որքանով է հարմարեցումը համապատասխանում գործող ստանդարտին, քանի որ չեն տեսել հարմարեցված միջավայր օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց:

«Կանանց սենյակ»

«Կանանց սենյակ» է կոչվում մունիցիպալ ծառայությունը, որի նպատակը կանանց ակտիվացնելն ու հզորացնելն է: Նախագիծը ներառում է մի քանի ծառայություններ՝ գրադարան, համակարգչային և ինտերնետ ծառայություններ, երեկոյան պարապմունքներ, մանկական անկյուն, հատուկ ուսումնական ծրագրեր և կրթական միջոցառումներ: Այն հանդիսանում է կանանց տեղեկատվություն և ծառայություններ տրամադրելու ռեսուրս՝ խրախուսելով կանանց մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացմանը: «Կանանց սենյակի» շրջանակներում գործում է նաև կանանց և աղջիկների մասնագիտական տնտեսական հզորացման նախաձեռնություն: «Կանանց սենյակը» գտնվում է մունիցիպալիտետի վարչական շենքում և սպասարկում է մունիցիպալիտետի բնակավայրերում բնակվող կանանց: Ծրագիրն իրականացվում է USAID-ի ֆինանսական

աջակցությամբ՝ Կոնֆլիկտների և բանակցությունների միջազգային հետազոտական կենտրոնի և Mercy Corp կազմակերպության հետ համագործակցությամբ:

Կանանց սենյակներ են ստեղծվել հետազոտության բոլոր թիրախային մոնիցինգայլիտետներում՝ Դմանիսի, Ծակլայի, Թեթրիծղարոյի, Նիսոժմինդայի, Բոլնիսի, Մառնեուլիի, Գարդաբանիի և Ախալցխիսեի մոնիցինգայլիտետներում: Նշված ծառայությունը ստեղծվել է 2015-2016 թվականներին և մինչ օրս հաջողությամբ գործում է:

2022 թվականի դրությամբ բոլոր մոնիցինգայլիտետներում ավարտվել է մոնիցինգայլիտետի և դոնոր կազմակերպության հարաբերությունները կարգավորող պայմանագրի ժամկետը:

Կանանց սենյակները ծառայությունների կարևոր տարածք և գործիք են կանանց հզորացման և որոշումների կայացման գործընթացում հնարավոր մասնակցության համար: Գոյություն ունեցող իրականությունը հետևյալն է.

- Մոնիցինգայլիտետներում «Կանանց սենյակի» համար տարածք է հատկացված և այն պատշաճ կերպով կահավորված է, բայց կան նաև բացառություններ (Գարդաբանի), որտեղ կանանց սենյակը փակվել է և չունի համապատասխան տարածք՝ քաղաքապետարանում ստեղծված տեխնիկական խնդիրների պատճառով և ոչ բուն ծառայության անարդյունավետության պատճառով,
- Մոնիցինգայլիտետում «Կանանց սենյակի» մենեջերի որակավորում (նրանց ուսուցումն իրականացվում է դոնորների կողմից),
- Բարձր է «Կանանց սենյակի» ղեկավարների մոտիվացիան,
- «Կանանց սենյակի» ղեկավարներն աշխատում են քաղաքապետարանի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ համակարգված,
- «Կանանց սենյակի» մենեջերի աջակցությամբ և ներգրավվածությամբ նախապատրաստվել և իրականացվել են մի շարք նախագծեր՝ ուղղված կանանց տնտեսական հզորացմանը,
- «Կանանց սենյակ»-ն օգնում է մոնիցինգայլիտետում հանրությանը տեղեկացնել գենդերային հավասարության մասին և աջակցում է խոցելի խմբերին,
- Վրաստանում ստեղծվել է «կանանց սենյակների» միավորում, որն օգնում է բացահայտել մոնիցինգայլիտետներում առկա ընդհանուր խնդիրները, համակարգել դրանք լուծելու ուղիների շուրջ աշխատանքները և համատեղ նախագծեր իրականացնել:

Կան Էական մարտահրավերներ, որոնք պահանջում են հրատապ արձագանք՝

- Մոնիցինգայլիտետները դեռ լիովին չեն հասկանում տեղական ինքնակառավարման դերը գենդերային հավասարության խթանման գործընթացում: Նշենք, որ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) ֆինանսավորմամբ, «Մերսի Զորփա» Վրաստանը՝ Փոքր Կովկասյան դաշինքների ծրագրի (ALCP) շրջանակներում, պատրաստել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գենդերային հավասարության քաղաքականության իրականացման ուղեցույց սկզբունքներ:
- Գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ քաղաքապետարանի և սակրեբուլոյի պաշտոնյաների տեղեկացվածությունը դեռևս ցածր է, ինչը խոչընդոտում է գենդերային հավասարությունը խթանող որոշումների ընդունմանը,
- Քաղաքապետարանի քաղաքացիական ծառայողները, ոչ կոմերցիոն իրավաբանական անձանց ներկայացուցիչները և սակրեբուլոյի աշխատակազմի աշխատակիցները գենդերային հավասարության հարցերով վերապատրաստման կարիք ունեն,


- «Կանանց սենյակը» քաղաքապետարանի կառուցվածքում կարգավիճակ չունի և կանոնակարգված չէ քաղաքապետարանի իրավական ակտով, հետևաբար այն դեռևս ընկալվում է որպես քաղաքապետարանի կառուցվածքի մաս և մունիցիպալ ծառայություն,
- «Կանանց սենյակի» մենեջերի աշխատանքի ձևը տարբեր է՝ ըստ մունիցիպալիտետների - մի մասը պրոֆեսիոնալ քաղաքացիական ծառայողներ են (Աջարիայի ինքնավար Հանրապետության և Կախեթի մունիցիպալիտետներում), իսկ մի մասը՝ աշխատանքային պայմանագրով աշխատակից (Քվեմո Քարթլի տարածաշրջանի մունիցիպալիտետներում),
- «Կանանց սենյակի» հետ կապված որոշում կայացնելու համար մունիցիպալիտետների ղեկավար անձինք սպասում են կենտրոնական իշխանության հրահանգների/հանձնարարականների, չնայած այն հանգամանքին, որ ինքնակառավարումն անկախ է և կարող է որոշել «Կանանց սենյակի» կարգավիճակը՝ իր պատասխանատվությամբ,
- Քաղաքապետարանի պաշտոնյաների և հանրային ծառայողների կողմից «Կանանց սենյակի» նկատմամբ հակասական վերաբերմունք կա. «Կանանց սենյակի» կողմից առաջարկվող ծառայություններն ընդունելի են և աջակցվում են, սակայն անվանումն ինքնին թերահավատ վերաբերմունք է «Կանանց սենյակի» նկատմամբ,
- Քաղաքապետարանում «Կանանց սենյակի» մենեջերի հաշվետվողականությունը չի դիտարկվում և մենեջերի աշխատանքը չի գնահատվում համապատասխան ղեկավարի կողմից,
- Առկա մարդկային ռեսուրսները բավարար չեն «Կանանց սենյակի» կողմից ծառայությունների արդյունավետ մատուցման համար՝ աշխատում է ընդամենը մեկ մարդ,
- Բյուջեում գենդերային հավասարության համար նախատեսված միջոցների բացակայությունը մարտահրավեր է «Կանանց սենյակի» գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների արդյունավետ իրականացման համար:

Քաղաքացիների մասնակցության հավելյալ գործիքներ


Մունիցիպալիտետը չի սահմանափակվում միայն օրենսգրքով նախատեսված մասնակցության ձևերով: Ե՛վ քաղաքապետը, և՛ սակրեբուլոն իրավասու են ներկայացնել օրենսդրությանը չհակասող մասնակցության ձևեր:

2017 թվականին Խորհրդատվության և ուսուցման կենտրոնի (CTC), Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտի (IDFI) և Կառավարման համակարգերի զարգացման կենտրոնի (MSDC) կողմից՝ Բաց հասարակության հիմնադրամի (Վրաստան) ֆինանսական աջակցությամբ, մշակվել է տեղական ինքնակառավարման ինդեքսը (www.lsgndex.org), որը գնահատում է բոլոր ինքնակառավարման մարմինների թափանցիկությունը, քաղաքացիների մասնակցության մեխանիզմներն ու գործելակերպը: Նշված ցուցանիշի տվյալները ցույց են տալիս, որ թիրախային տարածաշրջաններում (Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի) մասնակցության և թափանցիկության ցուցանիշները զգալիորեն ցածր են ընդհանուր ազգային ցուցանիշից, որն առանց այդ էլ բավականին ցածր է և քաղաքացիների մասնակցության ու թափանցիկության բաղադրիչներում 24% է կազմում (տես պատկեր #1, #2, #3):


შათსეტი #1 – შათსეტი-შათსეტი



შათსეტი #2 – შათსეტი-შათსეტი



შათსეტი #3 – 8 შათსეტი-შათსეტი



Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում առկա սոցիալական ծառայությունների հիմնական հետազոտության և համատեքստի վերլուծության շրջանակներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ անցկացված ֆոկլուս խմբերից կարելի է տեսնել, որ մասնակցության հիմնական խոչընդոտները հետևյալն են.

- ✓ Բնակչությանը չեն տրամադրվում իրենց հասկանալի լեզվով տեղեկատվություն: Մեծ թվով քաղաքացիներ չեն տիրապետում պետական լեզվին նույնիսկ հաղորդակցման մակարդակով.
 - «Մանկապարտեզներում վրացերենի ուսուցումը խնդիր է, կամ ընդհանրապես չի դասավանդվում, կամ՝ ոչ ճիշտ, քանի որ կադրային խնդիր կա» (ֆոկլուս խմբի ձայնագրություն, քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ):
- ✓ Տեղեկատվության և որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէ.
 - «Մոնիցինգի պալիտեսները տեղեկատվություն չունեն կոնկրետ խմբի կարիքների և այն մասին, թե ինչպես կարելի է բավարարել այդ կարիքները, հաղթահարել խոչընդոտները, որոնք թույլ կտան ինտեգրվել, վերաինտեգրվել հասարակությանը և այն օգտվել այն բարիքներից, որոնցից մենք բոլորս ենք օգտվում: Այս տեղեկատվության բացակայությունը հանգեցնում է մասնատված, սխալ ուղղորդված սոցիալական գործունեության» (ֆոկլուս խմբի ձայնագրություն, քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ):
- ✓ Կանայք մասնակցության գործընթացում հատկապես խտրականության ենթարկված խումբ են՝ հաշվի առնելով առկա կրոնական և էթնիկ համատեքստը.
 - «Ոչ ոք երբեք չի հանդիպում կանանց: Նորություններ, ընդհանրապես տեղեկություն ստանում են միայն տղամարդկանցից: Տղամարդիկ սովորաբար որոշում են, թե ում օգտին են քվեարկելու կանայք ընտրություններում» (ֆոկլուս խմբի ձայնագրություն, քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ):
- ✓ Ընդհանուր կրթության ցածր մակարդակ:
- ✓ Ծառայություն մատուցողի և ծառայություն ստացող բնակչության/համայնքի միջև կապի բացակայություն:
- ✓ Բնակավայրի ընդհանուր ժողովների անցկացման ընթացակարգերի բարդ և չափից ավելի պաշտոնական բնույթ: Այդ պատճառով կառավարությունը գործնականում չի օգտագործում որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցության գործիքը, ոչ էլ դրա համար իրական լծակներ է տալիս քաղաքացիներին, թեև բոլոր թիրախային մոնիցինգի պալիտեսները հաստատել են ընդհանուր ժողովի կանոնադրությունը:
- ✓ Ծանր սոցիալ-տնտեսական ֆոն, որն առաջացնում է քաղաքացիների դեմոտիվացիա.
 - «Սոցիալական խնդրի պատճառով շատ ընտանիքներ քանդվեցին: Կանայք կրթություն չունեն, ուստի ստիպված են երեխաներին թողնել հոր տանը, քանի որ բռնության զոհ դարձած կնոջը հետ է տանում նրա կենսաբանական ծնողը»:
 - «Անցյալ տարի ուսումնասիրել ենք Նինոծմինդա-Ախալքալաքի մոնիցինգի պալիտեսների մոտ 30 գյուղերի կարիքները, որոնց մեծամասնությունը կապված է սոցիալական խնդիրների հետ: Մասնավորապես, այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ճանապարհները, բնական գազը, խմելու և ոռոգման ջուրը, կապը տեղական ինքնակառավարման մարմինների հետ» (ֆոկլուս խմբի ձայնագրություն, քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ):

- ✓ Քաղաքացիների մասնակցության ձևերի և մեխանիզմների մասին տեղեկատվության բացակայություն.

- «Ուզում եմ ասել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար շատ դժվար է շփվել տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Դիմումը կամ նրանց կողմից ներկայացված ցանկացած խնդրանք ընկալվում է որպես անլուրջ» (Ֆոկուս խմբի ձայնագրություն, քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ):

Ելակետային հետազոտության արդյունքները վկայում են տեղական մակարդակով որոշումների կայացմանը բնակչության մասնակցության ցածր մակարդակի մասին, ինչը նույնպես հաստատում է վերը նշված պատճառները: Հարցման մասնակիցների 40%-ի կարծիքով՝ քաղաքացիները չեն մասնակցում տեղական ինքնակառավարման որոշումների կայացմանը (Քվեմո Քարթլի՝ 53%, Սամցխե-Ջավախեթի՝ 27%) (տես աղյուսակ #13):

Աղյուսակ #13

Որքանով են քաղաքացիները մասնակցում տեղական ինքնակառավարման մակարդակով որոշումների կայացման գործընթացին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ընդհանրապես չեն մասնակցում	7.6%	26.6%
Ավելի շատ չեն մասնակցում, քան մասնակցում են	19%	26.8%
Հավասարապես մասնակցում են և չեն մասնակցում	19.2%	17.7%
Ավելի շատ մասնակցում են, քան չեն մասնակցում	24.4%	11.2%
Լիարժեք մասնակցում են	9.6%	1.9%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	20%	15.8%

Ինչպես պարզվել է հարցման միջոցով, հարցվածների 27%-ի կարծիքով, տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացի և բնակչության կարիքների միջև կապ չկա (Սամցխե-Ջավախեթի՝ 16%, Քվեմո Քարթլի՝ 37%): Ըստ յուրաքանչյուր երրորդ հարցվողի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման մեջ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը մեծացնելուն ուղղված միջոցառումներ հիմնականում չեն իրականացվում: Բնակչության կարծիքով՝ կարևոր է բնակչության հետ ավելի հաճախակի հանդիպումներ կազմակերպել, ավելի շատ գումար հատկացնել մունիցիպալիտետների խնդիրները լուծելու համար, բնակչությանը տեղեկացնել ընթացիկ գործընթացների մասին:

Հարցումը պարզել է, որ բնակչության շփումը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ցածր է. հարցվածների մեծամասնությունը (82%) վերջին 2 տարում չի դիմել նրանց՝ կոնկրետ խնդրի լուծման համար (Սամցխե-Ջավախեթի՝ 84%, Քվեմո Քարթլի՝ 80%): Հակառակ փորձ ունեցող մարդիկ շփվել են հետևյալ խնդիրների շուրջ. սոցիալական/խոցելի խմբերի (հաշմանդամներ, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, հարկադիր վերաբնակների) հետ կապված միջավայրի բարելավում, ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն), սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն), առողջապահության հետ կապված հարցեր (տե՛ս Աղյուսակ #14): Սակայն կարևոր է, որ 40%-ի փորձի համաձայն՝ ինքնակառավարումը որևէ խնդիր չի լուծել (Սամցխե-Ջավախեթի՝ 36%, Քվեմո Քարթլի՝ 42%):

Աղյուսակ #14

Վերջին 2 տարում ի՞նչ հարց(եր)ի հետ կապված եք դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=98)	Քվեմո Քարթլի (N=117)
Տարբեր սոցիալական/խոցելի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, ներքին տեղահանվածներ) հետ կապված միջավայրի բարելավում	15.2%	12.4%
Ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն)	27.6%	16.8%
Տարածքի բարեկարգում (թափոնների հեռացում, կանաչապատում և այլն)	5.8%	9.4%
Սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն)	33.1%	23.5%
Առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր	15.3%	22.8%
Տան/հողամասի գրանցում	1%	6.3%
Այլ	1.3%	8.9%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	0.8%	-

Բացի այդ, վերջին 1 տարվա ընթացքում հարցվածների մեծ մասը (57%) չի մասնակցել որևէ քաղաքացիական/հասարակական գործունեության, հատկապես Սամցխե-Ջավախեթիում (65%) (50% Քվեմո Քարթլիում): Ֆոկուս խմբերում պարզվեց, որ տեղական ինքնակառավարման իրականացմանը բնակչության չներգրավվելու հիմնական պատճառը տեղեկության պակասն է՝ նրանք տեղեկություն չունեն իրենց իրավունքների մասին, մասնավորապես, թե ինչպես և ինչ ձևով կարող են մասնակցել: Քննարկման որոշ մասնակիցների գնահատմամբ՝ բնակչության մասնակցությունը միայն ձևական բնույթ է կրում և դժվար է իրական ազդեցություն ունենալ: Այսպիսով, բնակչությունը նիհիլիզմի պատճառով չի մասնակցում: Խոցելի վիճակում գտնվող հարցվածների սոցիալ-տնտեսական վիճակը, կենտրոն հասնելու հեռավորությունը, լեզվական խոչընդոտը, ինտեգրման ցածր մակարդակը՝ խոչընդոտ են մասնակցության համար: Քաղաքացիական/հասարակական գործունեությանը չմասնակցելու նմանատիպ պատճառներ են հայտնաբերվել նաև հարցման քանակական բաղադրիչում՝ ժամանակի սղություն (21%), այն զգացումը, որ հարցվողի ակտիվությունը ոչինչ չի փոխի (Սամցխե-Ջավախեթի՝ 24%, Քվեմո Քարթլի - 24%) (տե՛ս աղյուսակ #15): Կարևոր է նշել, որ և՛ տեղական ինքնակառավարման մարմինների, և՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամների գնահատմամբ, հենց բնակավայրի ընդհանուր ժողովներն են այն գործիքը, որը պետք է դառնա բնակչության հետ շփման հիմնական հարթակը:

Աղյուսակ #15

Ի՞նչ եք կարծում, որ վերջին 1 տարում ինչո՞ւ չեք մասնակցել ոչ մի քաղաքացիական գործունեության: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=384)	Քվեմո Քարթլի (N=302)
Ժամանակի սղության պատճառով	16.3%	26.5%
Այնպիսի զգացողություն ունեի, որ իմ գործունեությունը ոչինչ չի փոխի	24%	23.8%

Ի՞նչ եք կարծում, որ վերջին 1 տարում ինչո՞ւ չեք մասնակցել ոչ մի քաղաքացիական գործունեության: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Չավախեթի (N=384)	Քվեմո քարթլի (N=302)
Ես բավարար տեղեկատվություն չունեմ իմ իրավունքների մասին	17.5%	8.8%
Կարծում եմ, որ ՏԻՄ-ը պետք է զբաղվի այս հարցերով	20.7%	25.2%
Ես կարծում եմ, որ հասարակական կազմակերպությունները պետք է զբաղվեն այդ հարցերով	4%	1%
Այլ	1.8%	0.9%
Հրաժարվում եմ/ դժվարանում եմ պատասխանել	15.7%	13.9%

Հետաքրքիր էր նաև Հանրային պաշտպանի ներկայացուցչի հետ հարցազրույցը, ով կիսում է ՔՀԿ-ների ներկայացուցիչների այն կարծիքը, որ լեզվի խնդիրը խոչընդոտ է մասնակցության համար և հավելյալ նշում է տարբեր էթնիկ խմբերի միջև ինտեգրման ցածր մակարդակը: Որպես խնդիր է սահմանվել նաև մունիցիպալիտետների կողմից բնակչության հետ կապի ուղիների սակավությունը կամ բացակայությունը: Սոցիալական ծրագրերը կազմվում են ոչ թե մասնակցության, այլ ազդեցիկ և ակտիվ շահագրգիռ խմբերի լոբբինգի միջոցով: Մունիցիպալիտետներն այս առումով փորձում են շտկել իրավիճակը, սակայն դա բավարար չէ, և անհրաժեշտ են ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնք ներառում են քաղաքապետարանի համապատասխան ծառայության (սոցիալական ծառայության) գործառնական փոփոխություններ և սոցիալական ծրագրերի գնահատման ուղղությամբ նրանց գործառնական մեծացում: Ինչպես նաև, սոցիալական հարցերով աշխատող խորհուրդների արդյունավետության բարձրացումը, ինչը Էականորեն կապված է նման խորհուրդներում ծրագրերի շահառուների և նրանց իրավունքների պաշտպանների ներկայացվածության բարձրացման հետ: Կարևոր է նաև ավելացնել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը տեղական ինքնակառավարման մարմիններում, խորհրդատվական խորհուրդներում: Նշված ինստիտուցիոնալ փոփոխությունները Էական ազդեցություն կունենան մունիցիպալիտետներում գենդերային և ՀՈՒԱ խորհուրդների արդյունավետության վրա:

Վրաստանի պետնախարարի աշխատակազմի քաղաքացիական իրավահավասարության դեպարտամենտի ներկայացուցիչը, ում հետ խորացված հարցազրույց է անցկացվել, հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերում հիմնական խոչընդոտող գործոն է համարում լեզվական խոչընդոտը: Նրա կարծիքով՝ «Քվեմո քարթլիի և Կախեթիի շրջաններում պետական հոգաբարձուի վարչակազմի հետ ձևավորված խորհրդակցական խորհուրդներ, որոնք գործում են 2017 թվականից և ներառում են ինչպես տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ, այնպես էլ հասարակական կազմակերպություններ: Դա շատ լավ հաղորդակցման հարթակ է», սակայն այստեղ պետք է նշել, որ այս հարթակը միավորում է պետական հանձնակատարին և բոլոր համապատասխան մունիցիպալիտետների քաղաքապետերին, սակրեբուլոյի նախագահին և փոխնախագահին և քաղաքացիների մասնակցության գործիք չէ: Նրա կարծիքով. «Քաղաքացիներն ակտիվորեն ներգրավված են, գուցե ոչ բոլորը, բայց ակտիվորեն ներգրավված են ակտիվ մարդիկ, ովքեր հետաքրքրված են ընթացիկ խնդիրներով»: Շատ հաճախ ենք տարածաշրջաններ այցելություններ ունենում, հանդիպում ենք նաև գյուղացիների հետ, հանդիպումներ ունենում ենք նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ, և շատ դեպքերում լինում են ձևաչափեր, որոնք

ենթադրում են քաղաքացիների ներգրավում, სრულ ხնარավորություն იქნეს ყარბიჟს ართახაჟთელი:»

• **Հաշվետվողականություն**


Մունիցիպալիտետի քաղաքապետը և սակրեբուլոյի անդամները պարտավոր են տարին առնվազն մեկ անգամ՝ ոչ ուշ, քան նոյեմբերի 1-ը, սակրեբուլոյի համապատասխան որոշմամբ սահմանված կարգով կազմակերպել հանրային հանդիպումներ մունիցիպալիտետի ընտրողների հետ և სრულ ներկայացնել կատարված աշխատանքների հաշվետվությունը, հաշվետվության քննարկման ժամանակ պատասխանել մունիցիպալիտետի ընտրողների հարցերին:

Մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողն իրավունք ունի ներկա գտնվել քաղաքապետի և սակրեբուլոյի անդամի հրապարակային հաշվետվությունների քննարկմանը:

Մունիցիպալիտետի համապատասխան մարմինները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով ապահովել մունիցիպալիտետի քաղաքապետի և սակրեբուլոյի անդամների հաշվետվությունների հրապարակումը:³⁰

Ինչպես ֆոկուս խմբերում տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները նշեցին, «պլանները բավականին լավ են և հավակնոտ, սակայն մունիցիպալ մարմինները դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններ ընդհանրապես չեն ներկայացնում: Հնարավոր չէ հասկանալ գենդերային խորհրդի գոյության նպատակը, տեսանելի չէ, թե ինչ են անում»: Նույնը հաստատում է տեղական ինքնակառավարման ինդեքսը՝ www.lsgindex.org, իրականում օրենսգրքի պահանջները չեն պահպանվում, և մունիցիպալիտետներում ընտրված անձինք չեն բավարարում հաշվետվողականության նվազագույն պահանջները: Քվեմո Քարթլիի մունիցիպալիտետներում 2021 թվականին կատարվել է հաշվետվողականության մասին օրենքով և լավ պրակտիկայով նախատեսված պահանջների միայն 31%-ը, ինչը 2017 թվականի համեմատ կտրուկ նվազել է (65%): Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում ցուցանիշն ավելի ցածր է և կազմում է 16% (տե՛ս գծապատկեր #4):

Պատկեր #4 – Հաշվետվողականությունն ըստ տարածաշրջանի



³⁰ Կրաստანի օրգანական օրենք, տեղական ինքնակառավարման օրենսգիրք - հոդված 88

Ինչպես նաև, մունիցիպալիտետում կրկնակի ծախսեր կան՝ պետության կողմից կենտրոնական մակարդակով իրականացվող նույն տեսակի ծրագրերի ֆինանսավորում: Օրինակ, Մառնեուլիի մունիցիպալիտետը ֆինանսավորում է ծանր հաշմանդամություն ունեցող անձի համար սայլակի գնումը այն ժամանակ, երբ նշված ծրագիրն իրականացվում է կենտրոնական կառավարության ծրագրի կողմից՝ վաուչերային ֆինանսավորման տեսքով:

- **Խտրականության արգելում**

Վրաստանի օրենսդրական մակարդակում ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք արգելում են բոլոր տեսակի խտրականությունը պետական պաշտոնյաների կողմից կենտրոնական կամ տեղական մակարդակով դատավարության ընթացքում: Ինչպես նաև, Վրաստանի կառավարությունը լրացուցիչ օրենքներ է ընդունել որոշ խոցելի խմբերի համար (կանայք, երեխաներ, ազգային փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող անձինք), որոնք ուղղված են բռնության և խտրականության բոլոր ձևերի վերացմանը:

Համաձայն Հանրային պաշտպանի 2021 թվականի «Ինքնակառավարման մարմինների սոցիալական և առողջապահական ծրագրերի համապատասխանությունը իրավահավասարության սկզբունքին» զեկույցի, մունիցիպալիտետի սոցիալական և առողջապահական ծրագրերում առկա են խտրականության բազմաթիվ փաստեր, որոնք նպաստում են կոնկրետ խմբերի նկատմամբ կարծրատիպերի ամրապնդմանը և/կամ մարդկանց խմբերին անհավասար պայմանների մեջ դնելուն:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող սոցիալական և առողջապահական ծրագրերում ակնհայտ է խտրականությունը խրախուսող և ստիգման ամրապնդող եզրույթների օգտագործումը: Օրինակ՝ «Էպիլեպտիկ», «պարկինսոնով հիվանդ», «աուտիզմով հիվանդ», «մանկական ուղեղային կաթվածով հիվանդ» (Բոլնիսիի մունիցիպալիտետ), «սայլակին գամված» (Գարդաբնի մունիցիպալիտետ), «խուլ» (Բոլնիսիի մունիցիպալիտետ), «հաշմանդամ» (Գարդաբանիի մունիցիպալիտետ), «Սնձան հիվանդություն» (Դմանիսիի մունիցիպալիտետ) տերմինները և այլն: Սխալ եզրույթների օգտագործումը նպաստում է նշված խմբերի նկատմամբ առկա ստիգմայի խորացմանը:

Նաև խտրական վերաբերմունք է դրամական միջոցների բաշխումը հավասար աստիճանի խոցելի խմբերի միջև՝ չհիմնավորված վարկանիշով: Օրինակ՝ ծանր հաշմանդամություն ունեցող անձինք և կույր անձինք, որոնք նույնպես ծանր հաշմանդամություն ունեցող անձինք են: Կուրությունը միայն ախտորոշում է, որի հիման վրա մարդուն շնորհվում է կարգավիճակ, այդ թվում՝ Բոլնիսիի և Դմանիսիի մունիցիպալիտետներում միջոցները տարբեր կերպ են բաշխվում, որտեղ առաջնահերթությունը տրվում է կույրերին:

Տեղական ինքնակառավարման ծրագրերում կան նաև գենդերային խտրականություն պարունակող գրառումներ: Օրինակ՝ ֆինանսական աջակցությունն ուղղվում է միայն միայնակ մորը, ինչը բացառում է միայնակ հոր համար համապատասխան նպաստը (Մառնեուլիի մունիցիպալիտետ):

Նաև խտրական կհամարվի այն փաստը, որ շատ դեպքերում մի ծրագրից օգտվող խոցելի խումբը չի կարող օգտվել մեկ այլ մունիցիպալ ծրագրից: Տվյալ դեպքում նրանք հաշվի չեն առնում մարդու խոցելիության բազմաթիվ պատճառները, ինչի պատճառով հնարավոր չէ նպաստել իրավունքների լիարժեք իրացմանը (Գարդաբանիի և Թեթրիծղարոի մունիցիպալիտետներ):

Վերլուծելով մոնիցինգայալ ծրագրերը՝ կարելի է տեսնել, որ բավականին շատ շահագրգիռ խմբեր, որոնք կարող են լինել խոցելի և սոցիալական աջակցության կարիք ունեն, պարզապես դուրս են մնացել: Ինչպես նշեց տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված ֆոկլուս խմբի մասնակիցներից մեկը, մոնիցինգայալ ծրագրերը հաշվի են առնում միայն այն խմբերի շահերը, որոնք ակտիվ են և որոշակի ազդեցություն ունեն տեղական մակարդակում: Այն փաստը, որ մոնիցինգայալ մակարդակում չկա ամուր ինստիտուցիոնալ մեխանիզմ, որը թույլ կտա տարբեր շահագրգիռ խմբերին արտահայտել իրենց կարիքները, արդեն իսկ բարձրացնում է ծրագրերի խտրական լինելու ռիսկը:

• **Հզորացում**

Մոնիցինգալիտետներում, օրենսդրության պահանջով կամ որպես լավ պրակտիկա, գործում են հաշմանդամություն ունեցող անձանց խորհուրդներ, քաղաքապետի խորհրդատվական խորհուրդ, «կանանց սենյակներ»: Սակայն, ինչպես նշում է հետազոտության քանակական բաղադրիչում ներգրավված հարցվողների մեծ մասը, այդ ձևերն անարդյունավետ են: Հետաքրքիր է հղում կատարել նաև Տեղական ինքնակառավարման ինդեքսին (www.lsgindex.org), ըստ որի 8 թիրախային մոնիցինգալիտետներում 2021 թվականի դրությամբ, օրենքից բացի լրացուցիչ մասնակցության մեխանիզմների կիրառման գրաֆիկում նշված է 0%: Գրեթե նույն իրավիճակն է Քաղաքացիական խորհրդատվական խորհրդի նախաձեռնությունները քաղաքապետին ներկայացման և քաղաքապետի կողմից Քաղաքացիական խորհրդատվական խորհրդին ռազմավարական փաստաթղթերի պարտադիր ներկայացման դեպքում (մասամբ բացառություն է Ախալցխի մոնիցինգալիտետը): Տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված ֆոկլուս խմբի համաձայն էլ է պարզ, որ խորհուրդների գոյությունը միայն ձևական է. *«Մենք գիտենք, որ տեղական մոնիցինգալիտետներում կան գենդերային և հաշմանդամություն ունեցող անձանց խորհուրդներ, սակայն դրանց գործունեությունը բավարար չէ արդյունավետության համար: Օրինակ՝ բռնության զոհ դարձած կանայք հաճախ են դիմում մեզ, և երբեմն նրանց խնդիրները լուծելու համար բավական է նրանց տեղեկատվություն տրամադրել ապաստարանների և տարբեր ծառայությունների առկայության մասին: Մոնիցինգալիտետներում առկա խորհուրդները կարող են ավելի ներգրավված և ակտիվ լինել այս ուղղությամբ: Նրանք կարող են ապահովել կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը տարբեր ծառայություններում: Հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում խորհուրդների աշխատանքը տապալվել է վերջին երկու տարիներին: Համաճարակի պատճառով ինտենսիվ հանդիպումներ չկարողացան անցկացնել, և դրանց հեռավար կազմակերպումը պատշաճ կերպով չէր ապահովվել»:*

• **Օրենքի հետ համապատասխանություն**

Տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական և առողջապահական ծրագրերից օգտվելու պայմանները շատ դեպքերում հակասում են Վրաստանի Սահմանադրության 33-րդ հոդվածի դրույթներին, ըստ որի՝ պետության մյուս քաղաքացիները և Վրաստանում բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ՝ ինչ Վրաստանի քաղաքացիները: Ինչպես նաև, համաձայն «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, Վրաստանում բոլոր

օտարերկրացիները հավասար են օրենքի առջև: Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Վրաստանում մշտապես բնակվող օտարերկրացին աջակցություն (կենսաթոշակ և այլ սոցիալական ապահովություն) ստանալու նույն իրավունքն ունի, ինչ Վրաստանի քաղաքացին: Համաձայն մոնիցինգայլ ծրագրային գրառումների՝ շատ դեպքերում ծրագիր հայցող անձը պետք է լինի Վրաստանի քաղաքացի կամ նշված մոնիցինգայլի տեսքով գրանցված անձ (մինչև վերջնաժամկետը):

Համաձայն հետազոտության շրջանակներում անցկացված ֆոկլուս խմբի արձանագրությունների և խորացված հարցազրույցների՝ նշված հարցը խնդրահարույց է Սամցխե-Ջավախեթիում բնակվող մեսխեթցիների համար - «Սամցխե-Ջավախեթիում ապրում են մեսխեթցիներ, որոնց մենք չէինք կարող ազգային փոքրամասնության դասել, քանի որ նրանք իրականում վրացիներ են: Նրանց հայրենադարձության գործընթացը սկսվել է պարտավորություններից հետո, բայց նրանց վիճակը բավականին բարդ է, քանի որ քաղաքացիություն ստանալու խնդիր ունեն, նրանք լեզուն չգիտեն և քաղաքացիություն ստանալու համար չեն կարող հանձնել լեզվի պետական թեստը: Գործարկված պարզեցված ընթացակարգերի միջոցով շատերը չկարողացան քաղաքացիություն ստանալ ժամանակի սղության պատճառով: Քաղաքացիությունից զրկված լինելն էլ ավելի մեծ խնդիրներ է ստեղծում ծառայությունների հասանելիության առումով: Առողջապահության և կրթության բազմաթիվ ծրագրեր կապված են քաղաքացիության հետ: Ծառայությունը ստանալու համար նրանք պետք է ավելի շատ գումար վճարեն: Այս ամենը մեզ կարող է հանգեցնել նրան, որ վերադարձած մարդիկ նորից լքեն Վրաստանը»:

Ելակետային հետազոտության ֆոկլուս խմբերի շրջանակներում գնահատվել է կորոնավիրուսի հետևանքով առաջացած համաճարակի ազդեցությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա: Պարզվել է, որ խոցելի վիճակում գտնվող անձինք ստացել են միանվագ օգնություն՝ կանխիկ դրամական օգնություն, սննդամթերքի տրամադրում առաքմամբ և այլն: Այսպիսով, հարցվողները գոհ են այս ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ցուցաբերած ուշադրությունից: Սակայն, որոշ գնահատականներով, կառավարության կողմից տրամադրված օգնությունը չի համապատասխանում համաճարակի պայմաններում ստեղծված կարիքներին:

Ելակետային հետազոտության քանակական բաղադրիչի հարցման շրջանակներում պարզվել է, որ հարցվածների 39%-ը գոհ է ինքնակառավարման մարմինների աշխատանքից (Սամցխե-Ջավախեթի՝ 48%, Զվեմո Քարթլի՝ 30%) (տես աղյուսակը #16): Սակայն խնդրահարույց են աշխատողների որակավորման մակարդակը, նեպոտիզմը, պասիվ շփումը բնակչության հետ և այլն:

Աղյուսակ #16

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Զվեմո Քարթլի (N=600)
Ծատ դժգոհ	3.7%	10.9%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	10.7%	24.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	36%	30.5%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	37.1%	17.7%
Ծատ գոհ	10.4%	12.5%
Հրաժարվում է / դժվարանում է պատասխանել	2%	3.8%

Համաձայն ռեգրեսիոն մոդելի, մոլեկուլային զործունեությունից առավել գոհ հարցվողներն են՝ ա) քաղաքում բնակվողները, բ) բարձր տարիքային խմբի ներկայացուցիչ անձինք, գ) վերջին 2 տարում առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով տեղական ինքնակառավարմանը դիմած անձինք, դ) ովքեր վերջին 1 տարվա ընթացքում մասնակցել են բնակավայրի ընդհանուր ժողովին:

Գլուխ 2. Թիրախային մոլեկուլային տեսությունում առկա կոմունալ ենթակառուցվածքների գնահատում

Ելակետային հետազոտության քանակական բաղադրիչում ներգրավված բնակչությունը գնահատել է մոլեկուլային տեսություն/բնակավայրի մոլեկուլային ենթակառուցվածքների վիճակը: Չնայած նրան, որ ըստ ֆոկուս խմբի մասնակիցների, մոլեկուլային տեսությունում վերջին տարիներին բարելավվել են կոմունալ և ճանապարհային ենթակառուցվածքները, ոռոգման ջրի անսարքությունը դեռևս խնդրահարույց է գյուղատնտեսությամբ զբաղվողների համար (բնակավայրերի մեծ մասում **կենտրոնական ոռոգման համակարգ** չի գործում (72%) (Սամցխե-Ջավախեթի - 85%, Բվեմո Բարթի - 67%)): Բվեմո Բարթիում ամռանը խմելու ջրի խնդիր կա: Բացի այդ, կոյուղու համակարգը նույնպես անսարք է, ինչը որոշ բնակավայրեր Էկոլոգիական վտանգի տակ է դնում: Քանակական հետազոտության հարցվածների մեծամասնությունը նշում է **կենտրոնական կոյուղու համակարգի** բացակայությունը (65%) (Սամցխե-Ջավախեթի՝ 52%, Բվեմո Բարթի՝ 78%):

Հարցման մասնակիցների մեծամասնությանը (97%) **Էլեկտրաէներգիա** է մատակարարվում օրական 24 ժամ (Սամցխե-Ջավախեթի՝ 98%, Բվեմո Բարթի՝ 93%): Դրա հզորությունը գոհացուցիչ է ինչպես ձմռանը, այնպես էլ մյուս եղանակներին: Հիմնականում, հետազոտության թիրախային բնակավայրերում գործում է **կենտրոնական գազատար** (Սամցխե-Ջավախեթի՝ 79%, Բվեմո Բարթի՝ 88%): Ընդհանուր առմամբ, հարցվածների 78%-ը գոհ է գազամատակարարման ծառայությունից (տե՛ս աղյուսակ 17):

Աղյուսակ #17

Որքանով եք գոհ գազամատակարարումից (նկատի ունենք և՛ կենտրոնական գազամատակարարումը, և՛ գազաբալոնները): (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=567)	Բվեմո Բարթի (N=579)
Շատ դժգոհ	4.5%	5.1%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	9.2%	4.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	7.5%	11.8%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	29.4%	22.1%
Շատ գոհ	49%	55.9%
Հրաժարվում է պատասխանել	0.3%	0.4%

Քանակական հետազոտությանը մասնակցած անձանց կեսից ավելին (53%) տնային տնտեսությանը ջուր մատակարարելու համար օգտագործում է տան (բնակարանի) ծորակի ջուրը (Սամցխե-Ջավախեթի՝ 58%, Բվեմո Բարթի՝ 48%), իսկ մեկ տասներորդից ավելին օգտագործում է տնից դուրս գտնվող ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակի ջուրը: Հարցվածների կարծիքով՝ խմելու ջուրը գալիս է գրեթե անընդհատ (Սամցխե-Ջավախեթի՝ 62%, Բվեմո Բարթի՝ 41%) և հիմնականում որակյալ է (41%): Կենցաղային

ջրամատակարարման համար ստացված ջրի քանակը գնահատվել է բավարար, իսկ ջրի վարձը՝ մատչելի:

Քանակական հետազոտությանը մասնակցած հարցվածների հիմնական մասը նշում է, որ դրանց բնակավայրում առկա է **փողոցների մաքրման և թափոնների հեռացման** պրակտիկա, ավելին, այն ունի գրեթե ամենօրյա բնույթ: Քվեմո Քարթլիի (20%) համեմատ Սամցխե-Ջավախեթին (48%) առանձնանում է փողոցների մաքրման պրակտիկայով: Այսպիսով, հարցվածների մեծ մասը (միջինում 74%) գոհ է վերոնշյալ կոմունալ ծառայություններից:

Գլուխ 3. Կլիմայի փոփոխություն և դրանից բխող առողջական խնդիրներ

Ելակետային հարցման քանակական կոմպոնենտին մասնակցած մարդկանց մեծ մասը (71%) տեղեկացված է կլիմայի փոփոխության մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 74%, Քվեմո Քարթլի՝ 68%): Հարցվածների հիմնական մասը նշում է երաշտների, անձրևների և քամիների հաճախականությունը շրջակա միջավայրի փոփոխության առումով: Քվեմո Քարթլիում գերակշռում է երաշտի հաճախականությունը (27%), իսկ Սամցխե-Ջավախեթիում՝ քամիների հաճախականությունը (24%):

Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ կլիմայի փոփոխությունը առողջության հետ կապված այնպիսի բացասական հետևանքներ չի առաջացնում, ինչպիսիք են վարակների տարբեր տեսակների տարածումը, վիրուսային հիվանդությունների առաջացումը/տարածումը, քաղցկեղի աճը և մահացության աճը: Սակայն, մյուս կողմից, յուրաքանչյուր երրորդ հարցվող կարծում է, որ կլիմայի փոփոխությունն առաջացնում է սրտի հիվանդությունների (32%) և ինսուլտի (31%) աճ, ինչը պայմանավորված է բացասաբար փոփոխված միջավայրով (տես աղյուսակ #18).

Աղյուսակ #18

Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մունիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնո՞ւմ է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքները (ըստ տարածաշրջանի)		Ը ն դի ա ն ր ա պ ես չի ա ռ ա ջ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ռ ա ջ ա ց ն ու մ է	Դ ժ վ ա ռ ա ն ու մ է/ հ ր ա ժ ա ր վ ու մ է պ ա տ ա ս խ ա ն ել
Տարբեր տեսակի վարակների տարածում, որոնց կրողները միջատներն ու անողնաշարավորներն են (օրինակ՝ մալարիա և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	28.8 %	27.9 %	16%	6.7%	9.7%	11%
	Քվեմո Քարթլի (N=412)	31.6 %	26.2 %	17.6 %	6.1%	6.4%	12%
Վիրուսային հիվանդությունների ծագումը/տարածումը (գրիպ, հեպատիտ C, ջրծաղիկ և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	24.9 %	20.6 %	20.6 %	7.4%	15%	11.4 %
	Քվեմո Քարթլի (N=412)	25.5 %	27.2 %	22.1 %	7.1%	7.1%	11%
Սրտի հիվանդությունների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սնունդ, բարձր ջերմություն և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	16.2 %	15.7 %	28.8 %	14.8 %	17.8 %	6.7%
	Քվեմո Քարթլի (N=412)	13.7 %	19.6 %	28.4 %	19.6 %	11.5 %	7.3%
Ինսուլտների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սնունդ, բարձր ջերմություն և այլն) Քաղցկեղի աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար	Սամցխե-Ջավախեթի (N=448)	15.2 %	17%	26.6 %	17.2 %	15.2 %	8.7%
	Քվեմո Քարթլի (N=412)	12.5 %	16.2 %	30.9 %	19.9 %	10.3 %	10.3 %

Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մունիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնո՞ւմ է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքները (ըստ տարածաշրջանի)		Ը ն դի ա ն ր ա պ ես չի ա ռ ա ջ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ռ ա ջ ա ց ն ու մ է	Դ ժ վ ա ռ ա ն ու մ է/ հ ր ա ժ ա ր վ ու մ է պ ա տ ա ս խ ա ն ել
փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սնունդ, բարձր ջերմություն և այլն)							
Մահացության աճ Ինսուլտների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սնունդ, բարձր ջերմություն և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	19.3 %	19.5 %	24.7 %	12.1 %	15.7 %	8.7%
	Քվեմո Բարթլի (N=412)	11.1%	12.3 %	39.1 %	15.2 %	8.4%	14%
Քաղցկեղի աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սնունդ, բարձր ջերմություն և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	18.2 %	24.5 %	19.6 %	13.5 %	12.8 %	11.5 %
	Քվեմո Բարթլի (N=412)	12.5 %	13.7 %	34.3 %	14.2 %	9.3%	15.9 %

Հարցվածների մեծամասնությունը (60%) կլիմայի փոփոխությունն իր տարածաշրջանի համար կարևոր խնդիր է համարում (Սամցխե-Ջավախեթի՝ 49%, Քվեմո Բարթլի՝ 72%): Մյուս կողմից, պետք է ընդգծել, որ Սամցխե-Ջավախեթիում հարցված մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդ մարդ շրջակա միջավայրի փոփոխությունները գնահատում է որպես աննշան:

Գլուխ 4. Հիմնական բացահայտումներ և ռեկոմենդացիաներ³¹

Բացահայտումներ

- Բնակչության սոցիալական պաշտպանությունը մոնիցիպալիտետի կամավոր լիազորությունների ձև է (բացառությամբ անօթևաններին ապաստան տրամադրելը), ինչը նշանակում է, որ տեղական ինքնակառավարումը բնակչության սոցիալական պաշտպանությունն ապահովելու ուղիղ պարտավորություն չունի: Նշված իրավիճակը խոցելի խմբերին դնում է անբարենպաստ վիճակում՝ արդյունավետորեն պաշտպանելու իրենց իրավունքները և շահերը:
- Թիրախային 8 մոնիցիպալիտետներն իրենց եկամուտների միջինում 4.82%-ը ծախսում են սոցիալական աջակցության ծրագրերի վրա:³² Եվ այս ամբողջ ռեսուրսը հիմնականում հատկացվում է բնակչության բժշկական աջակցության և միանվագ սոցիալական աջակցության կատեգորիաներին:
- Սոցիալական աջակցության հիմնական գործիքը հիմնականում միանվագ դրամական օգնությունն է և կենտրոնացած չէ համակարգային աջակցության մեխանիզմների մշակման վրա:
- Աջակցող սարքերի ենթածրագրի ծառայություններ մատուցողները հիմնականում կենտրոնացած են մայրաքաղաքում, ինչի պատճառով ծրագրից օգտվել ցանկացողները ստիպված են տարածաշրջանից Թբիլիսի հասնել:
- Կանայք և ազգային փոքրամասնությունները սոցիալական աջակցության անմիջական թիրախային խմբեր չեն:
- Ծալկայի մոնիցիպալիտետը միակ մոնիցիպալիտետն է, որտեղ գործող սոցիալական ծրագրերը միանվագ դրամական կամ ոչ դրամական են:
- Մոնիցիպալ սոցիալական ծրագրերը, շատ դեպքերում, խտրական բնույթ են կրում, ըստ ծրագրային արձանագրության՝ օգտագործվում են խտրական տերմիններ, առանց հիմնավորման, հաճախ նախապատվությունը տրվում է մի կոնկրետ խմբի, որը ըստ էության նույն պայմաններում է գտնվում ինչ մեկ այլ խումբ:
- Մոնիցիպալ սոցիալական ծրագրերը, շատ դեպքերում, կենտրոնական սոցիալական ծրագրերի կրկնօրինակում են, որտեղ արտացոլված չեն տեղական տարածաշրջանային առանձնահատկությունները: Օրինակ, մոնիցիպալիտետները համաֆինանսավորում են առողջական խնդիրներ ունեցող մարդկանց համար նախատեսված դեղամիջոցները կամ բժշկական վիրահատությունները, որոնք արդեն մեծապես ֆինանսավորվում են կենտրոնական կառավարության կողմից: Հետևաբար, այլ խոցելի վիճակում գտնվող մարդկանց կարիքներն ավելի քիչ են ուսումնասիրվում և համապատասխան ծրագրեր մշակվում:
- Կենտրոնական սոցիալական ծրագրերը թիրախային մոնիցիպալիտետներում մասամբ են գործում՝ համապատասխան կադրերի կամ ռեսուրսների բացակայության պատճառով, որոնք անհրաժեշտ են ծրագրերով նախատեսված նվազագույն չափանիշին հասնելու համար:

³¹ Ստորև թվարկված բացահայտումները վերաբերում են բոլոր թիրախային մոնիցիպալիտետներին: Եթե բացահայտումներից որևէ մեկը վերաբերում է կոնկրետ մոնիցիպալիտետում, դա ընդգծված է տեքստում:

³² Տվյալները հաշվարկված են 2022 թվականի մայիսի 29-ի դրությամբ:

- Կենտրոնական սոցիալական ծրագրերի ծառայություններ մատուցողները հիմնականում թփելիսիում գրանցված փորձառու կազմակերպություններն են, որոնք մասնաճյուղեր են բացել թիրախային մոնիցինգայալիտետներում: Փաստացի, տեղական կազմակերպությունների կողմից շահագրգռվածություն չկա գրանցվել որպես կենտրոնական սոցիալական ծրագրերի ծառայություններ մատուցող, ինչը պայմանավորված է անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսների ցածր առկայությամբ:
- Սոցիալական աջակցության ծրագրերից անհնար է որոշել սոցիալական աջակցության ձևի և դրա արդյունքի պատճառահետևանքային կապը:
- Սոցիալական օգնությունը տրամադրվում է ընտրովի շահագրգիռ խմբերի և նախապատվությունը տրվում է հատուկ խմբերին (հաշմանդամություն ունեցող անձինք, առողջապահական խնդիրներ ունեցողներ, անօթևաններ և աղքատներ, երեխաներ)՝ առանց համապատասխան հիմնավորման:
- Սոցիալական աջակցության ծրագրերի մշակման ժամանակ որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնվում ծրագրերի շահառուների և նրանց շահերը պաշտպանող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության արդյունավետ մեխանիզմները:
- Մոնիցինգայալիտետի բյուջետային ծրագրերը գնահատելիս պարզ է դառնում, որ որոշ դեպքերում ծրագրի արդյունքների չափման ցուցանիշներն ու չափորոշիչները սահմանված չեն կամ, որտեղ դրանք կան, շատ ընդհանուր են: Մոնիցինգայալիտետները չեն չափում և/կամ չեն հրապարակում ծրագրերի վերջնական արդյունքները:
- Սոցիալական աջակցության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը հիմնված չէ նախապես որոշված մեթոդաբանության վրա և/կամ մեթոդաբանությունը չափազանց ընդհանուր է և նկարագրում է միայն որոշումների կայացման գործընթացում ներգրավված կողմերին:
- Խոցելի խմբերի համար նախատեսված խորհրդակցական խորհուրդներում մեծամասնությունը մոնիցինգայալիտետի հանրային ծառայողներն են, և այդ խորհուրդները ղեկավարում են մոնիցինգայալիտետի բարձրաստիճան քաղաքական պաշտոնյաները: Սոցիալական աջակցության ծրագրերի շահառուները և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունները քիչ են ներկայացված:
- Մոնիցինգայալիտետները հաշվի չեն առնում քաղաքացիների մասնակցության և թափանցիկության ուղղությամբ կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ ստեղծելու պարտավորությունը (առցանց միջնորդություն, օգտատիրոջը հարմարեցված հեռավար տեղեկատվական ծառայություն սոցիալական ծրագրերի մասին և հեռավար դիմում ներկայացնելու հնարավորություն, այդ թվում՝ բյուջեի նախագծի քննարկման ժամանակ քաղաքապետի ներկայացուցիչների աշխատասենյակների օգտագործմամբ ծրագրի շահառուների ակտիվ տեղեկացում և նիստերին նրանց անմիջական մասնակցության հնարավորություն և այլն): Ունենալ նաև բյուջետային ծրագիր, որն աջակցում է քաղաքացիների մասնակցությանը, որն ավելի շատ հնարավորություններ կստեղծի խոցելի շահագրգիռ խմբերի մասնակցության համար:

Ռեկոմենդացիաներ

Մարդու իրավունքների վրա հիմնված 5 հիմնական սկզբունք	Ռեկոմենդացիաներ
Մասնակցություն	• Մշակել տեղական ծրագրերում, բյուջեներում մարդու իրավունքների և մասնակցության գործիքների մեյնսթրիմինգի մեթոդաբանություն: • Մոնիցինգայալ սոցիալական և առողջապահական ծառայությունները պետք է մշակվեն տեղական կարիքների հետազոտության և վերլուծության հիման վրա, ինչպես նաև համապատասխան պայմաններ ստեղծելով իրավունքներ կրող խմբերի համար՝ ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը: • Համապատասխան ռեսուրսների հատկացում տեղական մոնիցինգայալիտետներում գործող տարբեր խորհուրդներին՝ խորհուրդների կողմից մշակված ծրագրերն ու գործողություններն արդյունավետ իրականացնելու նպատակով:
Հաշվետվողականություն	• Բարձրացնել մոնիցինգայալիտետների և հանրային պաշտպանի գրասենյակի համագործակցությունը՝ հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմի ներդրման նպատակով: • Բարձրացնել համապատասխան խորհրդարանական հանձնաժողովների և խորհուրդների ներգրավվածությունը՝ մոնիտորինգի առումով, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականության մեխանիզմի իրականացման գործում:
Խտրականության արգելում	• Վրաստանի «Խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» օրենքի պահանջների հետ կապված՝ ծրագրերի ձևավորման համար պատասխանատու տեղական ինքնակառավարման անձնակազմը պետք է վերապատրաստվի խտրական պայմանները վերացնելու համար: Նաև անձնակազմը պետք է վերապատրաստվի խոցելի մարդկանց կարիքները բացահայտելու և առաջնահերթություններ սահմանելու հարցում, որպեսզի ֆինանսների և այլ ռեսուրսների բաշխման ժամանակ խտրական մոտեցում չլինի որևէ խմբի նկատմամբ:
Հզորացում	• Տեղական մակարդակում պետք է ստեղծվեն պիլոտային ծրագրեր՝ ուղղված էթնիկ, կրոնական փոքրամասնությունների և կանանց հզորացմանը: • Քաղաքացիական խորհրդատվական խորհուրդների կարողությունները և ներգրավվածությունը մեծացնելու համար պետք է ստեղծվեն լրացուցիչ իրավական և գործնական երաշխիքներ քաղաքականության և բյուջեի պլանավորման-իրականացման գործընթացում: • Կենտրոնական սոցիալական ծրագրերը մոնիցինգայալիտետների մակարդակով մշակելու համար պետք է հատկացվեն համապատասխան ռեսուրսներ (ֆինանսներ, տարածք), որոնք անհրաժեշտ են ծրագրի չափորոշիչին համապատասխանելու և ծառայությունը սկսելու համար:

Մարդու իրավունքների վրա հիմնված 5 հիմնական սկզբունք	Ռեկոմենդացիաներ
Օրենքի հետ համապատասխանությու ն	Տեղական ինքնակառավարման օրենսգիրքը պետք է ներդաշնակեցվի Վրաստանի Սահմանադրությանը, Վրաստանի օրենքներին (օրինակ՝ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին) և միջազգային համաձայնագրերին:

Հավելված #1 Ֆոկուս խմբերի մասնակից կազմակերպությունների ցանկ

- Սոցիալական արդարության կենտրոն (SJC),
- Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՆՏՕՃ),
- Ժողովրդավարության հետազոտությունների ինստիտուտ (DRI),
- Մատչելի միջավայր բոլորի համար (AEE),
- «Սափարի» միություն,
- Հանդուրժողականության և բազմազանության ինստիտուտ (TDI):

Հավելված #2 Որակական հետազոտության շրջանակներում կիրառված գործիքներ

Մարդու իրավունքների վրա հիմնված մեթոդի կիրառմամբ Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում ամկա սոցիալական ծառայությունների համատեքստի վերլուծություն

Խորացված հարցազրույցի գործիք

(Հանրային պաշտպանի գրասենյակի և Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակի ներկայացուցիչների համար)

Ողջույն, ես _____ եմ (հարցազրուցավարի անունն ու ազգանունը) և ներկայացնում եմ հետազոտական կազմակերպություն՝ Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտը: Մեր կազմակերպության նպատակն է ուսումնասիրել տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը Սամցխե-Ջավախեթի 2 մունիցիպալիտետներում (Ախալցխե և Նինոծմինդա) և Քվեմո Քարթլիի 6 մունիցիպալիտետներում (Մառնեուլի, Դմանիսի, Բոլնիսի, Ծալկա, Թեթրիծղարո և Գարդաբանի): Բացի այդ, կուսումնասիրվեն բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի տարբեր ծառայությունների հասանելիությունը և ներգրավվածությունը տեղական գործընթացներում: Նշված հետազոտությունն իրականացվում է Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանցի (CENN) պատվերով:

Հարցազրույցը կտևի մոտ 1 ժամ և կձայնագրվի, որպեսզի վերջնական վերլուծական զեկույցում ներառվի հետազոտության համար կարևոր բոլոր տեղեկությունները: Ձեր գաղտնիությունը կպաշտպանվի և ձայնագրությունները չեն հրապարակվի:

Ընորհակալություն, որ մասնակցում եք հետազոտությանը:

- Խնդրում եմ ներկայանալ: Ասեք ձեր անունը, որ կազմակերպությունն եք ներկայացնում, ինչ պաշտոն և պարտականություններ ունեք:

Մաս 1. Խոցելի խմբեր

1. Խնդրում եմ սահմանել Վրաստանում խոցելի խմբերի տեսակները/կատեգորիաները:
 - ✓ Ինչո՞ւ եք այս խումբ(ներ)ը համարում ամենախոցելին:
 - ✓ Ձեր կարծիքով որո՞նք են այս խմբերի ամենա ծառացած ամենակարևոր մարտահրավերները և ինչո՞ւ:
 - ✓ Ո՞ր խոցելի խմբերի ո՞ր իրավունքներն են հիմնականում խախտվում:

Մաս 2. Մունիցիպալ/կենտրոնական ծառայություններ

2. Ի՞նչ սոցիալական ծրագրեր/ծառայություններ կան հիմնականում ձեր նշած խոցելի խմբերի համար կենտրոնական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում:
3. Ձեր տեղեկությամբ որքանո՞վ է մատչելի մունիցիպալ ծառայությունների հասանելիությունը՝ հաշվի առնելով տեղի բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի

կարիքները: Ո՞ր ծառայություններն ունեն բարելավման կարիք մոնիցիպալիտետում/տարածաշրջանում:

4. Խնդրում եմ խոսել հիմնական խոչընդոտների մասին (եթե այդպիսիք կան), որոնց հանդիպում են տեղի բնակիչները, ներառյալ խոցելի խմբերի անդամները՝ տարբեր սոցիալական ծառայություններ, առողջապահական ծառայություններ, կրթական ծառայություններ, կոմունալ ծառայություններ, աշխատանք ստանալու/որոնման գործընթացում:
5. Ձեր կարծիքով, խոցելի խմբերի ո՞ր իրավունքների իրականացմանն են նպաստում կենտրոնական և մոնիցիպալ ծրագրերը:
6. Որքանո՞վ են ադեկվատ կերպով արձագանքում առկա սոցիալական և առողջապահական ծառայությունները խոցելի խմբերի կարիքներին, ինչո՞ւ ես այդպես կարծում:
7. Ձեր տեղեկություններով, համաճարակը՝ ծառայություններ ստանալու առումով, ի՞նչ ազդեցություն է ունեցել խոցելի խմբերի վրա: Ի՞նչ են արել տարածաշրջանային/տեղական իշխանությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Մաս 3. Հասանելիության բարելավում

8. Ձեր կարծիքով, սոցիալական և առողջապահական ծառայությունները հավասարապես հասանելի՞ են խոցելի և ոչ խոցելի խմբերին: Խնդրում եմ խոսք կոնկրետ թերությունների մասին: Ի՞նչ արդյունավետ քայլեր պետք է ձեռնարկվեն անհավասարության դեպքում:
9. Խնդրում եմ գնահատել տեղական իշխանությունների հաղորդակցման ռազմավարությունը՝ խոցելի խմբերի համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ:
10. Ձեր կարծիքով, ի՞նչ գործոններ պետք է հաշվի առնել առողջապահական և սոցիալական ծրագրեր մշակելիս, որպեսզի առաջարկվող ծառայությունները լիովին համապատասխանեն շահառուների, այդ թվում՝ խոցելի խմբերի կարիքներին:
11. Ինչպե՞ս կարող են բարելավվել առկա ծառայությունները/ծրագրերը/քաղաքականությունը՝ խոցելի խմբերի և այլ տեղական համայնքների բարեկեցությունն ապահովող/պաշտպանող ծառայություններն ավելի գործուն և արդյունավետ դարձնելու համար:

Մաս 4. Քաղաքացիների, այդ թվում՝ խոցելի խմբերի ներգրավումը տեղական ինքնակառավարման իրականացման գործում

12. Ձեր կարծիքով տեղական ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ո՞ր ձևերն են առավել տարածված, հինչո՞ւ:
13. Ձեր կարծիքով որքանո՞վ է արդյունավետ քաղաքացիների ներգրավվածությունը առկա խնդիրների լուծմանը, հատկապես խոցելի խմբերի հետ կապված:
14. Ի՞նչ եք կարծում, որո՞նք են հիմնական պատճառները, որ քաղաքացիները հրաժարվում են մասնակցել տեղական ինքնակառավարման իրականացմանը:
15. Ձեր կարծիքով, ի՞նչը կարող է խրախուսել և հետագայում աջակցել համայնքի ներգրավվածությանը սոցիալական ծառայությունների հետ կապված կարևոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման և շահերի պաշտպանության գործում:

Մաս 5. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության գնահատում՝ խոցելի խմբերի առնչությամբ

16. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է եղել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի համար անհրաժեշտ ծառայությունների բարելավման և հասանելիության բարձրացման գործընթացում:
17. Ո՞ր հիմնական ոլորտներում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները էական ներդրում ունեցել սոցիալական ծառայությունների զարգացման գործում: Կարո՞ղ եք կոնկրետ օրինակներ բերել:
18. Ձեր կարծիքով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ի՞նչ օգուտներ են բերում խոցելի խմբերին: Եվ հակառակը՝ բացասական բան տեսնու՞մ եք նրանց աշխատանքում:

Մաս 6. (Նշում. տվյալ մասը վերաբերում է միայն հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցչին) Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության գնահատում՝ խոցելի խմբերի առնչությամբ

19. Ինչպիսի՞ն էր/է Հանրային պաշտպանի գրասենյակի դերը բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի համար անհրաժեշտ ծառայությունների բարելավման և հասանելիության մեծացման գործընթացում:
20. Ո՞ր հիմնական ոլորտներում է Հանրային պաշտպանի գրասենյակն էական ներդրում ունեցել սոցիալական ծառայությունների մատչելիության բարձրացման գործում: Կարո՞ղ եք կոնկրետ օրինակներ բերել:
21. Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է անել Հանրային պաշտպանի գրասենյակը սոցիալական ծառայություններին խոցելի խմբերի հասանելիությունը մեծացնելու համար:

Մաս 7. (Նշում. տվյալ մասը վերաբերում է Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակին) Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերում Վրաստանի պետնախարարի գրասենյակի գործունեության գնահատում՝ խոցելի խմբերի առնչությամբ:

22. Ինչպիսի՞ն էր/է հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի դերը բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի համար անհրաժեշտ ծառայությունների բարելավման և հասանելիության մեծացման գործընթացում:
23. Ո՞ր հիմնական ոլորտներում է հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակն էական ներդրում ունեցել սոցիալական ծառայությունների մատչելիության բարձրացման գործում: Կարո՞ղ եք կոնկրետ օրինակներ բերել:
24. Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է անել հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակը սոցիալական ծառայություններին խոցելի խմբերի հասանելիությունը մեծացնելու համար:

- Հարցազրույցի վերջում կա՞ որևէ բան, որ կցանկանայիք ավելացնել այն ամենի վերաբերյալ, ինչի մասին խոսեցինք:

Հաջողության, շնորհակալություն:

Մարդու իրավունքների վրա հիմնված մեթոդի կիրառմամբ Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Զարթլիում առկա սոցիալական ծառայությունների համատեքստի վերլուծություն

Ֆոկուս խմբի գործիք՝ մարդու իրավունքների ոլորտում աշխատող և սոցիալական ծառայություններ մատուցող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար

Ողջույն, ես _____ եմ (հարցազրուցավարի անունն ու ազգանունը) և ներկայացնում եմ հետազոտական կազմակերպություն՝ Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտը: Մեր կազմակերպության նպատակն է ուսումնասիրել տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը Սամցխե-Ջավախեթի 2 մունիցիպալիտետներում (Ախալցխե և Նինոծմինդա) և Քվեմո Զարթլիի 6 մունիցիպալիտետներում (Մառնեուլի, Դմանիսի, Բոլնիսի, Ծալկա, Թեթրիժդարո և Գարդաբանի): Բացի այդ, կուսումնասիրվեն բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի տարբեր ծառայությունների հասանելիությունը և ներգրավվածությունը տեղական գործընթացներում: Նշված հետազոտությունն իրականացվում է Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանցի (CENN) պատվերով:

Ֆոկուս խումբը կտևի մոտ 1 ժամ և 30 րոպե, կձայնագրվի, որպեսզի վերջնական վերլուծական գեկույցում ներառվի հետազոտության համար կարևոր բոլոր տեղեկությունները: Ձեր գաղտնիությունը կպաշտպանվի և ձայնագրությունները չեն հրապարակվի:

Շնորհակալություն, որ մասնակցում եք հետազոտությանը:

Ներածություն - ծանոթանալ քննարկման մասնակիցներին

Խնդրում ենք տրամադրել ձեր մասին ընդհանուր տեղեկություններ՝

- Ձեր անունը,
- Ո՞ր կազմակերպությունն եք ներկայացնում,
- Ո՞րտեղ է գտնվում ձեր կազմակերպությունը,
- Ի՞նչ պրոֆիլով/ինչ խնդիրների շուրջ է աշխատում ձեր կազմակերպությունը;
- Ո՞րն է ձեր պաշտոնը և պարտականությունները:

Մաս 1. Սոցիալական և առողջապահական ծառայությունների գնահատում

1. Ինչպե՞ս կգնահատեք պետության քաղաքականությունը խոցելի խմբերի նկատմամբ (հաշմանդամություն ունեցող անձինք, ազգային փոքրամասնություններ, տարեցներ, սոցիալապես անապահովներ և այլն):
2. Ի՞նչ մարտահրավերներ և բացեր կան սոցիալական ծառայություններում, առողջապահական ծառայություններում, ենթակառուցվածքային ծրագրերում, կրթական ծառայություններում, կոմունալ ծառայություններում, ոլորտում մշակված քաղաքականության փաստաթղթերում, ուղեցույցներում, թե գործողությունների ծրագրերում:
3. Ձեր կարծիքով, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն առկա թերությունները շտկելու համար:
4. Ձեր կարծիքով, սոցիալական և առողջապահական ծառայությունները հավասարապես հասանելի՞ են խոցելի և ոչ խոցելի խմբերին: Խնդրում եմ խոսեք թե՛ կենտրոնական, թե՛ մունիցիպալ ծրագրերի կոնկրետ բացթողումների մասին: Ձեր կարծիքով, անհավասարության դեպքում ի՞նչ արդյունավետ քայլեր պետք է ձեռնարկվեն:

5. Ձեր տեղեկություններով՝ ինչպե՞ս են ծրագրվում, իրականացվում և գնահատվում տեղական և կենտրոնական իշխանությունների կողմից ծառայությունները: Կա՞ սպասարկման ստանդարտ, որով առաջնորդվում են: Ինչպե՞ս է գնահատվում/չափվում ծառայության որակը:
6. Խնդրում եմ գնահատել տեղական իշխանությունների հաղորդակցման ռազմավարությունը՝ խոցելի խմբերի համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ: Բացի այդ, խնդրում եմ քննարկել խոցելի խմբերի հետ ԲՀԿ-ների հաղորդակցման ռազմավարությունը:
7. Ձեր կարծիքով, առողջապահական և սոցիալական ծրագրեր մշակելիս ի՞նչ գործոններ պետք է հաշվի առնել, որպեսզի առաջարկվող ծառայությունները լիովին համապատասխանեն շահառուների, այդ թվում՝ խոցելի խմբերի կարիքներին:
8. Որքանո՞վ են ադեկվատ կերպով արձագանքում առկա սոցիալական և առողջապահական ծառայությունները խոցելի խմբերի կարիքներին: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
9. Ձեր տեղեկություններով, համաճարակը՝ ծառայություններ ստանալու առումով, ի՞նչ ազդեցություն է ունեցել խոցելի խմբերի վրա (հաշմանդամություն ունեցող անձինք, էթնիկ փոքրամասնություններ և այլն): Ի՞նչ են արել տարածաշրջանային/տեղական իշխանությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:
10. Ձեր տեղեկություններով, որքանո՞վ են հասանելի սոցիալական և առողջապահական ծառայությունները շահառուների համար:
11. Խնդրում եմ խոսել հիմնական խոչընդոտների մասին (եթե այդպիսիք կան), որոնց հանդիպում են տեղի բնակիչները, ներառյալ խոցելի խմբերի անդամները՝ տարբեր սոցիալական ծառայություններ, առողջապահական ծառայություններ, կրթական ծառայություններ, կոմունալ ծառայություններ, աշխատանք ստանալու/որոնման գործընթացում:
12. Ինչպե՞ս կարող են բարելավվել առկա ծառայությունները/ծրագրերը/քաղաքականությունը՝ խոցելի խմբերի և այլ տեղական համայնքների բարեկեցությունն ապահովող/պաշտպանող ծառայություններն ավելի գործուն և արդյունավետ դարձնելու համար:

Մաս 2. Քաղաքացիների, այդ թվում՝ խոցելի խմբերի ներգրավումը տեղական ինքնակառավարման իրականացման գործում

13. Ձեր կարծիքով տեղական ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ո՞ր ձևերն են առավել տարածված, հինչո՞ւ:
14. Ձեր կարծիքով որքանո՞վ է արդյունավետ քաղաքացիների ներգրավվածությունը առկա խնդիրների լուծմանը, հատկապես խոցելի խմբերի հետ կապված:
15. Ի՞նչ եք կարծում, որո՞նք են հիմնական պատճառները, որ քաղաքացիները հրաժարվում են մասնակցել տեղական ինքնակառավարման իրականացմանը:
16. Ձեր կարծիքով, ի՞նչը կարող է խրախուսել և հետագայում աջակցել համայնքի ներգրավվածությանը սոցիալական ծառայությունների հետ կապված կարևոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման և շահերի պաշտպանության գործում:

Մաս 3. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության գնահատում՝ խոցելի խմբերի առնչությամբ

17. Ձեր տեղեկությամբ, ինչպե՞ս են ծառայություններ մատուցող ԲՀԿ-ները պլանավորում, իրականացնում և գնահատում ծառայությունները/գործունեությունը:

18. 18. Ինչպե՞ս են ծառայություններ մատուցող ՔՀԿ-ներն ընտրում առաջնահերթ թիրախային խմբերն ու խնդիրները:
 19. 19. Ծառայություններ մատուցող ՔՀԿ-ներն ի՞նչ ձևեր են օգտագործում տեղի բնակչության հետ շփվելիս: Որքանո՞վ են արդյունավետ հաղորդակցման գոյություն ունեցող ուղիները: Ել ի՞նչ կարելի է հաշվի առնել:
 20. 20. Ինչպիսին է/եր քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը բնակչության համար անհրաժեշտ ծառայությունների բարելավման և հասանելիության բարձրացման գործընթացում:
 21. 21. Ո՞ր հիմնական ոլորտներում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները Էական ներդրում ունեցել սոցիալական ծառայությունների զարգացման գործում: Կարո՞ղ եք կոնկրետ օրինակներ բերել:
 22. 22. Ձեր կարծիքով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ի՞նչ օգուտներ են բերում խոցելի խմբերին: Եվ հակառակը՝ բացասական բան տեսնու՞մ եք նրանց աշխատանքում:
- Քննարկման վերջում կա՞ որևէ բան, որ կցանկանայիք ավելացնել այն ամենի վերաբերյալ, ինչի մասին խոսեցինք:

Հաջողության, շնորհակալություն:

Մարդու իրավունքների վրա
հիմնված մեթոդի կիրառմամբ
Սամցխե-Ջավախեթիում
և Քվեմո Քարթլիում
առկա սոցիալական
ծառայությունների
համատեքստի վերլուծություն